ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հունվարի 28-ը
Հայաստանի բանակի օրն է

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**80**-րդ տարի) **Թիվ-1** (1707) — *Հունվար 2026*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Քաղաքական դաշինքներ և միասնություն ընդհանուր նպատակի շուրջ (էջ 1-3)

2 - Քաղաքական

Անի Մելքոնյան
2025 թ. տարվա քաղաքական ամփոփում (էջ 4-9)

3 - Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Իրանի ներքին անկայունությունը Բաքվի «հնարավորությունների պատուհան» (էջ 10-12)

4 - Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
Իրանը փոփոխությունների շեմին. ներքին ճգնաժամի և արտաքին ճնշումների բախումը (էջ 13-14)

Շահան Գանտահարեան
Իրանեան իրադարձութիւնները՝ տարածաշրջանային եւ հայկական դիտակէտերով (էջ 15-16)

5 - Գաղափարական

Արամ Շահնազարյան
Համաժողովրդական բանակ եւ ազգային ինքնագիտակցություն (էջ 17-20)

6 - Իրավաքաղաքական

Մարի Հովհաննիսյան
Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948 թվականի կոնվենցիան (էջ 21-26)

7 - Հայ Դատ

Հայկազուն Ալվրցյան
Կազմակերպված վրեժխնդրության առաջին կառույցը ցեղասպանության տարիներին (էջ 27-32)

Արմինե Մուքոյան
Հայերի ազգային առաջին բողոքի ձայնը Կանադայում. արժանապատվության պայքար օտար հողի վրա (էջ 33-34)

8 - Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Ով մոռանա… (էջ 35-39)

9 - Հասարակություն

Անժելա Հարությունյան
«Արտոյի երկիրը» ֆիլմը. գեղարվեստական ազատության ու ազգային պատասխանատվության սահմանները (էջ 40-42)

10 - Դաշնակցական բեմ

Վրէժ-Արմէն
Դաշնակցութի՛ւն
Ինչպէ՞ս բնութագրել քեզ մէկ բառով (էջ 43-44)

Քաղաքական դաշինքներ և միասնություն ընդհանուր նպատակի շուրջ

Իշխանությունը, որը մշտապես խաբում է սեփական ժողովրդին, օտարվում է նրանից, հայտնվում է նրա հետ հակադրության մեջ և իր հետագա պաշտոնավարումը ծառայության առաքելությունից վերածվում է դիմակայության, ծագող հակասություններն ամեն կերպ հաղթահարելու շարունակական ճիգի:

Եթե անդրադառնանք Հայաստանի իշխանությունների վարքագծին, ապա կարձանագրենք, որ գործող իշխանությունը մշտապես ձգտել է ներքաղաքական կյանքում օրակարգ թելադրել՝ չդադարող հետապնդումներով ձերբակալություններով, ու զանազան մանիպուլյացիաներով, նախաձեռնությունը պահել իր ձեռքում: Այս նույն մարտավարությամբ անցնող ամիսներին ևս իշխանությանը հաջողվեց հասարակական, քաղաքական շրջանակներին շեղել ընտրությունների նախօրյակի համար վտանգավոր ներքաղաքական սրացումներից: Նախընտրական շրջանը առանց այդ էլ քաղաքական, հասարակական ակտիվացման ժամանակահատված է, իսկ Հայաստանում առկա դժգոհությունների պայմաններում այն կարող է ձնագնդի պես ուռճանալ և անկասելի ուժով ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Հետևաբար, իշխանությանն անհրաժեշտ է իր օրակարգերի շրջագծում պահել բոլորին առնվազն մինչև գարուն, երբ հնարավորություն կունենա ծրագրված միջոցառումներով ու քայլերով ուղղորդելու գործընթացները: Հիշենք, որ այս շրջանում Հայաստանում տեղի են ունենալու եվրոպական երկու մեծ համաժողովներ, որոնց ժամանակ արևմտյան առաջնորդները շատ ավելի շռայլ կլինեն հայ ժողովրդին եվրոպական ապագա խոստանալու հարցում, ամենատարբեր բնույթի աջակցություն ցույց կտան գործող իշխանությանը: Անշուշտ, սրան զուգահեռ, կլինեն այլ «անակնկալներ», երբ որոշակի «բարեկամական» քայլերով Ադրբեջանն ու Թուրքիան կարող են իրենց լուման ներդնել ՔՊ-ին իշխանության վրա պահելու գործում (արդեն իսկ «նախընտրական բենզինը» փոքր քանակներով Ադրբեջանը վաճառում է Հայաստանին, երեքուկես տասնամյակի ընդհատումից հետո Ադրբեջանի տարածքով ապրանքատար գնացք է մտել Հայաստան, փոխանակման կարգով Բաքվից հայ քաղբանտարկյալներ են վերադարձվել Երևանին): Սրա կողքին ծավալվում է խաղաղության մասին կեղծ խոսույթը, տպավորություն ստեղծելու համար, թե այն այլևս կայացած և անդառնալի իրողություն է:

Տևական ժամանակ Նիկոլ Փաշինյանը հանրային ուշադրությունն ուղղորդում է Հայոց եկեղեցու դեմ ձեռնարկած ասպատակությունների կողմը: Որ ազգային ինքնագիտակցությունն արմատախիլ անելու առաջադրանքը որդեգրած Փաշինյանի համար 1700-ամյա անկախ եկեղեցու կազմալուծումն ու ենթարկումը հակազգային ծրագրերին ռազմավարական նպատակ է՝ կասկած չկա, միաժամանակ այն շեղող թիրախ է ծառայում՝ երբ եկել է տրված խոստումների համար հաշվետվություն ներկայացնելու ժամանակը:

Ապագայի խոստումով իշխանական մանդատների տիրացած Փաշինյանն Արցախը տարել է վերջնական կորստի, ճակատագրական փորձությունների առջև է կանգնեցրել Հայաստանը, իր ղեկավարած թիմի հետ նա չի կարող պարծենալ որևէ ասպարեզում ձեռքբերած հաջողություններով: Ավելին, Փաշինյանի իշխանությունը հասավ ու անցավ նախորդներին բոլոր այն մեղքերում, որոնցում մեղադրում էր վերջիններիս: Այս իշխանությունը կորցրեց բոլոր այն «հաղթաթղթերն» ու «հմայքները», որոնց շահարկմամբ եկել էր իշխանության: Խոստացված ժողովրդավարության փոխարեն Նիկոլ Փաշինյանը երկիրը վերածեց բռնապետության, իշխանության թևերի հակակշռելիությունը մեծացնելու փոխարեն արժեզրկեց վերջիններիս՝ վերածելով իրեն սպասարկող կցորդների: Այդ դերաբաշխման մեջ ամենակեղտոտ ու անշնորհակալ դերը հանձնարարվեց ուժային կառույցներին: Բանտերը լցվեցին անհիմն մեղադրանքներով ձերբակալված քաղբանտարկյալներով: Մեծ արագությամբ հարստացան Փաշինյանի հարազատները, մերձավորներն ու թիմակիցները: Պատահական չէ, որ որպես կոռումպացված բուրգի գլուխ Փաշինյանն ատամներով պաշտպանում է համակարգի արատավորված անդամներից յուրաքանչյուրին, հասկանալով, որ եթե համակարգը ճաքեր տա, բացահայտումները կարող են տարածվել ու խորանալ և փլուզել ավազի վրա սարքված ողջ կառույցը: Փաշինյանի հաղթաթղթերից մեկը նախկիններին պատժելու խոստումն էր, այնինչ իր մեղադրանքներից մնացին չհիմնավորված, կեղծ ամբաստանություններ, որոնք ունեն խիստ անձնավորված բնույթ, իսկ նույն ժամանակ, իշխանության շուրջը խմբվեցին նախկին համակարգի արատավորված

ներկայացուցիչները: Երբ իր շարժմանը զանգվածային աջակցություն էր անհրաժեշտ, Փաշինյանը նվազագույն եկամուտ ունեցող տարբեր շերտերին խոստացավ, թե ազատելու է հարկային բեռից, նվազեցնելու է տուրքերը, այնինչ այսօր ողջ հասարակությունը կքած է աննախադեպ չափերի հասած հարկերի, տուրքերի և տուգանքների բեռան տակ:

Հանրությանն իր կողմը գրավելու գրավիչ «խայծերից» մեկն ընտրական գործընթացները թափանցիկ և օրինական դարձնելու խոստումն էր, սակայն վերջին տարիներին տեղի ունեցող համայնքային մակարդակի ընտրությունները բացահայտում են, որ Փաշինյանը պատրաստ է ոտնահարելու ամեն մի օրենք ու սկզբունք, թույլ չտալու համար, որ ժողովրդի մոտ հասունանան իշխանափոխության հույսերը: Նիկոլ Փաշինյանը վերականգնեց վաղուց մոռացված հոսանքն անջատելու և ընտրական արկղերը լցոնելու ընտրակեղծարարության հնացած հնարքը: Այլ հարցերի մեջ հաջողվեց մոռացության մատնել Վրաստանի մաքսավորների կողմից բռնագրավված 190.000 նոր տպված անձնագրերի առեղծվածը: Հավանական է որ կեղծ անձնագրերով ընտրություններ անցկացնելու հնարքը փորձ արվի կիրառելու առաջիկա խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Արձանագրենք, որ Նիկոլ Փաշինյանին վաղուց լքել է «ժողովրդի ծոցից դուրս եկած», արդարության համար պայքարող անկաշառ հայրենասերի միֆը:

Մտնելով արտաքին ուժերի հետ մութ գործարքների մեջ, մյուս կողմից նախապես չունենալով արտաքին քաղաքական գործունեության որևէ փորձառություն, նա ոչ միայն տապալեց ու գլխիվայր շուռ տվեց Արցախի հարցում ձևավորված բանակցային գործընթացի տրամաբանությունը, այլև պատանդ դարձավ արտաքին ուժերին, որոնք նրան պարտադրում են վարելու ազգային շահերին հակասող քաղաքականություն: Նիկոլ Փաշինյանը խոսում է ոչնչով չամրագրված խաղաղության հաստատման մասին, երբ «խաղաղասեր» հարևանը ռազմական դիրքերն է ամրապնդում Հայաստանից գրավված տարածքներում, Բաքվում անօրինական դատավարություն է իրականացնում հայ քաղաքական ու ռազմական ղեկավարության դեմ: Ադրբեջանը հայտարարում է, որ անվերահսկելի իրավունքներ ունի Զանգեզուրի միջանցքը շահագործելու հարցում, ինչպես և հրապարակայնորեն հայտարարում է, թե Հայաստանը Արևմտյան Ադրբեջանն է: Նույն ժամանակ Զանգեզուրի որպես պանթուրանիզմի ճանապարհի հետ կապված իր ծրագրերը չի թաքցնում Թուրքիան: 2026 թ. հունվարի 6-ին Ի. Ալիևը լրագրողների առջև հրապարակայնորեն հայտարարել է. «Այսօրվա աշխարհում միջազգային իրավունք գոյություն չունի. բոլորը պետք է մոռանան դրա մասին: Կա ուժ, կա համագործակցություն և կա դաշինք»: Այս ամենի առջև խուլ ու կույր ձևանալով Հայաստանի իշխանավորները թութակի պես կրկնում են իրենց առաջնորդի ստերը խաղաղության հաստատման մասին և ժողովրդին մոլորեցնելով հայտարարում են, թե Հայաստանը միայն իրենց օրոք է դարձել իրապես անկախ: Միայն թե նախկինները հաղթանակներ էին տանում թշնամուն ծնկի բերելով, իսկ ներկաները անկախությունն «ամրապնդում են» պատերազմներում պարտվելով, երկրի սահմանները հանձնելով, բանակը կազմաքանդելով և վերացնելով նրա դիմադրական ներուժը: Իրենց անկախ երկրի ղեկավարներ հայտարարողներն արտաքին քաղաքականության մեջ գնում են շարունակական զիջումների՝ երբեք չընդդիմանալով որևէ պահանջի և երբեք չներկայացնելով հայկական կողմի որևէ պահանջ: Նրանք դրսում վարկաբեկում են երկրի ազգային ուժերին ու աջակցություն են մուրում նրանց դեմ պայքարելու և իշխանությունը պահպանելու համար: Եթե ավելի հստակ սահմանագծենք նախկինների և ներկաների միջև եղած տարբերությունը, ապա կարելի է պատկերավոր ասել, որ ներկաները չոքած են այն թշնամու առջև, որը չոքած էր Հայաստանի նախկին իշխանությունների առջև: Նիկոլ Փաշինյանին օդի ու ջրի պես անհրաժեշտ է, որ արտաքին ուժերը չպարտադրեն իր խոստացած զիջումները, մինչև



որ կհաջողացնի գալիք ընտրություններում ապահովել իր թիմի հաղթանակը: Իսկ առկա բոլոր զգայուն ու բարդ հարցերից ժողովրդին շեղելու համար նա պատրաստ է ամեն օր փոթորկել երկրի ներքին մթնոլորտը, և դրա համար ավելի զգայուն խնդիր չկա քան ոտնձգությունները Մայր եկեղեցու դեմ:

Իհարկե, ադրբեջանաթուրքական տանդեմը պատրաստ է իր հավակնությունները զսպել ժամանակավորապես, Փաշինյանին ուղղակի և անուղղակի կերպով թիկունք լինելու համար, սակայն կասկածում է վերջինիս հաղթանակին, և դրանով իսկ Հայաստանի նկատմամբ ունեցած գիշատչական ծրագրերի իրականացման հեռանկարին: Հետևաբար, վերջինս, անկյուն քշված գազանի վիճակում հայտնված Փաշինյանից պահանջում է և դեռ պահանջելու է որոշակի զիջումներ՝ մինչև ընտրությունները:

Փաշինյանը, զգայուն թեմաներ նետելով հրապարակ, հասարակական միտքը շեղում է ոչ միայն իր կատարած բազում հանցավոր գործերից, այլև այն ամենից, ինչը դեռ պետք է կատարի առաջիկա ամիսներին և, մանավանդ, իշխանության վրա վերահաստատվելուց հետո: Ադրբեջանաթուրքական և Արևմտյան օրակարգերում են մնում Հայաստանի Սահմանադրության փոփոխությունը (սահմանադրական կարգի տապալումը), 300.000 ադրբեջանցիների բնակեցումը Հայաստանում, որով փաստացի կլուծեն Սյունիքի թուրքացման հարցը, Ռուսաստանի հետ տնտեսական և էներգետիկ կապերի փոխարինումը թուրք-ադրբեջանականով: Նույն օրակարգում է Հայկական ատոմակայանի փակման և Թուրքիայից էներգետիկ կախման մեջ հայտնվելու ծրագիրը: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը Հայաստանում փակելու է մոտ 250 դպրոց, կազմալուծելու է գիտական համակարգը՝ ՀՀ ազգային ակադեմիայի, ակադեմիական ինստիտուտների լուծարմամբ: Կրթական համակարգերից դուրս են բերվում, սահմանափակվում ու աղավաղվում են հայագիտական առարկաներն ու նրանց ծրագրերը: Երկրում հալածվելու և վերացվելու է այն ամենը, ինչը ազգային հիշողության, ազգային ինքնության տարրեր է պարունակում և կարող է հիմք ծառայել հայկական ինքնության, երկրի ու պետության վերածնության համար: Նիկոլ Փաշինյանը և ազգային ինքնությունից օտարված նրա թիմն առաջիկա ամիսներին շարունակելու են տաք պահել Եկեղեցու և իրենց արհեստածին օրակարգի մյուս հարցերը հասարակությանը առկա հիմնահարցերից շեղելով, մինչև որ օրենքի ու օրինականության ոտնահարմամբ հաջողեն երկարաձգել իրենց իշխանությունը: Նրանք փորձում են հասարակության մի հատվածի գիտակցությունը պահել այն անբարո մտայնության ազդեցության տակ, որ տարածաշրջանում մեր ապագան պետք է կապված լինի Ադրբեջանի ու Թուրքիայի հետ, և որ վերջիններս գերադասելի են «սեփական նախկիններից»:

Աղետալի հեռանկարը կանխելու համար այժմվանից ազգային ուժերը պետք է հրապարակ իջեցնեն իրենց օրակարգերը, իշխանություններին կանգնեցնեն բարդ հարցերի պատասխանելու, յոթ տարվա խոստումների և արվածի համար բացատրություն տալու պարտադրանքի առջև: Յուրաքանչյուրը, ով հավակնում է երկրի համար պատմականորեն ծանր ժամանակահատվածում կանգնելու նրա տարուբերվող ղեկի մոտ, պետք է ներկայացնի իր դրական և այլընտրանքային ծրագրերը: Մեր համոզմամբ ժողովրդի տարիներ ձգվող կրավորականությունը պայմանավորված է ճանապարհային քարտեզով հիմնավորված ծրագրերի բացակայությամբ, որոնք իրատեսական հույսեր կներշնչեին հանրությանը: Իրատեսական, հավասարակշիռ, կառուցողական, համախմբող, ինքնավստահ, գործունյա, քաղաքական դաշինքները դեռևս կարող են ընդհանուր նպատակի շուրջ ձևավորված համաձայնություններով կասեցնել դրսերում մշակված դավադիր ու հայակործան ծրագրերը: ■

2025 թ. տարվա քաղաքական ամփոփում

Անի Մելքոնյան
Պատմաբան

Ետևում մնաց 2025 թվականը, որը հագեցած էր արտաքին ու ներքին քաղաքական լարվածությամբ, ընդդիմադիրների ու եկեղեցու նկատմամբ իշխանական բռնաճնշումներով, և, ցավոք սրտի, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության էլ ավելի թուլացմամբ:

Հունվարի վերջին օրերին ավելի ակնհայտ դարձավ ցեղասպանության ուրացման Հայաստանի իշխանությունների քաղաքականությունը, երբ իշխող կուսակցության նախարարը հայտարարեց «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը չպետք է լինի ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություն»,[1] սա նշանակում էր, որ ՀՀ-ն այլևս միջազգային հարթակներում չի պայքարելու հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հատուցման համար:

Նույն օրը, կատարվեց մեկ այլ կարևոր հայտարարություն, ՀՅԴ Կանադայի Հայ դատի հանձնախմբի ջանքերի շնորհիվ, Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ժոլին հայտարարություն տարածեց, որտեղ Ադրբեջանի ապօրինությունները դատապարտելով, միաժամանակ անդրադառնում էր մի շարք խնդիրների.

«• Ադրբեջանում պահվող բոլոր հայ ռազմագերիների և կամայականորեն կալանավորված էթնիկ հայերի անվերապահ ազատ արձակում,
• Հայաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանք,
• Հայ խաղաղ բնակիչների անվտանգ և արժանապատիվ վերադարձը իրենց հայրենի հողեր,
• Հայկական մշակութային ժառանգության պաշտպանություն,
• Արցախի հիմնախնդրի լուծումը ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացի միջոցով՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներին և Հարավային Կովկասում արդար և կայուն խաղաղության անհրաժեշտությանը համահունչ՝ ուժի և դրա սպառնալիքի կիրառման բացառման, տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի շրջանակում»:[2] Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն Հայաստանի իշխանությունների՝ ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերը միջազգային ասպարեզում շարունակում են հայկական շահերի պաշտպանությունը:

Փետրվարի 25-ին Սուրբ Ղևոնդյանց քահանաների հիշատակին նվիրված պատարագի օրը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայտարարեց «Հարկ է մեր ժողովրդի մեջ հաստատուն պահել դարերով նվիրագործված արժեհամակարգի, հայրենիքի, Հայոց Եկեղեցու, մեր սրբությունների, մեր պատմական անցյալի վերաբերյալ ճիշտ ընկալումները: Այս ճանապարհով է հնարավոր հզորացնել մեր պետությունը, նպաստել հայրենական կյանքի բարօրությանն ու ապահովությանը: Այս ճանապարհով է հնարավոր ամրապնդել հասարակության մեջ համերաշխության ոգին, պաշտպանել ազգային շահերն ու հիմնարար իրավունքները թե՛ երկրի ներսում և թե՛ երկրից դուրս: Այս նպատակների իրագործման համար մեզ նախ և առաջ պետք է առավել նվիրում ու քաջություն, ազգին ու հայրենիքին ծառայելու բարձր գիտակցություն և հանձնառություն....



Երբ մի ժողովրդի հայրենիքն ու հավատքը վտանգի են ենթարկված, ամբողջ ազգը պայքարի դրոշ պետք է պարզի, ամբողջ ազգը պետք է զինվորագրվի»:[3] Վեհափառի այս կոչ-պատգամը չէր տեղավորվում փաշինյանական «իրական Հայաստանի» հայեցակարգում, ըստ որի մերժվում է դարերով ձևավորված ազգային արժեհամակարգի, պատմական անցյալի, եկեղեցու և հայրենիքի գաղափարի արժևորումը:

Վեհափառի այս մտքերի վրա հատուկ ուշադրություն ենք հրավիրում, որովհետև դրանք անհանգստություն առաջացրին Ադրբեջանում, ինչն էլ հավանաբար պատճառ հանդիսացավ անելու համար այն, ինչին երկար ժամանակ ձգտում էին հայ ժողովրդի թշնամիները՝ փորձել չեզոքացնել Հայ առաքելական եկեղեցին, որպեսզի ավելի հեշտ լինի հայ ժողովրդի բնաջնջումը, ուստի Փաշազադեն ազդարարեց հայոց եկեղեցին կազմաքանդելու և ադրբեջանին ենթակա կրոնական միավոր դարձնելու Փաշինյանի արշավի սկիզբը:

Ինչևէ, այս թեմային դեռ կանդրադառնանք, առայժմ առաջ անցնենք:

Մարտի 13-ին Հայաստանն ու Ադրբեջանը հայտարարեցին, թե, այսպես կոչված, «խաղաղության համաձայնագիրը» պատրաստ է ստորագրման, հայտնի դարձավ, որ Հայաստանն ընդունել էր ադրբեջանական կողմի պահանջների վերջին երկու կետերը.

•«ԵՄ դիտորդներին Հայաստան-Ադրբեջան սահմանից հանել.

•միջազգային ատյաններում Ադրբեջանի դեմ դատական հայցերից հրաժարվել»:[4]

Բացի այս կետերից, Ադրբեջանն առաջ էր քաշում ևս երկու նախապայման՝ *փոխել ՀՀ Սահմանադրությունը և լուծարել Մինսկի խումբը:*

Հայաստանի՝ հայկական շահերը զոհաբերելու սովորություն ձեռք բերած և մշտապես զիջումների պատրաստ իշխանությունը, ինքն իրեն հավատարիմ չէր լինի, եթե չընդուներ Ադրբեջանի այս պահանջները ևս՝ իհարկե փորձելով դրանք քողարկել «Եվրամիության անդամակցության գործընթացի» քողի տակ: Այդ նպատակով մարտի 26-ին Ազգային ժողովն ընդունեց «Եվրոպական միությանը անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրինագիծը»,[5] սակայն, ինչպես ի սկզբանե պարզ էր, գործընթացը շարունակություն չունեցավ, որովհետև Եվրամիությունում, մեղմ ասած՝ Հայաստանին սպասող չկար:

2025-ին լրացավ Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը, դրան ընդառաջ հունվարի 27-ին Նիկոլ Փաշինյանը, հրապարակել էր իր «Բանտային օրագիր. «Ցեղասպանության մեխանիկան» հոդվածից մի հատված, որտեղ նշում էր. «Հայոց կոտորածները տարիներ են տևել, բայց դրանք նախապատրաստվել են երկար դարերի ընթացքում, և դա ոչ թե ուրիշներն են նախապատրաստել, այլ մենք ինքներս՝ որպես ցեղասպանության մեխանիկայի կրողներ»:[6] Այսինքն, ըստ Փաշինյանի, Հայոց ցեղասպանության կազմակերպիչն ու պատասխանատուն ոչ թե թուրքական պետությունն է, այլ մենք, հայերս: Ելնելով Հայոց ցեղասպանության ուրացման ու ակնհայտ պատմական փաստերը կեղծելու փաշինյանական շարունակվող ընթացքից՝ ապրիլի 22-ին ԱԺ «Հայաստան» խմբակցության կողմից Իշխան Սաղաթելյանը հայտարարություն տարածեց այն մասին, որ խմբակցությունը «ԱԺ կներկայացնի օրենքի փոփոխության նախագիծ, որով առաջարկվում է քրեականացնել Հայոց ցեղասպանության ժխտումը, նսեմացումը և արդարացումը»:[7] Նշվում էր, որ «Նախագիծը մշակվել է՝ հիմնվելով ՀՀ Անկախության հռչակագրում ամրագրված դրույթների, ինչպես նաև եվրոպական մի շարք պետությունների օրենքների հիման վրա, որտեղ ցեղասպանության ժխտումը, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության, վաղուց քրեորեն պատժելի է»:[8]

Նույն օրը՝ ապրիլի 22-ին, Ազգային ժողովում «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը հայտարարեց, որ խմբակցությունն Ազգային ժողով է ներկայացրել օրենքի նախագիծ, որով նախատեսվում է քրեական պատասխանատվություն

սահմանել Հայոց ցեղասպանության ժխտման կամ նսեմացման համար, որից հետո ՔՊ-ականները լարեցին իրավիճակը՝ վերածելով այն վեճի ու ծեծկռտուքի:[9]

Մայիսի 5-ին կառավարությունը բացասական եզրակացություն տվեց «Հայաստան» խմբակցության ներկայացրած վերոնշյալ նախագծին, որով առաջարկվում էր «սահմանել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 300-ապատիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ 150-250 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկ ամսից մինչև 4 տարի ժամկետով»:[10]

Իսկ մերժումը կառավարությունը բացատրում էր նրանով, որ փոփոխությունները նպատակահարմար չեն, ասել է թե, ցանկացած ոք Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է ժխտել կամ կասկածի տակ դնել Հայոց ցեղասպանության եղելությունը:

Մայիսը հայոց պատմության մեջ նշանավորվում է նաև Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակով ու Շուշիի ազատագրմամբ:

Իհարկե Շուշիի մասին պետական մակարդակով ոչ ոք չհիշեց, սակայն, ի հակառակ դրա, ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միությունը մայիսի 8-ին կազմակերպել էր «Շուշի. վերադարձ լինելու է» միջոցառումը, որի ժամանակ հստակ ձևակերպվեց. «Եթե որոշների համար Շուշին դժբախտ և դժգույն քաղաք է, ապա մեզ համար Շուշին հայոց բերդաքաղաք է, եթե որոշների համար Արցախ վերադարձը հայրենասիրական պաթոս է, ապա մեզ համար՝ ազգային նպատակ»:[11] Ինչ վերաբերում է մայիսի 9-ին, ապա այդ օրը Նիկոլ Փաշինյանը մեկնեց Մոսկվա մասնակցելու հաղթանակի 80-ամյակի շքերթին, որին, պատմության մեջ առաջին անգամ, հայկական զորքերը չմասնակցեցին: Սա լիովին տեղավորվում է մայիսյան հաղթանակներն ուրանալու, պարտվող հայի կերպար ձևավորելու և իբր թե «Հայաստանը Ռուսաստանից պոկելու» փաշինյանական (իրականում թուրքական) հայացակարգի մեջ, հետևաբար, ամենևին էլ տարօրինակ չէ որ «Հայաստանի ներկայիս իշխանություններն ուրանում են մայիսյան հաղթանակները, փորձելով ցույց տալ, որ 1945 թ. Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ տարած հաղթանակի գործում հայ ժողովուրդը չի ունեցել այն մեծ ավանդը, որն իրականում ունի՝ պատերազմին

տված 600.000 կովող ուժով, 300.000 զոհով, ԽՍՀՄ մեկ կրկնակի հերոսով (Նելսոն Ստեփանյան) և հինգ հայազգի մարշալներով»:[12]

Մայիսի 27-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարեց, որ «Երբ լինի խաղաղության պայմանագիր, հայերը կարող են ապրել Բաքվում, ադրբեջանցիները կարող են վերադառնալ այն գյուղերը, որտեղ որ իրենք ժամանակին ապրել են Հայաստանի տարածքում»[13] - իհարկե մոռանալով նշել, որ հայերի պարագայում սպասվում է նույն ճակատագիրը, ինչ Բաքվում ցեղասպանված 300.000 հայերին, կամ ասենք՝ հայկական Գանձակի, Նախիջևանի, Սումգայիթի ու Մարաղայի հայերին: Այդ ամենը հայ ժողովուրդը գիտի, հետևաբար ոչ մի ողջամիտ հայ չի գնա ու չի ապրի այն տարածքում, որը վերահսկում է Ադրբեջանը, մինչդեռ ադրբեջանցիները, օգտվելով Հայաստանի թրքամետ իշխանության վառած կանաչ լույսից, պատրաստվում են վերաբնակվել ինչպես Սևանի ավազանում, այնպես էլ Արարատյան դաշտավայրում, Վայոց ձորում ու Սյունիքում՝ այդպիսով իրականացնելով Հայաստանը թուրքացնելու և պանթյուրքիզմի երկրորդ փուլը ավարտելու իրենց վաղեմի նպատակը:

Թուրքական քաղաքականությանն օժանդակելու համար, իհարկե Հայաստանի իշխանությունը պետք է էլ ավելի մեծ հարվածներ հասցներ իր կողմից արդեն իսկ կազմաքանդված հայկական բանակին, ուստի 2025 թ. մայիսի 22-ին ընդունվեց նախագիծ, ըստ որի «Ձևակերպվել են հետևյալ առաջարկները՝ կրճատ ժամկետով ծառայությունը սահմանել 1 ամսվա դեպքում 24 մլն դրամ, 4 ամսվա դեպքում՝ 18 մլն դրամ: Յուրաքանչյուր զորակոչի հայտարարման մասին կառավարության որոշման մեջ սահմանել տվյալ զորակոչին համապատասխան կրճատ ժամկետով ծառայություն անցնելու դիմումների առավելագույն քանակը և դրանց ներկայացման կարգը»:[14] Այլ կերպ ասած՝ երկրի սահմանների պաշտպանությունը մնում է խոցելի խավի ուսերին՝ եթե կարող ես վճարել, ուրեմն կարող ես չպաշտպանել հայրենիքդ, իսկ նման գումարներ Հայաստանում կարող են վճարել միայն պաշտոնյաները:

Ինչևէ, հաջորդ մեծ հարվածը բանակին հասցվեց 2025-ի դեկտեմբերի 16-ին, երբ ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվում է, որ Հայաստանում պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 2026 թվականի հունվարից կտևի ոչ թե 24, այլ 18 ամիս:[15]

Երկրում, որտեղ զինված ուժերի համալրման, կովող ուժի ակնհայտ պակասի ու պաշտպանունակությունը վերականգնելու ակնհայտ խնդիր կա, նման օրենքի ընդունումը ոչ այլ ինչ է, քան պետական դավաճանություն, քանի որ այն ուղղակի օգնություն է թշնամուն հետագա ռազմական գործողությունների ժամանակ հաջողության հասնելու համար:

Հունիսի 17-ին՝ անդրադառնալով հայոց եկեղեցու դեմ փաշինյանական իշխանության հալածանքներին, գործարար-բարերար Սամվել Կարապետյանն ասաց. «Մի փոքրիկ խմբակ, մոռանալով հայոց պատմությունը, հայ եկեղեցու հազարավոր տարիների պատմությունը, հարձակվել է հայ եկեղեցու վրա, հայ ժողովրդի վրա: .... Ես միշտ եղել եմ հայոց եկեղեցու կողքին ու հայ ժողովրդի կողքին: Եթե քաղաքական գործիչներին չհաջողվի, ապա մենք մեր ձևով ենք միջամտելու եկեղեցու դեմ արշավին»:[16] Այդ բառերն, իհարկե, Նիկոլ Փաշինյանի մոտ ջղաձգումներ առաջացրին, որի հետևանքով նույն օրը ԱԱԾ-ն Նիկոլ Փաշինյանի հրամանով բերման ենթարկեց Սամվել Կարապետյանին, վերջինս ձերբակալության ժամանակ հայտարարեց. «Հայ ժողովրդի սրբությունների համար պայքարելու եմ իմ ողջ ուժով, ուր էլ լինեմ, ինչ էլ որ լինի: Թույլ չեմ տալու, որ որևէ մեկը, իր որևէ նպատակ հետապնդելով, հոշոտի մեր սրբությունները»:[17] Սամվել Կարապետյանի կալանավորումն առաջ բերեց հանարային մեծ դժգոհություն, ձևավորվեց «Մեր ձևով» շարժումը, որի հետագա ճակատագիրը ցույց կտան այս տարի սպասվող ԱԺ համապետական ընտրությունները:

Սամվել Կարապետյանի ձերբակալությունն ու կալանավորումը, իհարկե, լարված ամառվա վերջին բռնաճնշումը չէր: Հունիսի 25-ին ԱԱԾ-ն բերման ենթարկեց «Սրբազան պայքար» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանին:[18]

Ապօրինի ձերբակալությունները չշրջանցեցին նաև ՀՅԴ-ին, որի անդամներին բերման ենթարկե-

ցին «ահաբեկչություն կազմակերպելու» կեղծ մեղադրանքով, սակայն 72 ժամ անց ազատ արձակեցին:

Այն, ինչ տեղի ունեցավ հունիսի 27-ին, չլսված սրբապղծություն էր հայոց պատմության մեջ՝ Նիկոլ Փաշինյանի հրահանգով ԱԱԾ-ի ու ներքին գործերի նախարարության դիմակավորված ջոկատներն ավազակային հարձակում իրականացրին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դեմ.

«Հունիսի 27-ի առավոտյան ՀՀ իրավապահ մարմինների ուժեր, մուտք գործելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վեհարանի տարածք, փորձել են ձերբակալել Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին, ով Մայր Աթոռ էր ժամանել քահանայից տարեկան ժողովի առիթով իբրև հավաքի համակարգող: Չնայած այն հանգամանքին, որ Միքայել Սրբազանը պատրաստակամություն էր հայտնել մեկնելու Քննչական կոմիտե և փորձում էր իրավապահ մարմնի ներկայացուցիչների հետ նստել մեքենա, քաղաքացիները և ներկա հոգևորականները բողոքի ձայն բարձրացրին՝ տեսնելով դիմակավորված ԱԱԾ և ոստիկանության ծառայողների մեծ հոսքը»,[19] նպատակը՝ Նիկոլ Փաշինյանի հակաազգային քաղաքականությունը քննադատող Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին բերման ենթարկելն էր՝ վերջինս ինքնակամ ներկայացավ Քննչական կոմիտե:

Ըստ դատախազության «Շիրակի թեմի առաջնորդ Միքայել սրբազան Աջապահյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հիմքերից մեկը 2025 թվականի հունիսի 21-ին. «իշխանությունը զավթելուն ուղղված հրապարակային կոչն է»[20] - Միքայել Սրբազանը շինծու մեղադրանքը չի ընդունել, քանի որ հունիսի 21-ին նա իրականում ասել է. «Ես կոչ եմ արել հեղաշրջման, դա զավթելու կոչ չի, ես ուժային կառույցներին ասել եմ, որ փրկեք էս երկիրը, էս խելագարից փրկեք, է, չեն փրկում, իրենք էլ նույնքան մեղավոր են էս ամեն ինչի մեջ: Ես իշխանության զավթման կոչ չեմ արել, ես ասել եմ, ոչ էլ ասել եմ, որ հայ-հա, ես ասել եմ, որ անհրաժեշտ է դա անել: Դա կոչ չի, դա անհրաժեշտ է անել: Հիմա էլ է անհրաժեշտ, շատ ուշացած է, բայց էլի անհրաժեշտ է անել, էսքան բան, բայց եթե ուժայինները պարզապես տուն են պահում հա, և ոչ թե էս երկրի մասին են մտածում, ոչ թե էս Հանրապետության մասին են մտածում, ոչ թե էս ժողովրդի մասին են մտածում, տուն են պահում, թող շարունակեն տուն պահել...»,[21] ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանի քաղաքական պատվեր կատարող դատավոր Մասիս Մելքոնյանը Միքայել Սրբազանի նկատմամբ կալանավորման որոշում է կայացրել, ընդամենը կարծիք հայտնելու համար, իսկ քաղաքական պատվեր կատարող մեկ այլ դատավորի՝ Արմինե Մելիքսեթյանի որոշմամբ հոկտեմբերի 2-ին Սրբազանը դատապարտվեց 2 տարվա ազատազրկման:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հայոց եկեղեցու ու ընդդիմադիրների նկատմամբ հալածանքները և երկիրը լարվածության մեջ պահելու փաշինյանական գործելաոճը պատահական չէին, դրանք հերթական դավաճանությունից մարդկանց ուշադրությունը հնարավորինս շեղելուն էր ուղղված:

Բանն այն է, որ օգոստոսի 8-ին Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիևը ԱՄՆ-ում՝ նախագահ Դոնալդ Թրամփի ներկայությամբ, նախաստորագրեցին խաղաղության համաձայնագիրը:

Նույն օրը Վաշինգտոնում Հայաստանն ու ԱՄՆ-ը ստորագրեցին երեք հուշագիր, այդ թվում՝ «Խաղաղության խաչմերուկ» նախագծի կարողությունների զարգացման ոլորտում գործընկերության մասին փոխըմբռնման հուշագիրը, որն ենթադրում է TRIPP (Trump Route for International Peace and Prosperity) ուղու կառուցում Հայաստանի հարավում:

Անդրադառնալով փաստաթղթին՝ դեռ այն ժամանակ գրել էինք, որ դրա պահանջները բացարձակ չեն բխում ՀՀ պետական և ազգային շահերից.

«1. Անխափան կապ Նախիջևանի և Ադրբեջանի հիմնական մասի միջև (կետ 3)

"…unimpeded connectivity between the main part of the Republic of Azerbaijan and its Nakhchivan Autonomous Republic through the territory of the Republic of Armenia with reciprocal benefits…"

Սա գործնականում նույն «Զանգեզուրի միջանցք»-ի գաղափարն է՝ միայն ձևակերպմամբ համահարթեցված: «Unimpeded connectivity» նշանակում է՝ անխափան, առանց վերահսկողության և սահմանային ընթացակարգերի միջանցք: «Reciprocal benefits» «Փոխադարձ արտոնություններ» ձևակերպումն իրականում կարող է ձևական լինել, քանի որ Հայաստանի կողմից Ադրբեջանին տրվող արտոնությունը տրանսպորտային գերիշխանության կորստի ռիսկ է, իսկ Ադրբեջանից Հայաստանին տրվող հնարավոր արտոնությունները կարող են լինել ոչ համարժեք և կախված Բաքվի քաղաքական կամքից: Սահմանադրական տեսանկյունից սա կարող է դիտվել ՀՀ տարածքային ամբողջականության սահմանափակում, քանի որ այն ենթադրում է հատուկ ռեժիմով ճանապարհ, որը դուրս է ՀՀ լիարժեք և ամբողջական իրավասությունից, որքան էլ փաստաթղթում ֆիքսվի սուվերենության մասը:

2. ԵԱՀԿ Մինսկի խմբի փակման համատեղ կոչ (կետ 2)

"…on the closure of OSCE's Minsk Process…"

Մինսկի խումբը միջազգային իրավունքի շրջանակներում Հայաստանի համար միակ հարթակն էր, որտեղ ԼՂ հարցը քննարկվում էր ոչ միայն երկկողմ ձևաչափով, այլև միջազգային միջնորդությամբ: Դրա փակումը նշանակում է, որ Հայաստանը հրաժարվում է ԼՂ հարցի միջազգային օրակարգից, ընդունելով Ադրբեջանի մենաշնորհը հարցի լուծման վրա: Սա իրավաքաղաքական առումով հրաժարում է միջազգային-պետական երաշխիքներից, ինչը եղել է Ադրբեջանի տասնյակ տարիների ձգտումը: Այն ևս բավարարվել է:

3. TRIPP («Trump Route for International Peace and Prosperity») նախագծի իրականացում (կետ 4)

"The Republic of Armenia will work with United States of America and mutually determined third parties to set forth a framework for the TRIPP connectivity project in the territory of the Republic of Armenia…"

Սա միջազգային նախագծի անվան տակ կարող է լինել նույն «միջանցքի» ենթակառուցվածքային ձևավորումը, բայց արդեն ամերիկյան հովանու ներքո:

Նախագծի շրջանակային պայմանները որոշվելու են ոչ միայն ՀՀ և ԱՄՆ, այլև «փոխադարձ համաձայնությամբ ընտրված երրորդ կողմերի» հետ, ինչը բացում է դուռ Ադրբեջանին կամ Թուրքիային, որպես համահիմնադիր ներգրավվելու համար: Իրավական տեսանկյունից սա կարող է սահմանափակել ՀՀ-ի լիազորությունները սեփական տարածքում, քանի որ միջազգային համաձայնագրերը գերակայում են ներքին օրենքներին:

4. «Արդար պահաջի բացառումը» և սահմանների անձեռնմխելիության ճանաչումը (կետ 5)

"…based on the inviolability of international borders and the inadmissibility of the use of force for the acquisition of territory…"

Սա դե ֆակտո նշանակում է, որ Հայաստանը պաշտոնապես ճանաչում է Ադրբեջանի ներկայիս սահմանները՝ ԼՂ տարածքների ամբողջական ինտեգրմամբ:

Արդարության «վերականգնման բացառումը» քաղաքական առումով նսեմացնում է ապագա սերունդների՝ տարածքային պահանջների և ինքնորոշման իրավունքը: Սահմանադրական տեսանկյունից սա վերահաստատում է Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումն առանց Արցախի ժողովրդի իրավունքների ապահովման:

5. ԱՄՆ-ի հովանու տակ երկկողմ հարաբերությունների «նորմալացում» (կետ 6)

"…advancing the normalization of bilateral relations…"

«Նորմալացում» ձևակերպումը հնչում է որպես վերջնական հակամարտության լուծման փաստաթուղթ, ինչը իրավական առումով կփակի ցանկացած ապագա պահանջ, այդ թվում՝ գերիների վերադարձի, վերադարձի իրավունքի, սահմանազատման արդար պայմանների կամ մշակութային ժառանգության պաշտպանության հարցերում»:[22]

Այս, իրականում ամբողջապես թուրքական շահերն սպասարկող փաստաթուղթը, փաստացի.

«1. Հրաժարում է ԼՂ-ի միջազգային օրակարգից և հաստատում է Ադրբեջանի լիակատար վերահսկողությունը:
2. Սահմանափակում է Հայաստանի սուվերենությունը Սյունիքի տարածքում՝ ստեղծելով հատուկ ռեժիմով ճանապարհ Ադրբեջանի համար:
3. Ապագայում բացառում է տարածքային կամ քաղաքական պահանջների բարձրացումը, ինչը հակասում է ՀՀ ազգային շահերին և պատմական իրավունքներին:
4. Միջազգային պարտավորություններով կապում է Հայաստանի ձեռքերը, նույնիսկ եթե ապագայում փոխվի քաղաքական իշխանությունը»:[23]

Եվ ինչպես դեռևս 2025 թ. օգոստոսի 9-ին ենք նշել՝ Ռուսաստանի վրա հույս դնել պետք չէ. Ռուսաստանը պարտվեց արևմուտքին՝ ներքաշվելով երկարատև ու հյուծիչ պատերազմի մեջ, ինչը նրան կստիպի ինքնակամ հեռանալ (ավելի ճիշտ թույլ տալ, որ իրեն հեռացնեն) տարածաշրջանից (ինչն արդեն արել է, Արցախը տարածաշրջանում ամրապնդվելու Ռուսաստանի բացառիկ շանսն էր, որը կորցրեց սխալ հաշվարկի հետևանքով)՝ ճիշտ այնպես, ինչպես 1917-ին տեղի ունեցավ, Ռուսաստանի հաջորդ վերադարձը տարածաշրջան գուցե 5-10 տարի հետո տեղի ունենա, եթե այդ ընթացքում հայերը դիմանան...

Դարձյալ, Ռուսաստանը մարտավարական խնդիրներ լուծեց, Թուրքիան՝ ռազմավարական:

Իրանի վրա ևս պետք չէ հույս դնել, որովհետև թեև Իրանը ժամանակավոր հրադադար հաստատեց Իսրայելի հետ, բայց ցանկացած պահի կարող է ներքաշվել պատերազմի մեջ, կարող են նաև Իրանը մասնատել՝ ամերիկյան ձևով «հրահրելով» քրդերին ու Ատրպատականի (իրական Ադրբեջանի) թյուրքալեզու բնակչությանը կամ 20-րդ դարի սկզբի նման, Իրանում քաոս ստեղծել...:

Դե, իսկ Վրաստանն էլ, միշտ պատրաստ է՝ մեզ թիկունքից դաշույնի հարված հասցնելու:

Ո՞վ մնաց, մնացինք ՄԵՆՔ, հայերս՝ կասեի, հույսերս մեզ վրա պետք է դնենք. ինչպես դարեր շարունակ, սա հասկանում է ազգային բնազդ և ինքնագիտակցություն ունեցող շերտը, իսկ որպես հավաքականություն դարձյալ այդպիսի գիտակցության չենք եկել:

Ինչ որ բան հնարավոր կլինի փրկել, եթե հայի վերջին խելքը վերջապես դրսևորվի, ու առաջիկա ամիսներին թուրքական «տրոյական ձին» Նիկոլ Փաշինյան երևույթը իշխանազրկվի, ու Հայաստանը խելքը գլխին բանակցող ունենա...

Ինչպես երևում է, մեր կանխատեսումները կարծես թե իրականանում են՝ ռուս-ուկրաինական պատերազմը ոչ մի կերպ չի ավարտվում, ավելի ու ավելի շատ հյուծելով երկուստեք, իսկ Իրանում, հենց ԱՄՆ ջանքերով քաոս ստեղծելու փորձեր են արվում՝ ձգտելով հասնել հեղափոխության և իշխանության վերադարձնել ԱՄՆ - Իսրայել տանդեմի համար խիստ ցանկալի դրածոյի, օրինակ, Ռեզա Փահլավիին՝ դեռևս 1979-ին իշխանազրկված շահ Մոհամմադ Ռեզա Փահլավիի որդուն: Թե ինչպես կդասավորվեն իրադարձությունները Իրանում, ցույց կտան հետագա ամիսները, մենք անցնենք առաջ:

Սեպտեմբերի 23-ի կեսգիշերին մոտ՝ Հայաստանը ցնցվեց ՆԳՆ-ի տարածած հայտարարությունից. «Սեպտեմբերի 23-ին՝ ժամը 23.52-ին, ՆԳՆ ոստիկանությունն ահազանգ է ստացվել, որ Արմավիրի մարզի Մերձավան բնակավայրի Երևանյան խճուղում կրակոցներ են հնչել: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ-ից: Նախնական տվյալներով կա 2 զոհ, 1 վիրավոր: Մահացածներից մեկը համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանն է».[24] չնայած ՔՊ կուսակցության համառ ժխտումներին ու «արդարացումներին» հանրության մեծ մասի մոտ առկա է այն համոզումը, որ Վալոդյա Գրիգորյանի սպանությունից իշխանությունը անմասն չէ, մենք, իհարկե, չենք փորձի հստակ պնդել, և կարծում ենք իշխանափոխությունից հետո իրականությունը կպարզվի:

Հոկտեմբերի 21-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ Ադրբեջանը վերացրել է իր տարածքով դեպի Հայաստան բեռների տարանցման բոլոր սահմանափակումները: Կարճ ժամանակ անց Հայաստան ժամանեցին 4-րդ կարգի ցորենով բեռնված գնացքներ Ղազախստանից և ՌԴ-ից, իսկ Ադրբեջանից Հայաստան ներկրվեց վառելիք, որի դիմաց դեռևս պարզ չէ, թե ինչեր է զիջել Հայաստանը:

Դեկտեմբերի 1-ին ԵԱՀԿ Մինսկի խումբը պաշտոնապես դադարեց գոյություն ունենալ:

Փաստորեն 2025 թ. ընթացքում ընդլայնվեց Հայաստանը թուրքական գաղութ դարձնելու փաշինյանական քաղաքականությունը, որի շարունակությունը կլինի նաև 2026 թ., եթե, իհարկե, Փաշինյանին հաջողվի վերարտադրվել: Վերջինիս վերարտադրությունը կարող է կանխել հայ ժողովուրդը՝ հունիսի 7-ի ընտրություններին մասնակցության բարձր ցուցանիշ ապահովելով և ձայնը տալով ընդդիմադիր ուժերին, որոնք էլ, իրենց հերթին, Գյումրիի օրինակով կկարողանան միավորվել և իշխանազրկել թուրքական շահերի դեսպան Փաշինյանին:

2026 թ. հունիսի 7-ն այն օրն է, երբ հայ ժողովուրդը պետք է վերջապես տա վահանմ, թե՞ վահանի վրա հարցի պատասխանը, այլ կերպ ասած՝ ունենա՞լ պետություն և ուժեղ հայրենիք, թե՞ զոհ դառնալ Փաշինյան-Էրդողան-Ալիև մերօրյա պանթյուրքիստների Մեծ Թուրանը իրականություն դարձնելու ծրագրերին: Իսկ որ Փաշինյանը պատրաստ է զոհաբերել Հայաստանը հանուն թուրքական աշխարհի հզորացման, վկայում է 2026 թ. հունվարի 16-ին Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հայտարարությունն այն մասին, որ Թուրքիան աջակցում է Նիկոլ Փաշինյանին:[25] Կարծում ենք՝ հայ ժողովուրդը հասկանում է, որ ընտրելով Փաշինյանին ընտրում է Էրդողանին ու Ալիևին, այլ կերպ ասած՝ փորում է սեփական գերեզմանը...:

Ծանոթագրություններ

1. https://tert.am/am/news/2025/01/30/arsen-torosyan/4221262
2. https://www.arfd.am/new/news/77101/
3. https://news.am/arm/news/868603.html
4. https://hetq.am/hy/article/173114
5. https://radar.am/hy/news/politics-2734013109/
6. https://lurer.com/article/616944/am?fbclid=IwY2xjawPW02VleHRuA2FlbQIxMQBicmlkETFyS2lXejAyVjd0NFFSQXM1c3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHi_lEpg_875cLztjba3RNbOJ8o0pJ9ZVLnAfCLJtIw6ZCsO_r7zICNM3wCeu_aem_u9gSng50_Aj6yl15velObQ
7. https://www.arfd.am/new/news/78801/
8. Նույն տեղում
9. https://yerkir.am/hy/article/2025/05/22/292789/?fbclid=IwY2xjawPYLptleHRuA2FlbQIxMQBzcnRjBmFwcF9pZBAyMjIwMzkxNzg4MjAwODkyAAEea6BOvoZjOOcHGT9VfeSGtsRByaAxaiTW6vB_n6AN3wPuhqpaQJI4y4Z8NKA_aem_cLflPRCnuVNaN99puqwnoA
10. Նույն տեղում
11. https://yerkir.am/hy/article/2025/05/08/292012
12. Մելքոնյան Ա., Մայիսյան հաղթանակների ուրացման արշավը իշխանությունների կողմից., Դրօշակ թիվ 5.,2025., էջ 6., https://www.arfd.am/wp-content/uploads/2025/05/%D4%B4%D6%80%D6%85%D5%B7%D5%A1%D5%AF-%D5%A9%D5%AB%D5%BE-5-2025-%D5%A9.pdf
13. https://yerkir.am/hy/article/2025/05/27/293384
14. https://lurer.com/article/643652/am?fbclid=IwY2xjawPYLlpleHRuA2FlbQIxMABicmlkETE1NlV2T0praXZoY0c4Rkxkc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHqtRZcYlxxeJJ7YMmOrWBeTiXWu07CLH3P4nVqCmpBTuSCKWqFzWIaYG0MCP_aem_kqr1y6KfYC3uo5RRDlZrUQ
15. https://arm.sputniknews.ru/20251216/hhum-partadir-zinvvorakan-tsarajutjan-zhamkety-kdarna-18-amis-azhn-yndunec-orinagitsy-96936033.html
16. https://www.yerkir.am/hy/article/2025/06/17/294456
17. https://www.aravot.am/2025/06/17/1494512/
18. https://24news.am/nerkin-kyank/419040/
19. https://www.azatutyun.am/a/iravapahnery-shiraki-temi-arajnordaranoum-en/33456309.html
20. https://hetq.am/hy/article/175254
21. Նույն տեղում:
22. https://www.facebook.com/search/top/?q=%D4%BB%D5%B6%D5%B9%20%D5%B8%D6%80%20%D5%A2%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%B6%D5%A1%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%20%D5%AF%D5%AC%D5%AB%D5%B6%D5%AB%20%D6%83%D6%80%D5%AF%D5%A5%D5%AC%2C%20%D5%A5%D5%A9%D5%A5%20%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AB%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB%D5%AB%D5%B6%20%D5%AD%D5%A5%D5%AC%D6%84%D5%A8%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%BB%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BD%20%D5%A4%D6%80%D5%BD%D6%87%D5%B8%D6%80%D5%BE%D5%AB%20&locale=hy_AM
23. Նույն տեղում:
24. https://yerkir.am/hy/article/2025/09/24/299526
25. https://yerevanlive.am/?p=15318

Իրանի ներքին անկայունությունը Բաքվի «հնարավորությունների պատուհան»

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

Իրանի Իսլամական Հանրապետության շուրջ սեղմվող աշխարհաքաղաքական օղակը 2026 թվականի սկզբին թևակոխել է մի փուլ, որտեղ ներքին սոցիալական դժգոհությունները սերտաճում են արտաքին կազմակերպված միջամտությունների հետ: Վերջին շրջանում տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ Իրանի դեմ պայքարն այլևս չի սահմանափակվում միայն միջուկային ծրագրի շուրջ վեճերով կամ տնտեսական պատժամիջոցներով: Այսօր մենք ականատեսն ենք Իրանի պետականության հիմքերի թիրախավորմանը՝ էթնո-դավանաբանական պառակտման միջոցով: Այս գործընթացում առանցքային դերակատարում է ստանձնել Ադրբեջանը, որն իր արտաքին քաղաքականության հիմքում դրել է պանթյուրքիզմի գաղափարախոսությունը: Թեհրանի համար սա էկզիստենցիալ մարտահրավեր է, իսկ Հայաստանի համար՝ անվտանգային աղետի նախերգանք:

Պանթյուրքականությունը՝ որպես քաղաքական հայեցակարգ, ձգտում է թյուրքալեզու ժողովուրդների միավորմանը մեկ ընդհանուր քաղաքական կամ տնտեսական տիրույթում: Իրանի պարագայում սա նշանակում է երկրի առնվազն մեկ քառորդի՝ հյուսիսային նահանգների անջատում:

Բաքվի ռազմավարությունը հիմնված է «Միացյալ Ադրբեջանի» կեղծ-պատմական թեզի վրա: Չնայած Ադրբեջանը պաշտոնապես չի բարձրացնում «հարավային Ադրբեջանի» հարցը պետական մակարդակով, վերջին օրերին ադրբեջանական պետական քարոզչությունը ողողված է «Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերով բաժանված ազգի» մասին լեգենդներով: Սա պարզապես պատմական էքսկուրս չէ, այլ ուղղակի հրահանգ Իրանի ներսում գործող քնած բջիջներին: Բաքուն օգտագործում է ցանկացած սոցիալական դժգոհություն՝ այն ներկայացնելով որպես էթնիկ ճնշումների դեմ պայքար: Ըստ էության, սա ոչ միայն Իրանի անվտանգության համակարգի համար է մարտահրավեր, այլև Իսլամական հեղափոխության գաղափարախոսության: Պանթյուրքիզմի ներթափանցումը Իրանի հյուսիսային շրջաններ նպատակ ունի կոտրելու իրանական միասնական ինքնությունը:

Վերջին ցույցերի ընթացքում սոցիալական ցանցերում և որոշ լրատվամիջոցներում նկատելի դարձան ազգային ինքնության, լեզվի և «թուրքական միասնության» շեշտադրումներ, որոնք անմիջականորեն

կապվում են պանթյուրքական գաղափարաբանության հետ: Չնայած այս կարգախոսները ցույցերի հիմնական շարժիչ ուժը չեն, դրանք ստեղծում են տեղեկատվական ֆոն, որն օգտագործելի է արտաքին դերակատարների համար՝ այդ թվում Ադրբեջանի:

Պանթյուրքական գաղափարախոսությունը Ադրբեջանի արտաքին քաղաքականության պաշտոնական դոկտրին չէ, սակայն այն ակտիվորեն շրջանառվում է պետականորեն վերահսկվող կամ խրախուսվող հանրային դիսկուրսում: Իրանի դեպքում այս գաղափարախոսությունը կարող է ծառայել որպես երկարաժամկետ ճնշման միջոց՝ ոչ թե անմիջական ապակայունացման, այլ Թեհրանի նկատմամբ մշտական զգոնություն պահպանելու նպատակով:

Իրանի համար պանթյուրքականության տարածումը ներքին անվտանգության լուրջ մարտահրավեր է, քանի որ այն համադրում է ազգային ինքնության հարցերը սոցիալական դժգոհության հետ: Ադրբեջանը, իր հերթին, շահագրգռված է այդ գործոնը պահպանել «ակտիվ, բայց վերահսկելի» վիճակում՝ առանց բացահայտ բախման Իրանի հետ:

Ադրբեջանի հիմնական ակնկալիքը Իրանում ընթացող գործընթացներից ոչ թե ռեժիմի փոփոխությունն է, այլ Թեհրանի արտաքին ակտիվության սահմանափակումը: Թուլացած, ներքին խնդիրներով ծանրաբեռնված Իրանը պակաս ռեսուրս և ուշադրություն կհատկացնի Հարավային Կովկասի վրա ազդելու համար: Սա Բաքվի համար ռազմավարական առավելություն է, հատկապես հաշվի առնելով Իրանի զգուշավոր, երբեմն հակակշռող դիրքորոշումը Ադրբեջանի տարածաշրջանային նախաձեռնությունների հանդեպ:

Բացի այդ, Իրանի երկարատև ներքին լարվածությունը կարող է նրան ստիպել վերանայելու արտաքին գործընկերների հետ հարաբերությունների առաջնահերթությունները, ինչը Բաքվում դիտարկվում է որպես հնարավոր դիվանագիտական պատուհան՝ սեփական շահերն առաջ մղելու համար:

Այս համատեքստում Ադրբեջանի Հանրապետության դերակատարումը դադարել է լինել լոկ դիտորդի կամ հարևանի դեր. Բաքուն այսօր հանդիսանում է Իրանի դեմ ուղղված «հիբրիդային պատերազմի» հիմնական հարթակներից մեկը: Իրանի տարբեր քաղաքներում ծավալված բողոքի ակցիաները, որոնք սկզբնավորվել էին տնտեսական դժվարությունների և էներգակիրների սակագների բարձրացման պատճառով, արագորեն տրանսֆորմացվեցին քաղաքական օրակարգի, որտեղ ադրբեջանական հետքը դառնում է ավելի քան տեսանելի:

Ադրբեջանի ներգրավվածությունը նախևառաջ դրսևորվում է տեղեկատվական և գաղափարական դիվերսիաների մակարդակում: Բաքվի պետական վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցները, ինչպիսիք են «AzTV»-ն կամ «Real TV»-ն, լարվածության աճի օրերին իրենց եթերաժամանակի զգալի մասը հատկացնում էին Իրանի հյուսիսային նահանգներում տեղի ունեցող իրադարձություններին՝ դրանք անվանելով «Ազատության շարժում Հարավային Ադրբեջանում»: Սա պարզապես տերմինաբանական նախասիրություն չէ, այլ Իրանի տարածքային ամբողջականության դեմ ուղղված բացահայտ քաղաքական դիրքորոշում: Որպես օրինակ կարելի է դիտարկել Բաքվում կազմակերպվող տարբեր համաժողովները՝ նվիրված «բաժանված ադրբեջանական ազգին», որոնք ուղղակիորեն խրախուսում են Թեհրանի դեմ անջատողական տրամադրությունները Թավրիզում, Ուրմիայում և Արդաբիլում:

Ադրբեջանի խորհրդարանում (Միլլի Մեջլիս) հնչող ելույթները, որոնք կոչ են անում Իրանի թյուրքախոսներին «ազատագրվել պարսկական լծից», այլևս առանձին պատգամավորների նախաձեռնություն չեն: Սա պետական ուղղորդված քաղաքականություն է: Իսկ Թավրիզի փողոցներում հայտնվող «Գորշ գայլերի» նշանները կամ Ադրբեջանի դրոշները ուղղակի մարտահրավեր են Իրանի ինքնիշխանությանը:

Բաքուն միաժամանակ շրջանառության մեջ է դրել Հայաստանի տարածքային ամբողջականությունը մերժող և Իրանի հյուսիսային նահանգները յուրացնող քարտեզներ: Սա նպատակ ունի ստեղծել միասնական թյուրքական աշխարհագրություն, որտեղ Հայաստանը և Իրանի հյուսիսը դիտարկվում են որպես «ժամանակավորապես կորսված տարածքներ»:

Գաղտնիք չէ, որ Իրանն ունի բարդ էթնիկ կազմ: Եթե ադրբեջանական սեպարատիզմը հաջողություն ունենա, դա ազդանշան կդառնա քրդական, բելուջական և արաբական խմբավորումների համար: Երկիրը կարող է վերածվել քաղաքացիական պատերազմի թատերաբեմի: Իսկ Բաքուն և Անկարան հաշվարկել են, որ տնտեսական ճնշումների համատեքստում էթնիկական կարգախոսները ավելի արագ են «վաճառվում» բնակչությանը:

Ադրբեջանի ռազմավարական ակնկալիքները բազմաշերտ են: Առաջնային պլանում այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» խնդիրն է: Թեհրանը հետևողականորեն հայտարարում է, որ Հայաստանի

հետ սահմանի ցանկացած փոփոխություն իր համար «կարմիր գիծ» է, և անհրաժեշտության դեպքում Իրանը ռազմական ուժ կկիրառի՝ կանխելու համար Սյունիքով անցնող արտատարածքային միջանցքի ստեղծումը: Բաքվի հաշվարկը պարզ է. որքան շատ լինեն ցնցումները Իրանի ներսում, այնքան թույլ կլինի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ուշադրությունը հյուսիսային սահմանների նկատմամբ: Այս համատեքստում Իրանի ներքին անկայունությունը Բաքվին «հնարավորությունների պատուհան» է բացում՝ Սյունիքի դեմ նոր ագրեսիա իրականացնելու համար՝ հույս ունենալով, որ Թեհրանը, զբաղված լինելով սեփական վարչակարգի փրկությամբ, չի միջամտի ռազմական գործողություններին:

Մեկ այլ կարևոր գործոն է Իսրայել-Ադրբեջան ռազմավարական դաշինքը: Լարվածության օրերին իրանական հետախուզությունը մի քանի հայտարարություններ է տարածել այն մասին, որ Ադրբեջանի տարածքում գործող իսրայելական տեխնոլոգիական կենտրոններն օգտագործվում են Իրանի ներսում կապի միջոցները խափանելու և ցուցարարներին կոորդինացնելու համար: Բաքուն, ըստ էության, վերածվել է Իրանի դեմ ուղղված գործողություններում Թել Ավիվի «առաջնագծի»: Ի պատասխան սրան՝ Իրանը վերջերս Արաքսի ափին անցկացրեց հերթական զորավարժությունը՝ ցույց տալով, որ պատրաստ է հարվածել Ադրբեջանի ենթակառուցվածքներին, եթե վերջինս շարունակի աջակցել ներքին խռովություններին:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հռետորաբանությունը նույնպես դարձել է առավել ագրեսիվ: Նրա վերջին ելույթները, որտեղ նա շեշտում է, որ «Ադրբեջանի սահմանները չեն սահմանափակվում միայն այսօրվա քարտեզով», ուղղակի ազդակ են Իրանի թյուրքալեզու բնակչությանը: Սա ուղեկցվում է սոցիալական ցանցերում հազարավոր «բոթերի» և ակտիվիստների աշխատանքով, որոնք Իրանի տարածքում իրանական դրոշի այրման և ադրբեջանական խորհրդանիշների տեղադրման տեսանյութեր են տարածում: Ըստ էության, Բաքուն փորձում է ստեղծել մի իրավիճակ, որտեղ ցանկացած տնտեսական բողոք Իրանում կարող է վերածվել էթնիկական բախման:

Այնուամենայնիվ, Բաքվի այս քաղաքականությունը էկզիստենցիալ ռիսկեր է պարունակում հենց Ադրբեջանի համար: Իրանը Ադրբեջանի ներսում դեռևս պահպանում է ազդեցության լուրջ լծակներ՝ ի դեմս հավատացյալ շիա բնակչության որոշակի շերտերի: Իրանամետ «Հուսեյնիյուն» խմբավորման ակտիվացումը և Բաքվի կողմից իրականացվող զանգվածային ձերբակալությունները «իրանական լրտեսական ցանցի» մեղադրանքով փաստում են, որ Ի. Ալիևը վախենում է Թեհրանի սիմետրիկ պատասխանից:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ Իրանի վերջին ցույցերը Ադրբեջանի համար ոչ թե ժողովրդավարական արժեքների պայքար են, այլ սառը աշխարհաքաղաքական հաշվարկ: Իրանի ներկա ճգնաժամը լոկ ներքին խնդիր չէ: Սա աշխարհաքաղաքական վերադասավորումների մի մեծ փազլ է, որտեղ Ադրբեջանը փորձում է իրագործել իր դարավոր երազանքը՝ Իրանի հաշվին դառնալ տարածաշրջանային գերտերություն: Հայաստանի համար Իրանի տարածքային ամբողջականությունը սեփական անվտանգության անբաժանելի մասն է:

Բաքվին ձեռնտու է Իրանի կազմաքանդումը կամ այնպիսի թուլացումը, որը թույլ կտա վերջնականապես կտրել Հայաստանը Իրանից և հաստատել թուրք-ադրբեջանական անընդհատական կապը դեպի Կենտրոնական Ասիա: Հայաստանի համար այս իրավիճակը պահանջում է առավելագույն զգոնություն, քանի որ Իրանի «հյուսիսային դարպասների» ցանկացած թուլացում ուղղակիորեն հարվածելու է մեր ազգային անվտանգությանը: Ադրբեջանը Իրանի ցույցերի միջոցով փորձում է լուծել իր «պատմական» հարցը՝ միավորել թյուրքական աշխարհը և վերացնել Հայաստանը՝ որպես խոչընդոտ: Թեհրանի դիմակայությունը այս գործընթացին Հայաստանի համար կյանքի և մահվան հարց է:

Իրանը փոփոխությունների շեմին. ներքին ճգնաժամի և արտաքին ճնշումների բախումը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

Այսօր Իրանի Իսլամական Հանրապետությունը գտնվում է իր ժամանակակից պատմության ամենաբարդ փուլերից մեկում: Այն, ինչ սկսվեց որպես սոցիալական բողոքի ալիք, արագորեն վերածվեց համակարգային դժգոհության՝ վերհանելով տասնամյակներ շարունակ կուտակված տնտեսական և քաղաքական խնդիրները: Սակայն Իրանի ներսում տեղի ունեցող գործընթացները հնարավոր չէ դիտարկել մեկուսացված. դրանք սերտորեն փոխկապակցված են աշխարհաքաղաքական վերադասավորումների և արտաքին ուժերի շահերի հետ: Մինչ պաշտոնական Թեհրանը ցույցերի ետևում տեսնում է «արտաքին թշնամիների մատը», միջազգային հանրությունը մտահոգված է մարդու իրավունքների և տարածաշրջանային անվտանգության հեռանկարներով:

Իրանում բողոքի ցույցերի հիմնական շարժիչ ուժը ներքին խնդիրներն են: Տարեկան 40%-ը գերազանցող գնաճը, ազգային արժույթի արժեզրկումը և երիտասարդության շրջանում բարձր գործազրկությունը ստեղծել են մի իրավիճակ, որտեղ հասարակության զգալի մասը կորցրել է հույսը տնտեսական բարելավման հանդեպ: Հակակառավարական բողոքի ակցիաները կապված են նաև Իրանի միջազգային կարգավիճակի հետ: Արևմուտքի կողմից սահմանված խիստ պատժամիջոցները ոչ միայն թուլացնում են տնտեսությունը, այլև դառնում են քաղաքական գործիք արտաքին ուժերի ձեռքում:

Սակայն, սկզբնապես տնտեսական ճգնաժամով պայմանավորված այս բողոքի ալիքը շատ արագ վերածվեց հակակառավարական և հակահամակարգային շարժման՝ «Մահ բռնապետին», «Մահ Խամենեիին» եւ «Ռեզա Փահլևի՝ վերադարձ» կարգախոսներով:

Հարկ է նշել, որ Իրանում տեղի ունեցող ներքաղաքական ցնցումները մշտապես գտնվում են համաշխարհային գերտերությունների ուշադրության կենտրոնում, սակայն այս անգամ Արևմուտքը (հատկապես ԱՄՆ-ը և ԵՄ-ն) անցել է «դիտորդի» կարգավիճակից ակտիվ «միջամտողի» դերի:

Մասնավորապես, ԱՄՆ-ն վերականգնել է բոլոր պատժամիջոցները և կիրառում է նորերը՝ թիրախավորելով Իրանի բանկային համակարգը և նավթային նավատորմը (օրինակ՝ վերջերս կալանավորվեց «Bella 1» նավը):[1] Բավականին ակտիվ է և սպառնալից հայտարարություններից զերծ չի մնում նախագահ Թրամփը, ով բազմիցս և՛ իր օգտահաշիվներում, և՛ հարցազրույցներում նշում է, որ Վաշինգտոնը «պատրաստ է գործելու», եթե Թեհրանը շարունակի ցուցարարներին կատմամբ զանգվածային բռնաճնշումները: Նա նաև խոսել է Ալի Խամենեիի՝ իբրև թե ՌԴ փախչելու մտադրության մասին:[2] Truth Social-ում վերջինս նշել

է, որ «Իրանի ազնիվ ժողովուրդը, ով սիրում է Ամերիկան, արժանի է մի կառավարության, որն ավելի շատ հետաքրքրված կլինի օգնելու նրան իրականացնելու իր երազանքները, քան սպանել նրան հարգանք պահանջելու համար: Իրանը կործանման տանելու փոխարեն, նրա առաջնորդները պետք է հրաժարվեն ահաբեկչությունից և Իրանը կրկին հզորացնեն»:[3] Հունվարի 11-ին ԱՄՆ նախագահը լրատվամիջոցների հետ զրույցում նաև հայտարարեց, որ իրանական իշխանությունները հայտնել են բանակցությունների գնալու իրենց մտադրության մասին:[4]

Վաշինգտոնը և Բրյուսելը պարբերաբար ընդլայնում են պատժամիջոցների ցանկը՝ թիրախավորելով այն պաշտոնյաներին և կառույցներին, որոնք պատասխանատու են ցույցերի ուժային ճնշման համար: Սակայն սա ստեղծում է դիվանագիտական փակուղի՝ բարդացնելով միջուկային ծրագրի շուրջ բանակցությունները: Իսկ Միջազգային կազմակերպությունները (Amnesty International, Human Rights Watch) ահազանգում են զանգվածային ձերբակալությունների և դատավճիռների մասին՝ փորձելով միջազգային ճնշում գործադրել Թեհրանի վրա:

Առանցքային նշանակություն ունեն նաև արտերկրում գործող լրատվամիջոցները, որոնք մեծ դեր են խաղում ցույցերի համակարգման և հանրային կարծիքի ձևավորման հարցում, այդպիսով, Իրանին տանելով նաև դեպի տեղեկատվական պատերազմ: 2026-ի հունվարին Իրանի կառավարությունը կիրառեց «Ազգային ինտերնետի» մոդելը՝ ամբողջությամբ անջատելով համաշխարհային ցանցը: Սակայն ցուցարարներն օգտագործում են Starlink արբանյակային կապի հազարավոր սարքեր, որոնք մաքսանենգ ճանապարհով ներկրվել են երկիր: Սա թույլ է տա-

լիս իրական ժամանակում տեսանյութեր ուղարկել արևմտյան լրատվամիջոցներին՝ պահելով միջազգային ուշադրությունը: Վերջին շրջանում շատ հաճախ կարելի է տեսնել փոքրիկ տեսահոլովակներ, որոնք իրականում Իրանում չեն նկարահանվել, սակայն մեկնաբանվում են իբրև ցուցարարների սխրանքներ: Մասնավորապես, համացանցի հիթ դարձած իրանցի կինը, ով ծխախոտով այրում է Ալի Խամենեիի նկարը, հետագայում պարզվեց, որ ոչ թե խիզախ ցուցարար է, այլ պարզապես Մայամիում ապրող իրանցի: Սրա համատեքստում կարելի է զուգահեռներ տանել նաև ցուցարարների, այսպես կոչված, ղեկավարի թեկնածու Ռեզա Փահլևիի հետ, ով նույնպես Լոս Անջելեսի իր առանձնատնից իրանցի ժողովրդին դրդում է ծայրահեղությունների, իսկ ինքն անձամբ դեռևս պատրաստ չէ գնալու ռիսկի:

Ինչ վերաբերում է վերջինիս, ապա Իրանի վերջին շահի որդին՝ 65-ամյա Ռեզա Փահլևին, վերջին ամիսներին դարձել է ընդդիմության ամենաազդեցիկ դեմքերից մեկն արտասահմանում: Ցույցերի ժամանակ հաճախ կարելի է լսել «Ռեզա Շահ, օրհնվի քո հոգին» կամ «Կեցցե՛ Փահլևին» վանկարկումները: Սա ոչ այնքան միապետության վերականգնման ծարավ է, որքան նախկին «կայուն և աշխարհիկ» Իրանի հանդեպ կարոտ: Նա հայտարարել է, որ պատրաստ է վերադառնալ և առաջնորդել երկիրը անցումային շրջանում: Նա շեշտում է, որ իր նպատակը ոչ թե միապետ դառնալն է, այլ Իրանում ժողովրդավարական հանրաքվեի անցկացումը: Փահլևին կոչ է արել ստեղծել «Ազգային փրկության խորհուրդ», որը կներառի թե՛ սփյուռքի, թե՛ երկրի ներսում գտնվող ընդդիմադիր առաջնորդներին: Հունվարի կեսերին Փահլևին ակտիվ խորհրդակցություններ էր սկսել Վաշինգտոնի հետ՝ քննարկելով Իրանի «առանց իսլամական վարչակարգի» ապագան, նաև, իր սոցիալական էջերում նա մշտապես դիմում էր Թրամփին, որ միջամտի և փրկի իրանցի ժողովրդին:

Ռեզա Փահլևին այժմ հանդես է գալիս ոչ թե որպես գահի հավակնորդ, այլ որպես դիվանագիտական կամուրջ: Նրա ռազմավարությունը հունվարին հենվում է երեք սյան վրա.

- **Ազգային հաշտեցում.** Նա խոստանում է համաներում այն զինվորականներին և ցածր օղակի պաշտոնյաներին, ովքեր կլքեն վարչակարգը: Սա նպատակ ունի թուլացնել իշխանության ներքին համախմբվածությունը:
- **Արտաքին ակտիվություն.** Փահլևին ակտիվորեն լոբբինգ է անում Եվրոպայում և ԱՄՆ-ում՝ պահանջելով սառեցնել Իրանի իշխանությունների արտասահմանյան հաշիվները և այդ միջոցներն ուղղել «Իրանի ժողովրդի աջակցության հիմնադրամին»:
- **Աշխարհիկ ժողովրդավարություն.** Նրա հիմնական թեզը կրոնի և պետության անջատումն է, ինչը գրավիչ է հատկապես երիտասարդության համար:

Ի հակադրություն սրան, Իրանի ղեկավարությունը՝ Այաթոլլահ Ալի Խամենեիի գլխավորությամբ, որդեգրել է դիմադրության մարտավարություն: Ցանկացած ներքին ընդվզում պաշտոնապես որակվում է որպես «արտաքին թշնամիների միջամտություն»: Վերնախավի հայտարարությունները հստակ են. Իրանը չի զիջելու իր միջուկային հավակնությունները և ներքին կարգ ու կանոնը կպահպանի ուժային ցանկացած մեթոդով՝ բողոքի ալիքները ներկայացնելով որպես արևմտյան հատուկ ծառայությունների կողմից ծրագրված դիվերսիա:

Այս ամենի ֆոնին կարևոր է նաև հասկանալ, թե Հայաստանը ինչպիսի կարգավիճակում կհայտնվի իր բարեկամ երկրում կատարվող խառնաշփոթի պայմաններում: Հայաստանի համար Իրանը պարզապես հարևան չէ. այն ռազմավարական նշանակություն ունեցող «կյանքի ճանապարհ» է: Իրանում տեղի ունեցող ցանկացած լուրջ ապակայունացում կարող է ուղղակիորեն ազդել Հայաստանի անվտանգության և տնտեսության վրա:

Լայնամասշտաբ բախումների դեպքում Հայաստանը կարող է բախվել փախստականների հոսքի խնդրին, ինչը փոքր երկրի համար լրացուցիչ սոցիալական և անվտանգային բեռ կլինի:

Հայաստանի համար Իրանում «կայուն փոփոխությունները» նախընտրելի են «կտրուկ ցնցումներից»: Պաշտոնական Երևանը ստիպված է վարել չափազանց զգույշ դիվանագիտություն՝ հավասարակշռելով մարդու իրավունքների համընդհանուր արժեքները և սեփական ազգային-պետական կենսական շահերը:

Այսպիսով, Իրանում ծավալվող բողոքի ցույցերը լուրջ մարտահրավեր են մեր հարևան երկրի համար, իսկ հետագա իրավիճակի հարցում չպետք է շտապել անելու եզրակացություններ: Եթե գործադուլները տարածվեն նաև էներգետիկ սեկտորի վրա (նավթի արդյունահանում), ապա իշխանությունը կկանգնի տնտեսական լիակատար կաթվածի առջև: Իրադարձությունների զարգացումը մեծապես կախված է նաև բանակի դիրքորոշումից՝ որ չափով խռովարարների դեմ ուժ կիրառելու նա պատրաստ կլինի:

Հղումներ

[1] https://www.csis.org/analysis/what-bella-1-teaches-us-about-targeting-shadow-fleets
[2] https://x.com/CaucasusNew/status/2009518803047104963
[3] https://x.com/TrumpDailyPosts/status/2011150827537514808
[4] https://x.com/CaucasusNew/status/2010611802472878480

Իրանեան իրադարձութիւնները՝ տարածաշրջանային եւ հայկական դիտակէտերով

Շահան Գանտահարեան
«Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր

Ներիրանեան իրադարձութիւնները կը շարունակեն գերքաղաքականացուած մեկնաբանութիւններով յագեցնել մամուլի եւ տեղեկատուական ամէն հարթակ:

Տեղեկատուական եւ ապատեղեկատուական յորձանուտը պէտք չէ ներքաշուիլ եւ քաղաքական նկատումներէ մեկնած հանրային կարծիքի ստեղծման եւ անկէ անդին հակադարձ գործողութիւններու ենթահողի նախապատրաստութիւնները պէտք է տեսնել այս բոլորին մէջ:

Յիշելը կարեւոր է, որ նման նախադէպեր արձանագրուած են Իրանի մէջ կենցաղային, ապա ընկերային եւ նոյնիսկ ազգային բնոյթ հաղորդելով այդ զարգացումներուն, որոնք աւելի ուշ վերահսկողութեան տակ առնուած են կեդրոնական իշխանութիւններուն կողմէ:

Դիտարժանը այն է, որ նախադէպերու պարագային, անոնք տեղի կ՚ունենային Իրանի հասցուած հարուածներէն առաջ: Այսինքն՝ այն օրերուն, երբ Իրանի արտաքին յենակէտերը այսօրուան պատկերը չէին պարզեր թէ՛ Կազայի, թէ՛ Սուրիոյ եւ թէ՛ Լիբանանի մէջ:

Այս հանգամանքները կարեւոր է դիտարկելը, փորձել ընկալելու համար ներիրանեան զարգացումներու շարժառիթները, բայց մանաւանդ անոնց ուղղութիւնը եւ հասնելիք եզրագիծը:

Ըմբոստութիւններուն հիմնական պատճառը տնտեսական տագնապի խորացումն է եւ աւելի մասնակի՝ օտար արժոյթի գերարժեւորումը կամ իրանեան դրամանիշի մրցանշային արժեզրկումը:

Փորձ կատարենք, սակայն, այս երեւոյթներուն բուն շարժառիթները տեսնելու եւ անմիջապէս յիշենք թրքական դրամանիշի ոստոստումներն ու արժեզրկումները ամէն անգամ, որ Անգարան փորձ կը կատարէր տարբեր ուղղութիւններով Ուաշինկթընի գծած սահմանները հատելու: Աւելի քան պարզ էր, որ տնտեսական եւ ֆինանսական խնդիրներու ահագնացումը կը հեռակառավարուէր Միացեալ Նահանգներէն:

Հիմա, արտաքին միջավայրերու մէջ Իրանի ազդեցութեան գօտիները հարուածելէ ետք, Իրանին կը պարտադրուի ներքին ճգնաժամեր դիմակայել: Իսկ ամէնէն ազդեցիկ ձեւը ներհասարակական բողոքներ հրահրելու, տնտեսական տագնապի խորացումն է: Իրանի դէմ կառուցուած պատնէշները, մեկուսացնելու աշխարհաքաղաքականութիւնը, շրջապատումն ու տնտեսական պատժամիջոցները կը յանգին այս պատկերին:

Հիւլէական բանակցութիւնները գէթ պաշտօնապէս առկախուած են: Իրանին պարտադրուող պահանջներուն դիմաց Թեհրանի հիմնական առաջադրանքը տնտեսական ապաշրջափակումն է: Բանակցութիւններուն առընթեր, խոստումներ, կաթիլային կշռոյթով փոփոխութիւններ եւ առկախումներ կը յատկանշէին ամբողջ գործընթացը:

Պարզ է ուղերձը: Ընդառաջել պահանջներուն, որպէսզի թոյլնայ շրջափակման օղակը եւ որպէսզի հանդարտի հասարակութիւնը:

Ուաշինկթընն կը սաստկացնէ ոճը եւ կը սպառնայ: Եթէ պաշտօնական Թեհրանը կրակ բանայ ցուցարարներուն ուղղութեամբ, պիտի ստանայ Միացեալ Նահանգներու հակահարուածը: Թեհրան կը պատասխանէ. ամերիկեան հակահարուածը անպատասխան չի մնար. կը վտանգուին Միացեալ Նահանգներու շահերը ամբողջ տարածաշրջանին մէջ: Ամերիկեան սպառնալիքներն ու կապերը կը նկատուին արտաքին միջամտութիւն ներիրանեան խնդիրներուն: Ուշագրաւ է Իրանի նախագահին յայտարարութիւնը, որ ըստ էութեան կը բնութագրէ ամբողջ գործընթացը:

«Եթէ մարդիկ դժգոհ են, ատիկա մեր յանցանքն է: Այստեղ Միացեալ Նահանգները կամ որեւէ մէկ այլ պետութիւն մեղադրելու հարց չկայ. պատասխանատուութիւնը մեր ուսերուն է»:

Իրանի նախագահը քաջատեղեակ է, որ իրանեան հասարակութեան բողոքի պատճառները կը հասնին մինչեւ պատժամիջոցներ եւ շրջափակում, որոնց հիմնական ճարտարապետը Ուաշինկթընն է: Վստահաբար քաջատեղեակ է նաեւ, որ արտաքին-ներքին ճնշումները համալիր ծրագիրի մը բաժիններն են: Այս բոլորով հանդերձ պատասխանատուութիւնը կը դնէ իրանեան իշխանութիւններուն վրայ՝ ընդգծելով, որ Միացեալ Նահանգներուն կամ այլ պետութիւններուն մօտ պէտք չէ փնտռել այս բոլորին պատճառները:

Այս յայտարարութիւնը ուղերձ է Միացեալ Նահանգներուն չմիջամտելու, չհրահրելու եւ չօգտագործելու ներիրանեան իրադարձութիւնները:

Այս մօտեցումը բաց կը պահէ հարցերու լուծման դիւանագիտական ուղին: Իսկ այդ ուղիի բաց մնալէն յատկապէս դժգոհ է Իսրայէլը, որ ամէն առիթի կը յայտարարէ, որ Թեհրան կը շարունակէ գերգիտնուիլ դառնալով սպառնալիք ամբողջ տարածաշրջանին:

Տարածաշրջանին մէջ Իրանի դերի վերասահմանում եւ վերաիմաստաւորում է, որ տեղի կ՚ունենայ: Արտաքին, բայց նաեւ ներքին ճնշամիջոցներով:

Այս բոլորին ետքը տակաւին յստակ չէ գործող համակարգի ճակատագիրը: Անշուշտ վերլուծական հրապարակումները խիստ քաղաքականացուած են: Կը խօսուի ներիրանեան պետական համակարգի երկփեղկուածութեան մասին. որոշ վերլուծաբաններ չեն բացառեր նոյնիսկ վարչակարգի փոփոխութեան շղթայական գործողութիւններու ամէնէն ցնցիչ արարներու հաւանականութիւնը:

Տեղեկատուութիւնը լիարժէք չ՚աշխատիր, մինչ Միացեալ Նահանգներ կ՚ազդարարէ յատուկ արբանեակային միջոցներով լուսաբանել գետնի վրայ արձանագրուող իրադարձութիւնները: Միացեալ Նահանգներու նախագահը վերստին կ՚արծարծէ Իրանը հարուածելու կարելիութիւնը. այդ մասին որոշում կը սպասուի:

Իրանը թէ՛ միջինարեւելեան եւ թէ՛ հարաւկովկասեան տարածաշրջաններուն մէջ կը նկատուի գլխաւոր ուժ: Այս կարգավիճակը ունի նաեւ Թուրքիան, որ իր ազդեցութեան գօտիները ունի երկու տարածաշրջաններուն մէջ: Պարզ տեսութիւն է, որ գործակցելով հանդերձ, այս պետութիւնները կը նկատուին մրցակից՝ իբրեւ երկու տարածաշրջաններուն մէջ գործող գլխաւոր ուժեր: Նախապէս կար նաեւ երրորդ ուժը, որ երկու տարածաշրջաններուն մէջ կորսնցուցած է իր նախկին ազդեցութիւնը: Սուրիոյ վարչակարգին տապալումով փոխուած է Ռուսիոյ դերը տարածաշրջանին մէջ: Արցախի պատերազմի ընթացքը եւ անկէ ետք, յատկապէս Արցախէն ռուսական ուժերու հեռացումով, փոխուած է նաեւ այս պետութեան դերը Հարաւային Կովկասի մէջ:

Երկու տարածաշրջաններուն մէջ ալ Ռուսիոյ դերակատարութեան թողած բացը քաղաքական ընկալումով կը փորձէ զբաղեցնել Անգարան: Անգարան գործակցելով կը մրցի Ռուսիոյ հետ եւ կ՚աշխատի գրաւել այն տիրոյթները, որոնք նախապէս Ռուսիոյ կը պատկանէին: Իրանի պարագային քառասացումը մտահոգիչ կրնայ ըլլալ Թուրքիոյ համար՝ Իրանի քիւրտերու աշխուժացման հաւանականութեան հեռանկարը նկատի ունենալով: Առաջադրանքը՝ արտաքին առումով նախկին դիրքերը չպահող, բայց ներքին կայունութիւնը պահպանող Իրան մը ներկայ պահու դրութեամբ անհրաժեշտ է Թուրքիոյ համար: Քրտական նոր յենակէտերու յայտնուիլը բացարձակօրէն չի բխիր Անգարայի շահերէն:

Սուրիոյ պարագային եւս ռուսական յենակէտերու վերափոխումին դիմաց զգալի էր եւ կը շարունակէ զգալի դառնալ թրքական գործօնի տարածումը: Այն, ինչ որ տեղի կ՚ունենայ այսօր Հալէպի մէջ, փաստօրէն թրքական առկայութեան յաւելեալ հաստատումին կը նպաստէ, քրտական երեւոյթներու այդ շրջաններու մէջ չէզոքացման առընթեր:

Այլ հանգամանքներ կը պարզուին Իրանի դրացի Ազրպէյճանի համար: Իրանի մէջ ազերիական ծագում ունեցողներու «զարթօնք»-ի հեռանկարը, «Հարաւային Ազրպէյճան»-ի վարկածները մինչեւ երկրի մասնատում՝ քննարկման համար Պաքուի գերատեսչութիւններու սեղաններուն վրայ են: Մինչեւ իրենց առաջադրած միջանցքի կարգավիճակին դէմ եղող Իրանի տկարացումէն օգտուելու առիթ: Յստակ է Պաքուի ծայրայեղ զգուշաւորութիւնը դիրքորոշուելու եւ քայլ առնելու առումով, հակառակ Իսրայէլի հետ իր խորացուցած համագործակցութեան:

Հայկական կողմը այս հանգամանքները անպայման պիտի նկատէ՝ արձանագրելով, որ երկու տարածաշրջաններուն մէջ ալ Իրանի նահանջը նախ եւ առաջ Թուրքիոյ առաւելներ ապահովելու ենթահող կրնայ ստեղծել: Դիտարժան էր Իրանի արտաքին գործոց փոխնախարարին գլխաւորած պատուիրակութեան այցելութիւնը Երեւան, ապաշրջափակման օրակարգով: Իրանի համար այս թէժ օրերուն: Ցնցումնային այս փուլէն ետք, անպայման վերստին բանակցութիւններու զանգը պիտի հնչէ: Իրանի ապաշրջափակման համար Հայաստանը անշրջանցելի կենսաճանապարհ է: Իսկ Հայաստանի համար Իրանը էր եւ տակաւին կը շարունակէ մնալ հիմնական շնչուղի:

Իրանի առաջադրած ապաշրջափակումի կենսաճանապարհներէն է Սիւնիքի անցքը: Իսկ ապաշրջափակումը կարեւորագոյն հանգոյցն է այս խնդիրներուն: Այս հանգամանքներով ալ ԹՐԻՓՓ-ի կառուցումը պէտք է ընկալել ամերիկեան վերահսկողութեամբ Իրանի ապաշրջափակումը:

Իրանի ուղղութեամբ ներքին-արտաքին ճնշումներու այս տարածաշրջանային քաղաքականութեան դիմաց չէին երեւիր հայկական կողմին հաշուարկները:

«Փրոքս»-ի կէտի չվերածուելու, Իրանի նման ռազմավարական նշանակութիւն ունեցող գործընկեր պետութեան շահերուն հարուածող դիրքի վրայ չըլլալու եւ հաւասարակշիռ քաղաքականութիւն վարելու առումներով:

Համաժողովրդական բանակ եւ ազգային ինքնագիտակցություն
Հասարակական կազմակերպման ձևի հենասյուները

Արամ Շահնազարյան
«Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագիր

Հայ քաղաքական մտքի պատմությունը ձևավորվել է ոչ թե կայացած պետականության պայմաններում, այլ՝ դրա շարունակական բացակայության, գոյաբանական վտանգների և արտաքին ճնշումների ներքո: Հենց այս իրողությունն է, որ ազգային հարցը հայ իրականության մեջ դուրս է բերել մշակութային և պատմագիտական սահմաններից ու դարձրել այն գաղափարական և քաղաքական հիմնահարց: Հայ ժողովուրդը դարեր շարունակ հարկադրված է եղել պատասխանելու ոչ միայն ինքնության, այլև գոյության հարցին՝ ունա՞կ է արդյոք պահպանելու իրեն որպես քաղաքական ամբողջություն: Հենց այս պայմանն է հայ քաղաքական մտքի առանցքում մշտապես պահել ինքնապաշտպանության, կազմակերպվածության և ազգային կամքի խնդիրը:

Այս համատեքստում առանցքային նշանակություն են ստանում դաշնակցական մեծ տեսաբաններ Միքայել Վարանդյանի և Գարեգին Խաժակի գաղափարական բանաձևումները: Դրանք բխում են նույն գոյաբանական հրամայականից. ազգը կա՛մ դառնում է իր ճակատագրի գիտակից կրողը, կա՛մ անխուսափելիորեն վերածվում է արտաքին ուժերի կամքի գործիքի: Վարանդյանի «Համաժողովրդական բանակ» տեսությունը և Խաժակի «Ազգի ու ազգային գաղափարախոսության» ըմբռնումը որպես հայ քաղաքական մտածողության արգասիք միավորվում են մեկ ամբողջական համակարգի մեջ, որտեղ պաշտպանությունը, քաղաքական կամքը և ազգային ինքնագիտակցությունը դրսևորվում են որպես փոխկապակցված և անբաժանելի սկզբունքներ:

Միքայել Վարանդյանի մտածողության ելակետը պարզ, բայց անխուսափելի ճշմարտությունն է. ազգի ինքնորոշման և գոյության իրավունքը ոչ միայն չի տրվում, այլև չի պահպանվում ինքնաբերաբար: Նա բազմիցս շեշտել է, որ ազգը, որն իր պաշտպանության պատասխանատվությունը հանձնում է ուրիշների ձեռքը, փաստորեն հրաժարվում է իր քաղաքական իրավունքներից և զրկվում է արժանապատվությունից: Վարանդյանի համար պաշտպանությունը ոչ թե ինքնանպատակ գործընթաց է, այլ՝ քաղաքական դիրքորոշում: Պաշտպանությունից հրաժարումը, ըստ նրա, հավասարազոր է քաղաքական պարտությունն ընդունելուն:

Այս համոզմունքից է ծնվել Վարանդյանի «Համաժողովրդական բանակ» տեսությունը: Նրա տեսության համաձայն՝ բանակը ժողովրդի միջից ծնված և նրա գիտակցված կամքը մարմնավորող համակարգ է: Այն չի կարող գոյություն ունենալ որպես հասարակությունից անջատված կամ առանձին կառույց, քանի որ իր իրական ուժը ստանում է միայն ժողովրդի կազմակերպված կամքի վրա հենվելով: «Համաժողովրդական բանակը» գոյություն ունի միայն այն դեպքում, երբ այն հենվում է համազգային նպատակների գիտակցված որդեգրման վրա՝ ըստ ժողովրդի քաղաքական պատասխանատվության և համախմբվածության հիմքի: Երբ ժողովրդի կամքը թուլանում է կամ կորչում է կազմակերպվածությունը, բանակը մնալով միայն որպես ռազմական կառույց՝ կորցնում է իր իրական ռազմավարական և քաղաքական ուժը: Այսպիսով, «Համաժողովրդական բանակը» ոչ միայն ռազմական, այլև նախ և առաջ քաղաքական և հասարակական համակարգ է, որը կարող է լիովին իրացնել իր նշանակությունը միայն այն ժամանակ, երբ ժողովրդի գիտակցությունը և կամքը շարունակաբար ապահովում են դրա ռազմավարական և քաղաքական ազդեցությունը:

Վարանդյանը կտրականապես մերժում է այն պատկերացումը, թե ազգային անվտանգությունը կարող է պահպանվել հասարակության քաղաքական անգործության պայմաններում: Նա զգուշացնում է, որ նույնիսկ ամենազինված բանակն անկարող է հաղթանակ ապահովել, եթե այն հենված չէ գիտակից, կազմակերպված և իր պայքարի նպատակն ըմբռնած ժողովրդի վրա: Այդ պատճառով նա զենքը երբեք չի դիտարկել որպես արժեք, ինքնանպատակ միջոց: Նրա հայտնի միտքը, ըստ որի զենքն իրական արժեք է ձեռք բերում միայն այն ժամանակ, երբ ծառայում է գիտակցված գաղափարին, ուղղված է հենց այն վտանգի դեմ, որը ծագում է երբ ռազմական ուժը կտրվում է քաղաքական նպատակներից:

Միքայել Վարանդյան

Վարանդյանի տեսության կենտրոնում զինվոր - քաղաքացու կերպարն է: Նա հետևողականորեն շեշտում է, որ զինվորը չպետք է վերածվի կույր գործիքի: Զինվորն առաջին հերթին քաղաքացի է՝ գիտակից և պատասխանատու, որն իր գիտակցությամբ ու գաղափարական ըմբռնումով մասնակցում է ազգային պաշտպանության գործին: Նրա ձևակերպմամբ՝ զինվորը պետք է մնա քաղաքացի, իսկ քաղաքացին պատրաստ լինի անհրաժեշտ պահին դառնալու զինվոր: Այս երկակիությունը Վարանդյանի համար հակասություն չէ, այլ ազգային պաշտպանության բնական վիճակ:

Այս մոտեցումը հատկապես կարևոր է փոքր ազգերի համար, որոնց գոյության պայքարը մշտապես տեղի է ունեցել ուժերի անհավասար պայմաններում: Վարանդյանը լավ գիտակցում է, որ հայ ժողովուրդը թշնամու նկատմամբ դժվար թե ունենա թվային գերազանցություն կամ ռազմական հզորության առավելություն, սակայն նա վստահ է, որ գաղափարական կազմակերպվածությունը և կամքի կենտրոնացումը կարող են փոխհատուցել այդ բացը: Այդ իսկ պատճառով նրա համար «Համաժողովրդական բանակը» նախ և առաջ հոգեբանական, քաղաքական և կազմակերպական պատրաստակամության համակարգ է:

Գարեգին Խաժակի «Ազգի ու ազգային գաղափարախոսության» մտածողությունը, որը խտացված է նրա «Ի՞նչ է ազգությունը» աշխատությունում, թեև արտահայտվում է ավելի տեսական լեզվով, բայց նույնքան կտրուկ է իր քաղաքական հետևություններում: Խաժակը մերժում է ազգը միայն կենսաբանական, լեզվական կամ մշակութային հատկանիշներով սահմանելու մոտեցումը: Նրա հայտնի ձևակերպմամբ՝ ազգը կենսաբանական պատահականություն չէ, այլ պատմական կամք: Այս ըմբռնումը հայ քաղաքական մտքի համար շրջադարձային նշանակություն ունի, քանի որ ազգը ներկայացնում է որպես գիտակցված ընտրություն և պարտավորություն:

Խաժակի համար ժողովուրդն ազգ է դառնում միայն այն ժամանակ, երբ գիտակցում է իր միասնական նպատակը և իր պատմական պատասխանատվությունը: Առանց այդ գիտակցության ժողովուրդը կարող է գոյություն ունենալ որպես հասարակական միավոր, բայց չի կարող դառնալ գիտակցված քաղաքական ուժ: Նրա կարծիքով՝ պատմությունը չի ճանաչում չեզոք ազգեր. կամ ազգը գործում է, կամ նրա փոխարեն գործում են ուրիշները: Այս ըմբռնումը հատկապես արդիական է այն պայմաններում, երբ արտաքին ուժերը մշտապես ձգտում են հայ ժողովրդի փոխարեն որոշել նրա ճակատագիրը:

Խաժակի ազգային գաղափարախոսության առանցքային դրույթներից մեկն այն է, որ ազգը չի կարող գոյատևել գաղափարական մնանկության պայմաններում: Նա հստակ արձանագրում է, որ ազգը, որը չունի սեփական գաղափարախոսություն, անխուսափելիորեն սկսում է ծառայել ուրիշների գաղափարներին: Ազգային գաղափարախոսությունը նրա մոտ ոչ թե քարացած դոգմա է, այլ կենդանի համակարգ, որը ձևավորվում է պատմական փորձից և ուղղված է ապագային: Այդ համակարգի առանցքում են ազգային արժանապատվությունը, ինքնիշխանությունը և պատմական շարունակականության գիտակցումը:

Խաժակի մոտ ազգային գաղափարախոսությունն անբաժանելի է պաշտպանվելու պատրաստակամությունից: Նա ընդգծում է, որ իրավունքները գոյություն ունեն այնքանով, որքանով ազգը պատրաստ է դրանք իրացնել և պաշտպանել: Ազգը, որը հրաժարվում է պայքարից, փաստացի հրաժարվում է իր իրավունքներից: Այս տրամաբանությունն ուղիղ կերպով համադրվում է Վարանդյանի «Համաժողովրդական բանակի» տեսության հետ: Երկուսի մոտ էլ ազգային կամքը չի կարող մնալ հռչակագրերի մակարդակում. այն պետք է նյութականացվի կազմակերպված գործի միջոցով:

Այսպիսով, Վարանդյանի և Խաժակի գաղափարները տարբեր հարթություններում ձևակերպում են նույն հիմնարար ճշմարտությունը. ազգը գոյատևում է ոչ միայն ֆիզիկական առումով, այլ՝ իր գոյության քաղաքական և սոցիալական պատասխանատվությունը գիտակցելով և այն իրացնելու պատրաստակամությամբ: Այս պատասխանատվության քաղաքական և ռազմական արտահայտությունը կազմակերպված ինքնապաշտպանությունն է, իսկ նրա գաղափարական հիմքը՝ ազգային ինքնագիտակցությունը և մտավոր պատրաստվածությունը, որոնք ապահովում են ազգի դիմադրողականության և կազմակերպվածության շարունակականությունը:

Միքայել Վարանդյանի և Գարեգին Խաժակի գաղափարական մոտեցումները, թեև ձևակերպված են տարբեր լեզվամտածողությամբ և տարբեր խնդիրների անմիջական արձագանք են հանդիսանում, բայց իրականում միավորվում են մեկ ընդհանրական քաղաքական համակարգի մեջ: Այդ համակարգի առանցքում ազգի ըմբռնումն է, որպես կամքի, պատասխանատվության և կազմակերպված գործողության միավոր: Այստեղ ազգը չի սահմանափակվում ինքնության պահպանման դերով, այլ դիտարկվում է որպես հավաքական քաղաքական ուժ, որն ունի իրավունքներ այնքանով, որքանով ունի դրանք պաշտպանելու պատրաստակամություն:

Այս ամբողջական համակարգում Վարանդյանի «Համաժողովրդական բանակ» տեսությունը ազգային կամքի կազմակերպական արտահայտություն է, իսկ Խաժակի «Ազգի ու ազգային գաղափարախոսության» մտածողությունը՝ որպես այդ կամքի գաղափարական և ռազմավարական հիմք: Առանց գաղափարախոսության «Համաժողովրդական բանակը» կարող է վերածվել զուտ ռազմական ուժի, իսկ առանց կազմակերպված պաշտպանության գաղափարի ազգային գաղափարախոսությունը մնում է վերացական հռչակագիր՝ առանց իրական քաղաքական և ռազմավարական ազդեցության: Այս փոխլրացման գիտակցումն է, որ դաշնակցական քաղաքական մտածողությունը վերածել է ամբողջական համակարգի, այլ ոչ թե առանձին գաղափարների ամբողջության:

Հայ Յեղափոխական Դաշնակցության գաղափարական–քաղաքական ծրագիրը հենց այս համակարգի ծրագրային արտահայտությունն է: Դաշնակցության հիմնադիր սերունդը վաղուց էր արձանագրել այն ճշմարտությունը, որ հանուն ազատության և անկախության ազգային ազատագրական պայքարը չի կարող իրականացվել միայն որոշակի խավի, կուսակցության կամ սերնդի միջոցով: Այս պայքարի արդյունքները՝ ազատությունը և անկախությունը, համաժողովրդական են, և պահպանվում են միայն համաժողովրդական կամքով: Այս դրույթը Դաշնակցության ծրագրում հանդես է գալիս ոչ որպես կարգախոս, այլ որպես քաղաքական-գաղափարական սկզբունք:

Դաշնակցության ծրագրում ազգի պաշտպանությունը դիտարկվում է որպես ամբողջ ժողովրդի քաղաքական պարտք: Այս մոտեցումը լիովին համահունչ է Վարանդյանի այն համոզմանը, որ պետությունը չի կարող պաշտպանել ժողովրդին, եթե ժողովուրդը պատրաստ չէ պաշտպանել պետությունը: Այստեղ պետությունը հանդես է գալիս ոչ թե որպես ազգից վեր կանգնած կառույց, այլ որպես նրա կամքի քաղաքական կազմակերպում:

Դաշնակցության ծրագրային դրույթներում հատուկ ընդգծվում է ժողովրդի քաղաքական դաստիարակության նշանակությունը: Դաշնակցությունը վաղուց է հասկացել, որ առանց քաղաքական գիտակցության զինված ուժը դատապարտված է դառնալու կամ արտաքին ազդեցությունների գործիք, կամ ներքին քայքայման աղբյուր: Այդ պատճառով Դաշնակցության գործունեության մեջ գաղափարական աշխատանքը միշտ դիտարկվել է որպես ազգային անվտանգության բաղկացուցիչ մաս: Ազգային-քաղաքական կրթությունը այստեղ հիմնականում ձևավորում է քաղաքական գիտակցություն, ազգային պատասխանատվություն և գաղափարական պատրաստակամություն՝ ժողովրդին նախապատրաստելով իրականացնելու իր պաշտպանությունը և պահպանելու ազգային անվտանգությունը:

Այս գաղափարական հենքի վրա ձևավորվել է նաև դաշնակցական ըմբռնումը բանակի և զինվորական ծառայության մասին: Զինվորը Դաշնակցության համար երբեք չի եղել պարզապես հրաման կատարող: Նա գաղափարական մարտիկ է, որը կրում է զենք՝ ազգի անունից: Այս մոտեցումը ուղիղ կերպով ժառանգում են Վարանդյանի զինվոր–քաղաքացի գաղափարը և Խաժակի՝ զինվորին որպես ազգի գիտակցված կամքի կրող ձեւակերպումը: Զինվորն այստեղ չի կտրվում հասարակությունից, այլ հանդիսանում է նրա գիտակից ներկայացուցիչ:

Գարեգին Խաժակ

Այս գաղափարական հասկացության արդիականությունն ու կենսունակությունը մեր օրերում դառնում են առավել ակնհայտ: Արցախյան առաջին ազատամարտը, քառօրյա և 44-օրյա պատերազմները տարբեր փուլերում ցույց տվեցին, որ հայ ժողովրդի պաշտպանական կարողությունը անմիջականորեն կապված է նրա գաղափարական ամրության վիճակի հետ: Այն ժամանակ, երբ ազգային կամքը համախմբված էր և պայքարի իմաստը գիտակցված, հնարավոր դարձավ դիմակայել և հաղթել թվային ու ռազմական գերազանցություն ունեցող հակառակորդին: Իսկ երբ գաղափարական դաշտում տիրապետող դարձան անորոշությունը, պատասխանատվության բաշխման մթնոլորտի մթագնումը և պարտության հետ հաշտվելու հոետորաբանությունը, քաղաքական և ռազմական պարտությունը դարձավ անխուսափելի:

Արցախի կորուստը միայն տարածքային կամ ռազմական պարտություն չէ: Այն գաղափարական ճգնաժամի արտահայտություն է, որը տարիների ընթացքում արմատավորվել էր մեր ազգային-քաղաքական մտածողության մեջ: Երբ ազգային հիմնահարցերը սկսում են դիտարկվել որպես անցյալի հիշողություններ, այլ ոչ արդի քաղաքական պարտավորություններ, ազգը

դադարում է հանդես գալ որպես կենսունակ միավոր և իր իրավունքները կրող գիտակցված ուժ: Խաժակի այն սահմանումը, որ ազգը, որը մոռանում է իր չլուծված հարցերը, փաստորեն հրաժարվում է իր պատմական իրավունքից, մեր օրերում ստանում է ցավալի հաստատում:

Վարանդյանի տեսության լույսի ներքո Արցախի հարցի մոռացումը կամ կորստի հետ հաշտվելը հավասարազոր է ազգային կամքի ինքնալուծարմանը: Նա վաղուց է զգուշացրել, որ պաշտպանությունը սկսվում է ոչ թե պատերազմի օրը, այլ խաղաղության տարիներին: Ազգը, որը երկար ժամանակ չի պատրաստվում պաշտպանվելու, պատերազմի պահին արդեն պարտված է: Այս միտքն այսօր պետք է ընկալել ոչ որպես պատմական մեջբերում, այլ որպես քաղաքական ախտորոշում:

Մեր օրերում Վարանդյանի «Համաժողովրդական բանակ» տեսությունը պահանջում է նորովի մեկնաբանում՝ մեր ժամանակների պահանջներին համապատասխան: Այն չի կարող սահմանափակվել դասական ռազմական պատրաստությամբ: «Համաժողովրդական բանակը» այսօր ենթադրում է հասարակության այնպիսի կազմակերպում, որի պայմաններում ազգային անվտանգության հարցը ներառված է կրթության, տեղեկատվական դաշտի, հասարակական կազմակերպման և քաղաքական մշակույթի մեջ: Այստեղ զինված պայքարը դիտարկվում է ոչ թե որպես ինքնանպատակ, այլ որպես վերջին միջոց՝ ազգային իրավունքների պաշտպանության համար:

Դաշնակցության գաղափարախոսության մեջ խաղաղության արժեքը երբեք չի հակասել ազգային պայքարի հիմնարար սկզբունքների: Խաղաղությունը Դաշնակցության համար միշտ եղել է ցանկալի, բայց ոչ ցանկացած գնով: Խաղաղությունն արժեք է միայն այն դեպքում, երբ այն բխում է ազգի ինքնիշխան կամքից և ապահովված է պաշտպանվելու կարողությամբ: Խաղաղությունը, որը հիմնված է քաղաքական տեղատվության և ինքնախաբեության վրա, վերածվում է ժամանակավոր դադարների՝ հաջորդ պարտության ճանապարհին:

Այսպիսով, ՀՅԴ ծրագրային մտածողության հենքի վրա, Վարանդյանի և Խաժակի գաղափարական ձևակերպումների համադրումը ձևավորում է ազգային գոյության քաղաքական ձևաչափ, որը մեր օրերում ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Այդ ձևաչափը պահանջում է վերադարձ քաղաքական պատասխանատվության, ազգային կամքի կազմակերպման և հասարակության ներսում պաշտպանական գիտակցության վերականգնման:

Դաշնակցության ծրագրային հենքի վրա, Վարանդյանի և Խաժակի գաղափարական ժառանգության ամբողջական ընթերցումը, մեզ կանգնեցնում է մի պարզ, սակայն հստակ քաղաքական ճշմարտության առջև. ազգը գոյություն ունի ոչ այնքան իր անցյալով, որքան իր ներկայի, և հատկապես ապագայի նկատմամբ ունեցած պատասխանատվությամբ: Ազգ լինելը վիճակ չէ, այլ մշտական ընտրություն: Այդ ընտրությունը յուրաքանչյուր պատմական փուլում վերաձևակերպվում է, սակայն իր էությամբ մնում է նույնը՝ պատրաստակամություն պաշտպանելու սեփական իրավունքները և գոյությունը:

Միքայել Վարանդյանի «Համաժողովրդական բանակ» տեսությունը հենց այդ ընտրության կազմակերպված արտահայտությունն է, իսկ Գարեգին Խաժակի «Ազգի և ազգային գաղափարախոսության» ըմբռնումը այս տեսությանը տալիս է գաղափարական առանցք:

Այս երկու մոտեցումների համադրումը Դաշնակցության գաղափարական աշխարհընկալման մեջ վերածվել է քաղաքական ծրագրի և տեսության, որը հատկապես մեր օրերում, ստացել է գոյաբանական նշանակություն: Արցախի կորուստը բացահայտեց այն ճշմարտությունը, որ ազգային անվտանգության հարցը հայ քաղաքական մտքի համար երկար ժամանակ դիտարկվել էր մասնատված, ապաքաղաքականացված և գաղափարական հիմքից զրկված ձևով: Երբ պաշտպանությունը վերածվում է միայն պետական համակարգի գործառույթի, իսկ հասարակությունը դուրս է մնում այդ պատասխանատվությունից, պարտությունը դառնում է ոչ թե պատահականություն, այլ օրինաչափություն: Այս իրողությունը Վարանդյանը կանխատեսել էր դեռ իր ժամանակներում, երբ գրում էր, որ պաշտպանությունը չի սկսվում պատերազմի օրը, այլ՝ խաղաղության տարիներին:

Խաժակի տրամաբանությամբ, Արցախի հարցի մոռացությունը կամ դրա տեղափոխումը բացառապես զգացմունքային հարթություն, քաղաքական սնանկություն և պարտություն է նշանակում: Այսօր, երբ փորձ է արվում պարտությունը ներկայացնել որպես նոր իրականության հետ հաշտվելու անհրաժեշտություն, Խաժակի այս միտքը դառնում է քաղաքական զգուշացում՝ ուղղված ոչ թե անցյալին, այլ ներկային և հատկապես՝ ապագային:

Վարանդյան–Խաժակ գաղափարական համակարգը մեզ չի խոստանում հեշտ լուծումներ: Այն չի առաջարկում հույս կապել արտաքին ուժերի, պատահական հանգամանքների կամ ժամանակի հետ: Այն պահանջում է վերադարձ պատասխանատվության: Պատասխանատվություն՝ կրթելու քաղաքականապես գիտակից քաղաքացի, ձևավորելու ազգային նպատակների ըմբռնում, պահպանելու պատմական հիշողությունը և մշտապես պահպանելու ինքնապաշտպանության կարողությունը: Այս գաղափարական համակարգը հասարակական կազմակերպման ձևի հենասյունն է:

Միքայել Վարանդյանի «Համաժողովրդական բանակ» տեսությունը և Գարեգին Խաժակի «Ազգի և ազգային գաղափարախոսության» ըմբռնումը հայ քաղաքական մտքի անցյալին չեն պատկանում: Դրանք կենդանի քաղաքական ուղեցույց են, որոնք հստակ արձանագրում են, որ ազգը գոյություն ունի այնքանով, որքանով ունի կամք, գաղափար և այդ գաղափարը պաշտպանելու պատրաստակամություն: Ազգ լինելը վիճակ չէ, այլ մշտական ընտրություն՝ յուրաքանչյուր պատմական փուլում վերաձևակերպվող, բայց իր էությամբ անփոփոխ: ■

Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948 թվականի կոնվենցիան

Մարի Հովհաննիսյան
Քաղաքագիտության մագիստրոս

Իրավական բացերը, հայեցակարգային անլիարժեքությունը և արդիականացման հրամայականը

1948 թվականի դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, ինչը շրջադարձային դարձավ միջազգային իրավունքի պատմության մեջ: Կոնվենցիայի ընդունմամբ պատմության մեջ առաջին անգամ սահմանվում էր, որ պետությունները պարտավոր են միջամտել և պատժել մի հանցագործություն, որը նախկինում դիտարկվում էր որպես ներքին ինքնիշխանությանը վերաբերող հարց:[1] Ակնկալվում էր, որ կոնվենցիայի ընդունմամբ սկիզբ է դրվում պետությունների բացարձակ ինքնիշխանության սկզբունքի ավարտին՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների պարագայում:

Լինելով Սառը պատերազմի սկզբնական փուլում ձեռք բերված քաղաքական զիջումների ծնունդ՝ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան իր յոթանասունամյա գոյության ընթացքում ենթարկվեց ժամանակակից աշխարհի բարդ հակամարտություններն ու բազմաթիվ ողբերգական իրադարձությունները քննելու և տեսանելի հետևանքներով իրավական գնահատական տալու փորձությանը, սակայն, ինչպես ցույց տվեցին փաստերը, չհաջողեց իրագործել այն առաքելությունը, որի հիմքով ի սկզբանե ստեղծվել էր: Կոնվենցիան, որը ստեղծվել է որպես արձագանք Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության սարսափներին, ժամանակի ընթացքում դարձել է մի տեսակ «իրավական հուշարձան», որի սահմանափակող ձևակերպումները և գործադիր մեխանիզմների բացակայությունը հաճախ խոչընդոտում են հենց այն նպատակին, որի համար այն ստեղծվել է՝ ոճրագործությունների կանխարգելմանը: Ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում, երբ ցեղասպանական գործողությունները հաճախ ընդունում են «դանդաղ հյուծման» կամ մշակութային ջնջման ձևեր, 1948 թվականի տեքստի տառացի և նեղ մեկնաբանությունը ստեղծում է անպատժելիության վտանգավոր միջավայր: Ներկայիս բարդ աշխարհաքաղաքական իրողություններում ծավալվող հակամարտությունները, որոնք մեծամասամբ ընթանում են մարդու իրավունքների կոպտագույն խախտումներով և հանցագործություններով, վկայում են, որ 1948 թվականին ընդունված կոնվենցիան ունի մի շարք իրավական բացեր և հայեցակարգային թերություններ, ուստի դրա արդիականացումն ու ժամանակակից մարդահիրավերներին համարժեք արձագանքելու գործիքակազմով օժտելը կենսական անհրաժեշտություն են:

Պատմական ակունքները և Ռաֆայել Լեմկինի հայեցակարգային տեսլականը

Ցեղասպանության կոնվենցիայի ստեղծման պատմությունը սերտորեն կապված է Ռաֆայել Լեմկինի կյանքի և գործունեության հետ: Լեմկինի հետաքրքրությունը այս հանցագործության նկատմամբ սկսվել է դեռևս 1921 թվականին, երբ նա, լինելով երիտասարդ բանասեր, իր պրոֆեսորին հարցրեց, թե ինչու Հայոց ցեղասպանության կազմակերպիչները չեն ձերբակալվում: Պրոֆեսորի պատասխանը, թե չկա համապատասխան օրենք, դրդեց Լեմկինին թողնել բանասիրությունը և նվիրվել միջազգային իրավունքին:[1] Նրա համար ցեղասպանությունը ոչ միայն զանգվածային սպանություն էր, այլև տարբեր գործողությունների համակարգված ծրագիր, որն ուղղված է ազգային խմբերի կյանքի հիմնական հիմքերի ոչնչացմանը՝ քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական մակարդակներում:[2] Սակայն Կոնվենցիայի մշակման ընթացքում Լեմկինի նախնական լայն սահմանումը զգալիորեն նեղացվեց: Ինչպես նշում է անվանի իրավագետ Ուիլյամ Շաբասը, Կոնվենցիայի վերջնական տեքստը դարձավ

Ռաֆայել Լեմկին

պետությունների ինքնիշխանության պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության միջև եղած քաղաքական առևտրի զոհ:[3]

Լեմկինն իր՝ «Առանցքի տիրապետությունը օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ առաջին անգամ ներմուծելով «ցեղասպանություն» տերմինը, նպատակ ուներ լրացնելու միջազգային իրավունքի բացը, որը թույլ էր տալիս պետություններին անպատիժ ոչնչացնել սեփական քաղաքացիներին: Չնայած Նյուրնբերգյան դատավարության ընթացքում եզրույթն օգտագործվեց մեղադրական եզրակացության մեջ, վերջնական դատավճիռը սահմանափակվեց «մարդկության դեմ ուղղված հանցագործություններով», ինչն էլ ավելի ընդգծեց առանձին կոնվենցիայի անհրաժեշտությունը, որը կգործեր նաև խաղաղ ժամանակ:[4]

Իրավական սահմանման թերությունները. պաշտպանվող խմբերի սահմանափակությունը

Կոնվենցիայի II հոդվածը ցեղասպանությունը սահմանում է որպես գործողություն, որն իրականացվում է «ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի» ոչնչացման մտադրությամբ:[5] Սա փաստաթղթի ամենաշատ քննադատության ենթարկվող կողմերից մեկն է, քանի որ այն դուրս է թողնում քաղաքական և սոցիալական խմբերը:

Քաղաքական խմբերի բացառումը

Փաստաթղթի մշակման ընթացքում քաղաքական խմբերի ներառումը լրջորեն դիտարկվում էր, սակայն Խորհրդային Միության և գաղութատեր մի շարք տերությունների ճնշման ներքո բացառվեց: Պատճառն այն էր, որ պետությունները վախենում էին, որ իրենց երկրներում տեղի ունեցող ներքին բռնաճնշումները կարող են դիտարկվել որպես ցեղասպանություն: Այս բացթողումը հանգեցրել է, այսպես կոչված, «պոլիտիցիդի» (politicide) անպատժելիությանը: Բազմաթիվ դեպքերում, երբ զանգվածային սպանություններն իրականացվում են քաղաքական հայացքների հիմքով, մեղադրյալները կարողանում են խուսափել ցեղասպանության որակումից՝ պնդելով, որ իրենց թիրախը եղել է քաղաքական ընդդիմությունը, այլ ոչ թե էթնիկ կամ կրոնական խումբը: Սա ստեղծում է անհարկի իրավական բարդություններ, երբ դատարանները ստիպված են լինում «մեկնաբանական կրկնակոշիկներ» հագցնել փաստերին՝ քաղաքական խմբերն էթնիկականի մեջ տեղավորելու համար, ինչպես դա եղավ Ռուանդայի թութսիների դեպքում, որոնք որոշ չափանիշներով դիտարկվում էին որպես սոցիալ-քաղաքական խավ:

Մշակութային արժեքների ոչնչացումը, ցեղասպանություն որակելու առաջարկի մերժումը և դրա հետևանքները

Լեմկինի սկզբնական հայեցակարգում ցեղասպանությունը բաժանված էր երեք տեսակի՝ ֆիզիկական, կենսաբանական և մշակութային: Մշակութային ցեղասպանությունը ենթադրում էր խմբի մշակութային արժեքների, լեզվի, հուշարձանների և հոգևոր ժառանգության համակարգված ոչնչացումը, ինչը խմբին զրկում է իր ինքնությունից: Սակայն ՄԱԿ-ի Վեցերորդ կոմիտեում տեղի ունեցած քվեարկությանն ի հետևանք մշակութային ցեղասպանությունը դուրս մնաց կոնվենցիայի վերջնական տեքստից, բացառությամբ երեխաների բռնի տեղափոխման դրույթի:[6] Այս որոշման հիմնական շարժառիթը գաղութատիրական պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Կանադա) դիմադրությունն էր, որոնք մտահոգված էին, որ իրենց կողմից իրականացվող բնիկ ժողովուրդների ձուլման քաղաքականությունը կարող է որակվել որպես ցեղասպանություն:[7] Հետևանքն այն եղավ, որ ժամանակակից միջազգային իրավունքը ցեղասպանությունը դիտարկում է հիմնականում որպես ֆիզիկական ոչնչացում, մինչդեռ մշակութային ջնջումը, որն ունենում է նույնքան կործանարար ազդեցություն խմբի գոյության համար, հաճախ մնում է անպատիժ կամ որակվում է որպես ավելի թեթև իրավախախտում:

Այսօր մշակութային արժեքների ոչնչացումը, որի նպատակը խմբի պատմական հիշողության ջնջումն է, միջազգային դատարանների կողմից հիմնականում որակվում է որպես «պատերազմական հանցագործություն», այլ ոչ թե ցեղասպանություն: Սա թույլ է տալիս հանցագործ պետություններին իրականացնելու «ցեղասպանություն՝ առանց արյունահեղության»՝ վերացնելով խմբի ինքնությունը մշակութային կապիտալի ոչնչացման միջոցով:[8]

Հատուկ մտադրության (Dolus Specialis) ապացուցման պատնեշը

Կոնվենցիայի կիրառման ամենամեծ իրավական մարտահրավերը «մտադրության» (intent) տարրն է: Համաձայն II հոդվածի, գործողությունները պետք է կատարվեն խումբը «ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրությամբ»: Սա սահմանում է չափազանց բարձր ապացուցողական շեմ, որը միջազգային իրավունքում հայտնի է որպես

Հայերի ցեղասպանությունը

dolus specialis: Մեղադրող կողմը պետք է ապացուցի ոչ միայն այն, որ մարդիկ սպանվել են, այլև այն, որ կատարողի կոնկրետ նպատակը եղել է խմբի ֆիզիկական վերացումը:[9] Այս դրույթը հաճախ դառնում է անպատժելիության գործիք: Պետությունները կարող են իրականացնել էթնիկ զտումներ կամ զանգվածային տեղահանություններ՝ պնդելով, որ իրենց նպատակը ոչ թե ոչնչացումն է, այլ տարածքի վերահսկողությունը կամ «անվտանգության ապահովումը»: Առանց ուղղակի ապացույցների, ինչպիսիք են գրավոր հրամանները կամ պաշտոնական հայտարարությունները, շատ դժվար է ապացուցել ցեղասպանական մտադրությունը, ինչը թույլ է տալիս հանցագործներին խուսափելու պատասխանատվությունից՝ սահմանափակվելով պատերազմական հանցագործությունների կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների որակմամբ:

Հոդված II(c) և «Դանդաղ ցեղասպանության» իրավական անտեսումը Կոնվենցիայի II(c) ենթակետը նախատեսում է ցեղասպանության իրականացումը «խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծմամբ, որոնք հաշվարկված են հանգեցնելու նրա լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը»:[10] Սա ներառում է սննդից, դեղորայքից, ջրից կամ կացարանից զրկումը, պաշարումները և շրջափակումները: Չնայած այս դրույթի առկայությանը, այն մնում է միջազգային պրակտիկայում թերօգտագործված:

Գիտնականները մատնանշում են, որ «դանդաղ հյուծման» (attrition) միջոցով իրականացվող ցեղասպանությունները հաճախ ժամանակին չեն արժանանում իրավական արձագանքի, քանի որ դրանք չունեն զանգվածային գնդակահարությունների անմիջականությունն ու տեսողական ազդեցությունը: Երբ պետությունը շրջափակման մեջ է պահում մի խմբի՝ առաջացնելով սով և հիվանդություններ, միջազգային հանրությունը հաճախ դա որակում է որպես «հումանիտար ճգնաժամ», այլ ոչ թե ցեղասպանական գործողություն, ինչը պետություններին ազատում է կոնվենցիայով նախատեսված կանխարգելման պարտավորությունից:[11]

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետը Արցախում տեղի ունեցած իրադարձությունների դեպքում փաստում է Կոնվենցիայի ակնհայտ անկիրառելիության մասին: Բերձորի միջանցքի տասնամյա շրջափակումը և դրան հաջորդած բռնի տեղահանումը շատ փորձագետներ որակեցին որպես ցեղասպանություն: Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն իր զեկույցում հստակեցնում է, որ 120.000 հայերին սովամահության մատնելը համապատասխանում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «գ» կետին՝ «խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք հաշվարկված են նրա ֆիզիկական ոչնչացման համար»:[12] Չնայած սրան, միջազգային քաղաքական դերակատարները նախընտրեցին օգտագործել «էթնիկ զտում» եզրույթը, որը չունի Կոնվենցիայով սահմանված պատժիչ և կանխարգելիչ ուժ:

Բացի այդ, Արցախում և Նախիջևանում հայկական մշակութային ժառանգության (Ջուղայի խաչքարեր, Ղազանչեցոց տաճար, Կանաչ Ժամ) համակարգված ոչնչացումը և «ալբանացումը» դիտարկվում են որպես մշակութային ցեղասպանության դասական դրսևորումներ, որոնք ներկայիս իրավական համակարգում մնում են անպատժելի:[13]

Բաքվի հայերի ջարդերի (1990 թ.) անատոմիան և իրավական որակումը 1990 թ. հունվարի 13-ից 19-ը Բաքվում տեղի ունեցան տեղի հայ բնակչության ջարդերը, որոնք ցեղասպանական գործընթացի դասական օրինակ են, Կոնվենցիայի թերությունների պատճառով ստացան «էթնիկ հակամարտության» մակերեսային որակումը:

1990 թ. հունվարին Բաքվի հայության ջարդերը մեկուսի միջադեպ չէին: Դրանք դարձան 1988-ին սկսված գործընթացի գագաթնակետը, որն ուղեկցվում էր

Թուրքերի ցեղասպանությունը

Ադրբեջանական ԽՍՀ-ում հայ բնակչության պլանավորված ապամարդկայնացմամբ: Էթնիկ բռնության առաջին զանգվածային դրսևորումը 1988 թ. փետրվարին Սումգայիթի ջարդերն էին: Ի պատասխան Ղարաբաղի հայության՝ Հայաստանի հետ վերամիավորվելու խաղաղ պահանջներին, Սումգայիթում սկսվեցին կազմակերպված հարձակումներ հայկական բնակարանների վրա:[14]

1990 թվականին հայերի հանդեպ ատելությունը դարձել էր Ադրբեջանի պաշտոնական դիսկուրսի մասը: Ադրբեջանի ժողովրդական ճակատի արմատական թևերն օգտագործում էին հոետորաբանություն, որն ուղղակիորեն կոչ էր անում հանրապետությունը «մաքրել թշնամական տարրից»:[15]

Պետական լրատվամիջոցները և կրթական համակարգը սկսեցին տարածել ապամարդկայնացնող կարծրատիպեր՝ հայերին ներկայացնելով որպես «եկվորներ» և «դավաճաններ»:[16]

Ըստ հետազոտությունների՝ ապամարդկայնացումը ցեղասպանության չորրորդ փուլն է, որի ժամանակ զոհերը զրկվում են մարդկային կարգավիճակից, ինչը հեշտացնում է զանգվածային սպանությունների իրականացումը: Բաքվում այս փուլն անցել էր մինչև 1989 թ. վերջը, երբ հայերին զանգվածաբար ազատում էին աշխատանքից, զրկում բժշկական օգնությունից և ենթարկում ամենօրյա սպառնալիքների:

Բաքվի ջարդերի անատոմիան (13–19 հունվարի 1990 թ.)

Բաքվի ջարդերը տարբերվում էին սումգայիթյան իրադարձություններից կազմակերպվածության ավելի բարձր մակարդակով և ներգրավված ուժերի մասշտաբով: Մարդու իրավունքների պաշտպան կազմակերպությունների, ներառյալ Human Rights Watch-ի (նախկինում՝ Helsinki Watch) հավաքած վկայությունները մատնանշում են, որ հարձակումները տարերային չեն եղել: Ջարդարարներն ունեցել են հայկական բնակարանների ցուցակները՝ ճշգրիտ հասցեներով, որոնք կարող էին ստացվել միայն պաշտոնական աղբյուրներից, օրինակ՝ անձնագրային բաժիններից կամ բնակշահագործման տեղամասերից (ԺԷԿ): Սա ուղղակիորեն վկայում է պետական կառույցների ներգրավվածության կամ առնվազն հանցակցության մասին բռնության ակտերի նախապատրաստման գործում:[17]

Հունվարի 13-ից սկսած՝ մետաղյա ձողերով և բենզինի տարաներով զինված, երիտասարդների խմբերը շրջում էին հայկական տներով: Բնակարանները նախապես նշվում էին, որից հետո դրանց վրա հարձակվում էր ամբոխը: Մարդկանց նետում էին պատշգամբներից, ողջ-ողջ այրում բակերում, կանանց ենթարկում խմբակային բռնաբարությունների՝ հարազատների աչքի առաջ:

Իրավապահ մարմինների գործողությունները

Ցեղասպանական մտադրության և 1948 թ. Կոնվենցիայի խախտման ամենահամոզիչ ապացույցներից մեկը ոստիկանության և ներքին զորքերի վարքագիծն է: Ջարդերի յոթ օրերի ընթացքում միլիցիան չի միջամտել իրադարձություններին՝ անտեսելով օգնության կանչերը: Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ իրավապահ մարմինների աշխատակիցները ջարդարարներին ցույց են տվել թաքնված հայերի ճանապարհը կամ մասնակցել թալանված գույքի բաժանմանը:[18] Ցեղասպանության կոնվենցիայի IV հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ պատժի են ենթակա ոչ միայն շարքային կատարողները, այլև պաշտոնատար անձինք:[19] Էթնիկ խմբի զանգվածային ոչնչացման պայմաններում Բաքվի միլիցիայի անգործությունը ցեղասպանության կանխարգելման պարտավորությունների խախտում է, սակայն Կոնվենցիան չի պարունակում պետություններին իրենց իսկ ֆունկցիոներների գործողությունները հետաքննել ստիպելու արդյունավետ մեխանիզմ:

Իրադարձությունների որակումը Կոնվենցիայի II հոդվածի շրջանակներում

Հասկանալու համար, թե ինչու Բաքվի ջարդերը պետք է դիտարկվեն որպես ցեղասպանություն, անհրաժեշտ է վերլուծել ջարդարարների և իշխանությունների գործողությունների համապատասխանությունը Կոնվենցիայի II հոդվածի կոնկրետ կետերին:

Խմբի անդամների սպանությունը

Human Rights Watch-ի գնահատականներով՝ ջարդերի ընթացքում սպանվել է առնվազն 48 մարդ, սակայն ոչ պաշտոնական տվյալները, ներառյալ Թոմաս դե Վաալի և «Մեմորիալ» ընկերության զեկույցները, մատնանշում են մոտ 90 և ավելի զոհերի թիվ: Կարևոր է հասկանալ, որ ցեղասպանության համատեքստում նշանակալի է ոչ միայն զոհերի բացարձակ թիվը, այլև սպանությունների հետևում եղած մտադրությունը:[20] Բաքվում սպանություններն իրականացվում էին քաղաքում հայերի ներկայությունը ֆիզիկապես վերացնելու նպատակով (*ընդգծումը հեղինակինն է*):

Լուրջ մարմնական վնասվածքներ պատճառելը կամ մտավոր խեղման ենթարկելը

Բաքվի հազարավոր հայեր դարձան ծեծի, խոշտանգումների և հոգեբանական տեռորի զոհ: Բռնաբարությունները, որոնք զանգվածային բնույթ էին կրում, միջազգային պրակտիկայում ճանաչվել են որպես ցեղասպանության ակտ, եթե դրանք կատարվում են խմբի սոցիալական հյուսվածքը և վերարտադրվելու ունակությունը քայքայելու նպատակով: Ողջ մնացածներին պատճառված հոգեբանական տրավման հանգեցրեց համայնքի՝ որպես ամբողջական սոցիալական օրգանիզմի լիակատար քայքայմանը:

Կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծում, որոնք հաշվարկված են խմբի ֆիզիկական ոչնչացման համար

Այս կետն ամենաճշգրիտն է նկարագրում 1989-1990 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում տիրող իրավիճակը: Դեռևս մինչև բացահայտ սպանությունների սկիզբը, հայ բնակչությունը դրվել էր «սոցիալական մահվան» պայմաններում:

Տնտեսական մեկուսացում. Էթնիկ հատկանիշով զանգվածային աշխատանքից ազատումները մարդկանց զրկեցին ապրուստի միջոցներից:

Բռնի վտարում. «Գնա կամ մեռիր» ուլտիմատումները, որոնք ուղեկցվում էին ֆիզիկական բռնությամբ, ստիպեցին 200-250 հազար մարդու լքել իրենց տները՝ կորցնելով ողջ գույքը:

Ինչո՞ւ ջարդերը չորակվեցին որպես ցեղասպանություն

Չնայած փաստերի ակնհայտությանը, միջազգային հանրությունը և իրավական ինստիտուտները ձեռնպահ մնացին Բաքվի իրադարձությունների նկատմամբ «ցեղասպանություն» տերմինն օգտագործելուց: Սա տեղի ունեցավ Կոնվենցիայի իրավական բացերի և այն ժամանակվա աշխարհաքաղաքական իրավիճակի համակցության պատճառով:

ԽՍՀՄ քաղաքական մանևրումը

Միխայիլ Գորբաչովի գլխավորությամբ խորհրդային ղեկավարությունը ձգտում էր պահպանել «վերակառուցման» իմիջը և խուսափել իր տարածքում էթնիկ զտումների փաստի ճանաչումից: Ջարդերը ցեղասպանություն որակելը կպահանջեր ընդունել, որ խորհրդային համակարգը ոչ միայն չի կարողացել պաշտպանել իր քաղաքացիներին, այլև եղել է հանցագործության հանցակիցը: Դրա փոխարեն օգտագործվում էին «միջէթնիկական թշնամանք» և «զանգվածային անկարգություններ» տերմինները, ինչը խնդիրը միջազգային քրեական իրավունքի դաշտից տեղափոխում էր ներքին անվտանգության դաշտ:

VI հոդվածի թերությունները. Իրավասության բացակայությունը

1948 թ. Կոնվենցիայի VI հոդվածը նախատեսում է, որ ցեղասպանության մեջ մեղադրվող անձինք պետք է դատվեն այն պետության իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է արարքը, կամ միջազգային տրիբունալի կողմից: 1990 թվականին միջազգային տրիբունալ դեռևս գոյություն չուներ, իսկ Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ-ի դատական համակարգը քաղաքականացված էր և շահագրգռված չէր օբյեկտիվ հետաքննությամբ: Սա Կոնվենցիայի դասական խնդիրն է. այն պատժելու պարտականությունը դնում է հենց այն պետությունների վրա, որոնք հաճախ իրենք են ցեղասպանության կազմակերպիչները կամ հովանավորները:

Ինստիտուցիոնալ անկատարություն. կանխարգելման և վերահսկողության բացակայությունը

Ի տարբերություն մարդու իրավունքների այլ կոնվենցիաների, 1948 թվականի Ցեղասպանության կոնվենցիան չունի մշտական մոնիտորինգային մարմին կամ տեսչական հանձնաժողով: Կոնվենցիայի VIII հոդվածը պետություններին թույլ է տալիս դիմելու ՄԱԿ-ի իրավասու մարմիններին, սակայն սա կրում է հայեցողական բնույթ և հաճախ կախված է Անվտանգության խորհրդի քաղաքական կամքից, որտեղ վետոյի իրավունքը կարող է կաթվածահար անել ցանկացած կանխարգելիչ գործողություն:

Բացի այդ, կոնվենցիայի տեքստում բացակայում է ունիվերսալ իրավազորության սկզբունքը: VI հոդվածը սահմանում է, որ ցեղասպանության համար պատասխանատու անձինք պետք է դատվեն այն պետության տարածքում, որտեղ կատարվել է հանցագործությունը, կամ միջազգային քրեական դատարանի կողմից: Սա նշանակում է, որ եթե ցեղասպանությունն իրականացվում է պետական մակարդակով, ապա տվյալ պետության դատարանները երբեք չեն դատի իրենց իսկ առաջնորդներին, իսկ միջազգային տրիբունալների ստեղծումը տասնամյակներ է տևում:

Հայաստանի դերը ցեղասպանության կանխարգելման միջազգային օրակարգում

Հայաստանը, լինելով ցեղասպանություն վերապրած ազգի պետություն, պետք է լինի միջազգային առաջամարտիկներից մեկը ցեղասպանության կանխարգելմանն ուղղված գործուն քայլեր ձեռնարկելու հարցում: Հայաստանի համար 1948 թվականի կոնվենցիայի թերությունները տեսական չեն: Թուրքիայի շարունակական ժխտողականությունը և Ադրբեջանի ղեկավարության կողմից օգտագործվող «ատելության խոսքը», ինչպիսիք են հայերին «շների պես վտարելու» կամ «թրի մնացուկներ»ի մասին հայտարարությունները, ուղղակի ցուցիչներ են ցեղասպանական մտադրության պահպանման մասին: Կոնվենցիան, սակայն, չունի բավարար լծակներ պատժելու նման հռետորաբանությունը նախքան այն կվերածվի ֆիզիկական գործողության, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է բարեփոխումների անհրաժեշտությունը:

Սումգայիթի ցեղասպանությունը

Բարեփոխումների առաջարկներ. դեպի 21-րդ դարի Կոնվենցիա. Հաշվի առնելով վերը նշված բոլոր թերությունները, անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ Ցեղասպանության կոնվենցիան ավելի արդյունավետ և ժամանակակից դարձնելու ուղղությամբ:

Սահմանումների ընդլայնում. պաշտպանվող խմբերի ցանկում պետք է ներառվեն քաղաքական և սոցիալական խմբերը: Բացի այդ, «մշակութային ցեղասպանությունը» պետք է ճանաչվի որպես ինքնուրույն հանցագործություն կամ ցեղասպանության բաղկացուցիչ մաս, քանի որ խմբի ինքնության ջնջումը ևս խմբի ոչնչացում է:

Ապացուցողական շեմի վերանայում. Dolus specialis-ի խիստ պահանջը պետք է լրացվի «գիտակցված ռիսկի» կամ «նպատակային հետևողականության» սկզբունքով: Եթե պետության գործողությունները օբյեկտիվորեն տանում են խմբի ոչնչացմանը, ապա մտադրությունը պետք է համարվի ապացուցված՝ անկախ պաշտոնական հռետորաբանությունից:

Ինստիտուցիոնալ վերահսկողություն. ՄԱԿ-ի շրջանակներում պետք է ստեղծվի մշտական մարմին, որը կզբաղվի բացառապես ցեղասպանության վաղ ահազանգմամբ և պետությունների կողմից իրենց պարտավորությունների կատարման վերահսկմամբ:

Ունիվերսալ իրավազորության ամրագրում. Կոնվենցիան պետք է հստակ նախատեսի, որ ցեղասպանությունը ենթակա է ունիվերսալ իրավազորության, ինչը թույլ կտա ցանկացած երկրի դատել հանցագործներին՝ անկախ նրանց քաղաքացիությունից կամ հանցանքի վայրից:

Եզրակացություն

1948 թվականի Ցեղասպանության կոնվենցիան, լինելով մարդկության պատմության կարևորագույն իրավական ձեռքբերումներից մեկը, այսօր գտնվում է լուրջ մարտահրավերների առջև: Դրա ստեղծման հիմքում ընկած քաղաքական փոխզիջումները՝ քաղաքական խմբերի և մշակութային տարրի բացառումը, այսօր դարձել են սողանցքեր, որոնց միջով հանցագործները կարողանում են խուսափել արդարադատությունից: Հայաստանի փորձը և Լեռնային Ղարաբաղի վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ «դանդաղ» և «մշակութային» ցեղասպանություններն իրական սպառնալիքներ են, որոնց դեմ ներկայիս կոնվենցիան չունի արդյունավետ գործիքակազմ: Միջազգային հանրությունը պարտավոր է վերանայել և արդիականացնել այս իրավական փաստաթուղթը, որպեսզի Ռաֆայել Լեմկինի տեսլականը՝ աշխարհ առանց ցեղասպանությունների, դառնա իրականություն, այլ ոչ թե մնա թղթի վրա գրված բարի ցանկություն:

Հղումներ

1 https://genocide-museum.am/arm/08.11.2017-Lemkin.php

2 Lemkin, Raphael, ***Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress***, Washington, D.C., Carnegie Endowment for International Peace, 1944, pp. 79 - 95.

3 Schabas, William, *Genocide in International Law: The Crime of Crimes,* Cambridge University Press, 2025, pp1-2, 59-116:

4 Lemkin, նույն տեղում, էջեր 79, 91-92:

5 https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf

6 https://legal.un.org/avl/ha/cppcg/cppcg.html

7 https://www.refworld.org/reference/themreport/ecosoc/2011/en/77635?__cf_chl_tk=xZNIRmLNyStmGl1WPmnehVH_ppfEQX2PL0DARx9.WPo-1768300448-1.0.1.1-sDcbRa363sfFHWFgb2JvzlNWiqJWeoedAsoEyDBmrwA

8 https://www.mfa.am/hy/cultural-genocide/, https://thestateofafricandiaspora.com/wp-content/uploads/2023/04/Law-on-Culture-Ethnocide-final-1.pdf

9 https://history.state.gov/historicaldocuments/frus1949v02/d251

10 https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf

11 Svetah Chakhmakhchyan and Edgar Meyroyan, "*Slow-Burn Destruction: Reading 'Conditions of Life' Into Twenty-First Century Genocide*," International Journal of Armenian Genocide Studies 10, no. 1 (2025), pp 1-30:

12 https://luismorenoocampo.com/lmo_en/report-armenia/, https://luismorenoocampo.com/wp-content/uploads/2023/08/Armenia-Report-Expert-Opinion.pdf

13 https://caucasusheritage.cornell.edu/?page_id=1842, https://monumentwatch.org/en/alerts/, https://monumentwatch.org/en/alerts/

14 Սումգայիթի հայության ջարդերի մասին կարող եք կարդալ հաջորդ համարում:

15 Human Rights Watch (Helsinki Watch), Conflict in the Soviet Union: Azerbaijan, 1991, pp. 6-12.

16 Thomas de Waal, Black Garden: Armenia and Azerbaijan Through Peace and War, New York University Press, 2003.

17 Human Rights Watch (Helsinki Watch), Conflict in the Soviet Union: Azerbaijan, 1991, pp. 6-12.

18 Նույն տեղում:

19 https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf

20 Human Rights Watch (Helsinki Watch), Conflict in the Soviet Union: Azerbaijan, 1991, pp. 6-12.

Կազմակերպված վրեժխնդրության առաջին կառույցը ցեղասպանության տարիներին

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

Մուտք

1919 թ. աշնանը (28 սեպտեմբերի - 2 նոյեմբերի) Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գումարված ՀՅ Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովն ընդունեց մի գաղտնի որոշում, որը կոչվեց «Հատուկ գործ», իսկ ժողովրդի մեջ հետագայում հայտնի դարձավ վրեժխնդրության հունական «Նեմեսիս» աստծո անունով: Կյանքի կոչվեց Հատուկ կամ Պատասխանատու մարմին՝ Արմեն Գարոյի (Գարեգին Փաստրմաճյան) և Շահան Նաթալու (Հակոբ Տեր-Հակոբյան) ղեկավարությամբ: Մարմնի կազմում ընդգրկվեցին նաև Դաշնակցության երիտասարդ, բայց արդեն մարտական լուրջ փորձառություն ունեցող Սողոմոն Թեհլիրյանը, Արշավիր Շիրակյանը, Արամ Երկանյանը, Միսաք Թոռլաքյանը, որոնց անունները պետք է կարճ ժամանակ անց հայտնի դառնային համայն հայությանը:

Ընդհանուր ժողովից հետո մշակվում է Հայոց ցեղասպանության կազմակերպիչների ցանկը կազմելու և նրանց ահաբեկելու հանգամանալից ծրագիրը, որի գործադրման ազդանշանը եղավ Թալեաթի գլխին Ս. Թեհլիրյանի արձակած դիպուկ գնդակը Բեռլինում 1921 թ. մարտի 15-ին:

Այս հոդվածում չենք անդրադառնա «Նեմեսիսի» գործունեությանը: Ուղղակի միայն նշենք, որ իր կազմակերպվածությամբ, գաղտնիությամբ, կատարման անվրեպությամբ և գաղափարական ուղղվածությամբ ահաբեկումների պատմության մեջ այն բացառիկ է: Բացառիկ է նաև իր նկատմամբ ժողովրդի անխարդախ սիրով ու լայն ճանաչումով:

«Նեմեսիսի» անդամներից բացի, բազմաթիվ հայորդիներ են վրեժ լուծել հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուներից ու իրականացնողներից: Այդ գործողությունները կրել են տարերային բնույթ, եղել են անձնական նախաձեռնության արդյունք կամ հանգամանքների հետևանք: Նրանցից մեկն էլ Կարմիր բանակի հրամանատար, ծնունդով արցախցի Հակոբ Մելքումյանի (Մելքումով) արարքն էր, ով բոլորովին պատահաբար, իմանալով, որ Միջին Ասիայում իր զորաջոկատի դեմ կռվող ուժերի հրամանատարը Էնվեր փաշան է, զանց առնելով Մոսկվայից ստացած հրամանը՝ նրան չսպանել, այլ միայն գերել, գործադրեց բոլոր ջանքերը, ջախջախեց Էնվերի զորաջոկատը և սպանեց հայոց մեծագույն դահիճներից մեկին:



Վրեժխնդրության առաջին կազմակերպված կառույցը

Ինչպես նշվեց, գաղափարական ուղղվածությամբ, կազմակերպվածությամբ և գործունեության աշխարհագրական ընդգրկումներով «Նեմեսիս» գործողությունը հիրավի բացառիկ երևույթ էր: Սակայն պետք է նշել, որ իր բնույթով և նպատակադրությամբ հայ իրականության մեջ «Նեմեսիսին» նախորդել է մի կազմակերպություն, որի բուն նպատակը եղել է նույնը՝ վերժ լուծել հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներից և իրականացնողներից: Կազմակերպությունը գործել է միայն Տրապիզոնի նահանգում՝ համշենահայերի միջավայրում, իսկ նրա թիրախները եղել են նահանգի մասշտաբով թուրք պետական, քաղաքական և ռազմական գործիչները: Այս կառույցի անունը մեզ հայտնի չէ:[1] Սակայն վերջին կարևոր ժողովում ուր սահմանվում են մի շարք պայմաններ և գործելաոճի կանոններ, այդ աշխատանքները համակարգելու համար ստեղծվում է մարմին, ուստի այն պայմանականորեն կկոչենք «Հանձնախումբ»:

Բացի նպատակից՝ «Հանձնախմբի» և «Նեմեսիսի» միջև կարելի է նշել ևս մեկ-երկու ընդհանրություն. երկուսն էլ գործում էին խիստ գաղտնիության պայմաններում, երկուսն էլ ունեին թիրախների ստուգված և ճշտված ցանկեր: Մյուս նմանությունն այն է, որ երկուսին էլ կյանքի էին կոչել Դաշնակցական մարմիններն ու գործիչները, սակայն, եթե «Հանձնախմբի»

դեպքում հասկանալի պատճառներով խոսքը մեծ չափով կազմի հիմնական մասը կորցրած կուսակցական կառույցների և ղեկավար մարմինների առանձին գործիչների մասին է, ապա «Նեմեսիսի» հիմնադիրը եղել է ՀՅԴ բարձրագույն՝ Ընդհանուր ժողովը, իսկ ղեկավարները եղել են կուսակցության փորձառու և ազդեցիկ դեմքեր:

«Հանձնախմբի» հիմնադիրն ու ղեկավարը եղել է նշանավոր վրիժառու, Հայաստանի Հանրապետության կայացման համար բազմաթիվ կռիվների ու ճակատամարտների մասնակից, հետագայում «Նեմեսիսի» հատուկ մարմնի անդամ և Ադրբեջանի ներքին գործոց նախարար, Բաքվի հազարավոր հայերի դահիճ Բեհբութ խան Ջիվանշիրին Պոլսում դիմահար կրակով սպանած Միսաք Թոռլաքյանը: Նրա հերոսական և արկածներով հարուստ կյանքին կարելի է ծանոթանալ «Օրերուս հետ» հուշագրության,[2] Հ. Հովակիմյանի «Պատմություն հայկական Պոնտոսի»[3] աշխատություններից: Սփյուռքի, իսկ ՀՀ անկախացումից հետո՝ նաև հայաստանյան մամուլում, ամսագրերում և զանազան ժողովածուներում նրա մասին հրատարակվել են հոդվածներ[4], հուշեր[5] և այլն: Նրա անունը փորագրված է 2023 թ. ապրիլի 25-ին Երևանի Օղակաձև զբոսայգում բացված աղբյուր-հուշակոթողին չորրորդ հատվածում:

Եվ քանի որ «Դրօշակի» հղված համարներում հանգամանալից կերպով ներկայացրել ենք համշենահայության ինքնապաշտպանական կռիվները և Մ. Թոռլաքյանի դերն ու գործունեությունը դրանցում, այս հոդվածում կանդրադառնանք միայն «Հանձնախմբի» վրեժխնդրական գործունեությանը:

Տարերային շրջանից անցում դեպի համակարգված գործունեություն

Մ. Թոռլաքյանի խումբը 1915 թ. մայիսին՝ ինքնապաշտպանական աշխատանքների եռուն շրջանում, ՀՅԴ Արևմտյան բյուրոյի հանձնարարությամբ անցել էր Ռուսաստան: Հանձնարարությունը կատարելուց և Դաշնակցության վերադաս մարմինների հետ հանդիպումներից հետո Աբխազիայում բնակվող համշենցի ընկերներով համալրված՝ դեկտեմբերին խումբը ժամանում է Բաթում, ուր Ռուսական զորքերի հրամանատար զորավար Լյախովին են ներկայանում իրենց փաստաթղթերով: Լյախովը նրանց ընդունում է, տալիս թուրք զինվորի նոր հանդերձանք, զենք, հեռադիտակներ և անհրաժեշտ այլ պարագաներ: Այդ պահից սկսած՝ նրանք ռուսական բանակի հետախույզներ էին, ինչը Տրապիզոնում գործելու համար լայն հեռանկարներ էր բացում:

Երբ խումբը տեղ է հասնում և թռուցիկ կերպով ծանոթանում շրջանի կացությանը, առաջին տպավորությունն այն է լինում, որ տեղահանության և կոտորածների պատճառով ոչ մի հայ չի մնացել նահանգում. «Միսաքին խումբին մեծ մասը կը յուսալքուի տեսնելով ամայացած գիւղերը եւ անոնց թուրք մուհաճիրներով լեցուիլը,[6] ասով ալ կ'եզրակացնեն թէ ծրագրուած ինքնապաշտպանութիւնը ձախողած է եւ Հայուն հետքն իսկ չէ մնացած»:[7] Հիասթափությանը գումարվում են ցուրտն ու քաղցը, և շատերը որոշում են վերադառնալ Բաթում, «Բայց Միսաքին վճռականութեան շնորհիւ»[8] իրավիճակը շուտով փոխվում է: Նա ծանոթ թուրքերի միջոցով տեղեկանում է, որ բազմաթիվ զինված հայեր, նրանց հետ՝ նաև կանայք, երեխաներ և ծերեր, բարձրացել են լեռները կամ քաշվել անտառները:

Ծառայության բերումով կարճ ժամանակով Բաթում վերադառնալուց առաջ Մ. Թոռլաքյանը կապեր է հաստատում հայ խմբապետների հետ, որոնք արդեն թուրքերի դեմ մի քանի հաղթական կռիվներ էին մղել: Ընկերներին տեղեկացնում է իր խմբի ծրագրերի և մտադրությունների մասին. «Խորհուրդ տուինք, որ բոլորս ալ իրարու հետ կապ պահենք մեր նամակին մէջ գրուած հասցէով, որպէսզի մեր երկրորդ գալուն կարենանք զիրար անմիջապէս գտնել և եթէ կարելի ըլլայ, բոլորը տեղափոխել Ռուսաստան»:[9]

Բաթումից վերադառնալուց հետո Մ. Թոռլաքյանը հանդիպումներ է ունենում լեռներում ու անտառներում ապաստանած հայ զինյալ խմբերի հետ, նրանց աջակցում իր տեղեկություններով և խորհուրդներով: Վստահելի թուրքերի օգնությամբ կազմակերպում է հայերի անվտանգ տեղափոխությունը Ռուսաստան. «Առաջին հերթին որոշեցինք Սիւրմենէէն փրկել այն միամիտ հայ տղաքը, որոնք հաւատալով թուրքերուն, յանձնուել էին անոնց»:[10] Այս գործում նրանց մեծ օգնություն են ցույց տալիս ազգությամբ թուրք Շնքեթ բեյը և նրա որդին՝ Հյուսեին բեյը:

Տրապիզոնը ռուսական տիրապետության տակ

1916 թ. մարտին Մ. Թոռլաքյանը ժամանակավորապես կասեցնում է խմբի գործունեությունը և Հայկազուն Խանդանյանի ու Երվանդ Կամսզյանի հետ անցնում է Բաթում, այնտեղից՝ Թիֆլիս, ուր հանդիպում է Ռոստոմին: Ռոստոմը նրան տանում է ՀՅԴ Բյուրոյի գրասենյակ. «Հոն ծանօթացուց ղեկավար ընկերներէն Կորիւն Ղազազեանի եւ Տիգրան Աւետիսեանի հետ եւ անոնց յանձնարարեց, որ մօտս եղած կարեւոր նիւթերը գրի առնեն: Սակայն այս գործը

գլուխ չելաւ, որովհետև Գանձակի համար տոմսեր գնած էինք եւ կը շտապէինք»:[11]

Ապրիլի կեսերին ռուսական զորքերը գրաւում են Տրապիզոնը: Միսաքն ընկերների հետ վերադառնում է և աշխատանքի անցնում ռուսական բանակի հակահետախուզական բաժնում: Իր հուշերում նա գրում է. «Այդ պաշտօնը վերցուցի վրաս ոչ թէ աշխարհակալ ռուսերուն ծառայելու նպատակով, այլ որովհետև ատով դիւրութիւն կը գտնէի թրքական գիւղերը մտնելու, խուզարկութիւններ կատարելու և անոնց թաքցուցած հայ բեկորները հաւաքելու, ինչպէս նաև թուրք այդ ոճրագործներէն վրէժ լուծելու: Եւ մեկնեցայ գիւղերը»:[12]

Ռուսական զորքի հետ Տրապիզոն էր վերադարձել Բաթումում համշենահայերից ստեղծված Հայկական կոմիտեն,[13] որի հետ Թոռլաքյանի խումբը մասնակցում է հայ որբերին հայտնաբերելու, հավաքելու և հարազատներին վերադարձնելու կամ Բաթումի որբանոցում տեղավորելու աշխատանքներին:

Կոտորածներից փրկված հայ խլյակների նկատմամբ ռուսական հրամանատարության բարյացակամ վերաբերմունքը, սակայն, խիստ յուրահատուկ էր. նրանք ջանքեր գործադրում էին հայերի բեկորները հավաքելու գործում, սակայն նպատակը մեկն էր՝ նրանց ուղարկել ռուսական քաղաքներ Բաթում, Սուխում, Սոչի և այլն: Իսկ զենքի ընդունակ փոքրաթիվ հայերից ակնկալում էին ընդամենը աջակցություն՝ իրենց ծրագրերի իրականացման համար: Հայ ազգային-քաղաքական գործիչները շատ շուտ հասկացան ռուսների մտադրությունները: Մ. Թոռլաքյանը, նշելով, որ «քրիստոնեա ռուսերը» չարդարացրին հայերի հույսերը, գրում է. «Անոնք գրաւելով Արևմտեան Հայաստանի մեծ մասը եւ հաստատ գիտենալով թէ թուրքերը ինչպիսի անլուր ոճրագործութիւններ կատարած էին հայերուն հանդէպ, նոյնիսկ այդ թուրքերուն համակրանքը շահելու համար, սկսան աւելի լաւ վերաբերմունք ցոյց տալ տալ անոնց հանդէպ, քան այս վերջիններու եաթաղանէն հրաշքով ազատած հայ բեկորներուն հանդէպ: Կարծես ռուսերուն թշնամին հայերն էին եղած եւ ոչ թէ թուրքերը, որոնցմէ եթէ մէկը սպանուէր՝ խստորէն կը պատժէին հայերը: Այդ օրերուն ինծի համար պարզ եղաւ ռուսերուն դիմագիծը եւ հասկցայ, թէ անոնք նպատակ ունէին Հայաստանին տիրելու առանց հայութեան»:[14]

Ահա այսպիսի պայմաններում պետք է Մ. Թոռլաքյանը ընկերների հետ իրականացներ թուրք ոճրագործներին պատժելու իր ծրագիրը:

Տարերային վրեժխնդրության շրջան

Վրեժխնդրության ծրագիրը արդյունավորելու համար Մ. Թոռլաքյանը նախ՝ վերականգնում է խումբը, որի հենքի վրա կարճ ժամանակ անց ստեղծվելու էր «Հանձնախումբը», ապա ընկերների հետ խորհրդակցաբար կազմում հայտնի թուրք ոճրագործների մոտավոր մի ցանկ, որն ընթացքում լրացվում և խմբագրվում է: Ցանկում ընդգրկում են՝



Միսաք Թոռլաքյան

ա. այն թուրքերի անունները, որոնք, ըստ հասարակության մեջ տարածված կարծիքի, հայերի նկատմամբ վատ չէին տրամադրված, թեև կարող էր իրականում հակառակը լինել,

բ. այն թուրքերի անունները, որոնց մասին հասարակության մեջ վատ լուրեր էին տարածված:

Առաջին խմբի թուրքերին խնայելն ուներ երկու նպատակ. նախ՝ ժողովրդի մեջ ամրապնդվում էր այն համոզմունքը, որ հայերն անմեղներին չեն պատժում, երկրորդ՝ սրանց հետ Մ. Թոռլաքյանը կապեր է հաստատում և օգտագործում իր ծրագրերի իրականացման համար:

Երկրորդ խմբի թուրքերին պատժում էին առանց վարանելու. «Այսպիսիները շատ անգամ իրենց՝ թուրքերու միջոցով մաքրագործել կու տայինք»:[15]

Գործողություններն իրականացվում են երկու ուղղությամբ, ինչը պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Առաջին դեպքում իրենց ձեռքն ընկած թուրքին ոչնչացնում էին ռուսներից գաղտնի, եթե կար դրա հնարավորությունը, իսկ եթե դա անհնար էր, փորձում էին այդ թուրքին ռուսական հրամանատարությանը ներկայացնել որպես ապստամբ: Սակայն ռուսները, հասկանալի պատճառներով, հայերին շատ չէին վստահում, և այդպիսի իրավիճակներում իրենք էլ էին թուրք վկաների դիմում՝ հստակ պատկերացում

Թեհլիրյանը Թալեաթի դիակի առջև

կազմելու համար: Նման դեպքերում Մ. Թոռլաքյանը գտնում էր տվյալ թուրքի դեմ ցուցմունք տվող մեկ այլ թուրքի:[16]

Հայ վրիժառուները դիմում էին նաև այլ միջոցների. ձևանում էին ռուս զինվորներ, ձերբակալում որոնվող թուրքերին և գիշերները նրանց ոչնչացնում: Հնարավորության դեպքում դիմում էին ռուսական բանակում ծառայող հայ զինվորների օգնությանը: Մ. Թոռլաքյանը պատմում է նման մի դեպքի մասին: Մի օր երկու հայ վրիժառուներ՝ Հակոբը և Հովհաննեսը, Թոռլաքյանին են ներկայացնում երկու դարաբաղցի հայ զինվորի, ստանում են պատժի ենթակա թուրքերի մի ցանկ, միասին ձերբակալում են թուրք ոճրագործներին և գիշերը բոլորին ոչնչացնում:[17]

Հայերի նկատմամբ բռնություններով և ոճիրներով հայտնի թուրքերի մի ցանկ էլ Մ. Թոռլաքյանը հանձնում է Տրապիզոնի գաղտնի ոստիկանությանը՝ նրանց ներկայացնելով որպես ռուսական իշխանությունների դեմ գաղտնի կերպով ապստամբություն նախապատրաստողների: Հայերի նկատմամբ դրակտորեն տրամադրված թուրք Միքդադ Հասանբաշօղլուն հաստատում է Թոռլաքյանի խոսքերը: Գաղտնի ոստիկանությունը գոհ է մնում Թոռլաքյանի զեկույցից և նրա իրավասությունների շրջանակն ընդլայնում է՝ նրա տրամադրության տակ դնելով բավականաչափ դրամական միջոցներ:[18]

Այս իրադարձություններից հետո Թոռլաքյանը ինը հոգիանոց խմբով շարժվում է դեպի Գյումուշխանեի յայլաները, որտեղ որոշել էր պատժել կոտորածների հիմնական կազմակերպիչներին և բուն մասնակիցներին: Շարժվում են իրենց ազգակիցների ոսկորներով լեցուն ճանապարհներով և անցնում գործի. «Երեկոյեան արդէն հաւաքած էինք քառասունեօթը հոգի: Բոլորն ալ իրարու կապած դուրս բերինք ու ձորի մը մէջ անոնց հաշիւները մաքրեցինք, ճիշդ այնպէս՝ ինչպէս իրենք ըրած էին հայերուն:

Նոյն գիշերը վերադարձանք Սուլայի սարը: Յաջորդ օրը հոն ալ տասնըեօթը հոգի բռնեցինք եւ նոյն ձևով անոնց հաշիվը մաքրեցինք»:[19]

Վերադառնալով քաղաք՝ գաղտնի ոստիկանությանն է հանձնում աչքի ընկնող թուրքերի մի մեծ ցանկ, որոնց մեղադրում է թուրքական բանակի հետ գաղտնի կապերի և նրանցից զենք ստանալու մեջ: Թոռլաքյանի խոսքերը հաստատում են նաև հակահետախուզությունում աշխատող այլ հայեր և հույներ, որոնց հետ նախապես պայմանավորվել էր:

Անկազմակերպ վիճակի հաղթահարումից դեպի կազմակերպված վրիժառություն

Ռուսների կողմից Տրապիզոնի գրավումից հետո լեռներից իջած հայ ֆիդայիները, հատկապես երիտասարդ մարտիկները, ամենուր վրեժ էին լուծում թուրք ոճրագործներից. «Մեր երիտասարդութիւնը, լեռներէն քաղաք կամ գիւղ իջած օրերէն լծուեցաւ թուրք ջարդարարները, հայերու գոյքն ու ինչքը թալանողները, հայ կիներն ու աղջիկները բռնաբարող եւ առեւանգողները պատժելու եւ որբուկներ փնտրելու աշխատանքին»:[20] Ստեղծվել էր մի իրավիճակ, որը կարող էր վնասակար հետևանքներ ունենալ Մ. Թոռլաքյանի խմբի հետագա գործունեության համար, քանի որ ռուսական զինվորական իշխանությունը հայ վրիժառուների դեմ էր տրամադրում, ովքեր թուրքերի հետ հաստատել էին բնականոն կամ բարեկամական հարաբերություններ: Թուրքերը, բնականաբար, փորձում էին հայ վրիժառուների դեմ տրամադրել ռուսներին, որոնք առանց այն էլ հայերի նկատմամբ, մեղմ ասած, բարեկամական հարաբերություններով աչքի չէին ընկնում: Ավելին՝ հայերի և թուրքերի միջև խնդրահարույց իրավիճակներում ռուսները պաշտպանում էին թուրքերին. «Թուրքերը շատ շուտ հասկցած էին, թէ գրաւման բանակը բարեացակամ էր իրենց հանդէպ եւ կը պաշտպաներ զիրենք»:[21]

Մ. Թոռլաքյանը շուտ հասկացավ, որ պետք է այս խառը և վտանգներով հղի դրությունն արմատապես փոխել. «Առաջին գործս եղաւ վերջ տալ այս անկազմա-

կերպ դրութեան և ստեղծել կեդրոն մը, որուն գիտութեամբ եւ թելադրութեամբ միայն վրէժխնդրական աքտերը կատարուին»:[22] Այս նպատակով նա շրջանի ամենաեռեռինակավոր մարտիկներից ստեղծում է քսան հոգիանոց մի խումբ, որը պետք է համակարգեր բոլոր աշխատանքները, իսկ վրեժխնդրության բոլոր գործողությունները պետք է իրականացվեին միայն այս խմբի հավանությունից և հաստատումից հետո:

Խմբի առաջին գործերից մեկը եղավ Բաբերդի և Յաղմուր դերեի ճանապարհների վրա վերահսկողություն հաստատելը: Առաջին իսկ առիթով ոչնչացվում է նախ՝ ութ, իսկ ամբողջ օրվա ընթացքում՝ քառասուն թուրք: Խմբի առաջին օրվա հաջողությունը ահ ու սարսափ է տարածում ոճրագործների շրջանում, իսկ հայ վրիժառուների մեջ ամրապնդում հավատն ու վստահությունը խմբի նկատմամբ:

«Հանձնախմբի» ստեղծումը

Հաջողությամբ ավարտվող վրեժխնդրական գործողությունները նախապայման և հնարավորություն են ստեղծում դրանց աշխարհագրությունն ընդլայնելու և կարգապահությունն ամրապնդելու համար: Խումբը որոշում է ստեղծել մնայուն հանձնախումբ, որի համար գումարվում է հատուկ ժողով՝ խիստ գաղտնիության պայմաններում: Ժողովին մասնակցում են պատվիրակներ Սյուրմենեից, Ապիոնից, Կալաֆկայից, Կյուշանայից, Ծինկիլայից, Կրոմիլայից, Սկաֆիտայից, Ջիզակսայից, Մալայի տարածքի գյուղերից, Բարիանից, Վերանայից: Ընտրվում է ղեկավար հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

1. Միսաք Թոռլաքյան՝ Կյուշանայից,
2. Աբգար Չեփնյան՝ Ապիոնից,
3.Գաբրիել Մատինյան՝ Սյուրմենեից,
4. Համբարձում Չեփնյան՝ Կյուշանայից,
5. Միսաք Նուբարյան՝ Վերանայից:

Ժողովը որոշում է.

ա. «Յուցակագրել շրջանի ազդեցիկ թուրքերու անունները եւ նիւթեր ներկայացնել յանձնախումբին՝ հայերու հանդէպ անոնց կատարած վայրագութիւններուն մասին:

բ. Միաբեկումներու կատարման գործը յանձնել այնպիսի տղոց, որոնց մասին ոչ ժողովուրդ եւ ոչ ալ կառավարութիւնը կրնան կասկած ունենալ»:[23]

Ժողովը վճռում է նաև առաջին ահաբեկումները սկսել թուրքական հինգ գյուղերի մեջ ապրող ոճրագործներից: Հատկապես կարևորվում է բոլոր ահաբեկումները նույն օրը կատարելու հանգամանքը՝ թուրքերի վրա ահ ու սարսափ տարածելու համար: Որոշումն իրագործվում է շատ հստակ և ստանում լայն արձագանք: Ոճրագործների ցանկում էր նաև Դրոնա գյուղից մեկ հույն, որը գործակցում էր թուրքերի հետ: Թուրքերի մեջ մեծ սարսափ է ընկնում, որոնք իրենց տներից փախչում են ավելի ապահով տեղեր, «Սակայն մեր վրեժխնդրութենէն չէին ազատեր»:[24]

Հետագա ահաբեկումների ընթացքում օգտագործվում է նաև որպես ռուսական բանակի զինվոր ներկայանալու և ոճրագործներին կալանավորելու, ապա գիշերով նրանց ոչնչացնելու փորձված եղանակը: Պատահում էին դեպքեր, երբ վրիժառուները, ձերբակալված ոճրագործին ազատելու խոստումի դիմաց, ինչը երբեք չէին անում, զինաթափում էին նրա հարազատներին, ընկերներին, համագյուղացիներին:

Ռուսական զինվորական հակահետախուզությունն իր վերաբերմունքը թուրքերի նկատմամբ ճշտում էր՝ հատկապես հենվելով հայերի և հույների տրամադրած նյութերի և զեկույցների վրա, որոնց համաձայն՝ թուրքերը նախապատրաստվում էին ապստամբության: Այս համոզմունքն ամրապնդվում է նաև այն իրողությամբ, որ ռուսական հրամանատարությունը նման տեղեկություններ ստանում էր նաև ազդեցիկ և ռուսներին «հավատարիմ» թուրքերից, որոնք, ըստ էության, Մ. Թոռլաքյանի և հույների առաջնորդ Իստիլ աղայի մարդիկ էին. «Ռուսական զինուորական հակահետախուզութիւնը, իր ձեռքին տակ ունեցած նիւթերով, զորս հայերս եւ յոյներս էինք հայթայթած, կը խորհէր թէ թուրքերը կրնան եւ ի վիճակի են ապստամբութիւն առաջ բերել»:[25]

Նման փայլուն գործողություններից հատկապես հիշատակելի է որպես Դրոնայի հայերի դահիճ հռչակված Գյումրյուքչիօղլի Հասան աղայի և նրա երեք եղբայրների ոչնչացումը ռուսական զորաջոկատի կողմից: Թոռլաքյանին հաջողվել էր ռուսական հրամանատարությանը համոզել, որ նրանք իրենց զինյալ ջոկատներով պատրաստում են ապստամբություն, ինչը հաստատել էին Թոռլաքյանի գործակից ազդեցիկ հույն և թուրք վկաները: Սրանց մեծ ուժի դեմ ռուսները դուրս են բերում 800 զինվոր, որոնցից 400-ին 50 հայ մարտիկներ առաջնորդում են դեպի Յոմուրիայի գյուղերը, իսկ մյուս 400-ը՝ Սարգիս Ջեքիարյանի և սկաֆիտացի Բյուզանդ Ասլանյանի առաջնորդությամբ, շարժվում է դեպի Ճոշարա և Սամարուքսա գյուղերը: Լուսադեմին ոճրագործ եղբայրներն ու նրանց մարտական ուժերը ոչնչացված էին:

Այս դեպքից հետո ռուսների մեջ թուլանում է այն համոզմունքը, թե թուրքերի հակառուսականությունը մեծապես պայմանավորված է հայերի և հույների թրքատյացությամբ: Իսկ ամենակարևոր ձեռքբերումը, ըստ Թոռլաքյանի, լինում է այն, որ «հակահետախուզական բաժնին հետ համաձայնութեան եկանք, որ միայն մեր մարդոցմով այսուհետեւ հետախուզութիւն կատարենք եւ կարիք զգալու պարագային՝ զինուորական իշխանութեան դիմենք օժանդակութիւն ստանալու համար»:[26] Այս համաձայնությամբ փաստորեն լիովին ազատվում էին հայկական հետախուզական խմբի անդամների ձեռքերը, իսկ պատժիչ միջոցների զինանոցը՝ մեծանում:

«Հանձնախումբ»-ն իր ցուցակներում ճշտված հանցագործներին կամ նրանց զինված խմբավորումներին հաճախ հանում է միմյանց դեմ՝ մեկ ոճրագործի ձեռքով ոչնչացնելով մյուսին:

Ռուսական զորքի հեռացումը և «Հանձնախմբի» գործունեության ավարտը

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում սկիզբ առած գործընթացների հետևանքները լինում են բանակի բարոյալքումը, կազմալուծման վտանգավոր դրսևորումները, որոնք շուտով հասնում են կովկասյան ճակատ: Զորքերը, որ վերածվել էին կամ անկազմակերպ զանգվածների, կամ թալանչիական խմբավորումների, շուտով լքում են ճակատը: Անգամ այս խառնակ պայմաններում, երբ թուրքերն աշխուժացել էին և նույնիսկ տարբեր վայրերում հարձակումներ էին գործում հեռացող ռուսական զորքերի վրա, հայ վրիժառուները գործում էին խիստ կազմակերպված և վերջին հնարավորություններն էին օգտագործում թաքստոցներից դուրս եկած թուրք ջարդարարներին ոչնչացնելու համար:

Բազմաթիվ դեպքերից նշենք մեկը, որ կատարվել է Պլատանայի մերձակա մի գյուղում, որը դարձել էր հայերի դահիճների հավաքատեղի: Տեղեկանալով հերթական հավաքի մասին՝ Թորոլաքյանի խումբն ուղևորվում է այդ գյուղ և, ներկայանալով որպես պետական հանձնարարությամբ եկած պաշտոնյաներ, տարբեր տեղերից եկած բազմաթիվ թուրքերի հավաքում են սրճարանում, հույներին, իբր որպես անցանկալի տարրերի, հրամայում են դուրս գալ սրճարանից. «Սրճարանի մէջ մնացին միայն թուրքերը, որոնք այդ շրջանի հայոց տեղահանության ժամանակ սարսափելի հրեշութիւններ կատարած էին: Այդ սրիկաներուն հարցը մաքրելէ ետք վերադարձանք»:[27]

Շրջակա բնակավայրերի թուրք և հույն բնակչությունը դեռևս այս դեպքի տպավորության տակ էր, երբ լուրեր են տարածվում, որ հայերը ջարդեր են կազմակերպել Պլատանա քաղաքում, ուր թուրքական և ռուսական զորքերը իրար էին հանդիպել գրկախառնությամբ, որին պիտի հաջորդեր ռուսների հեռացումը շրջանից. «Բայց այդ սրտաշարժ տեսարանի ժամանակ, - իր հուշերում գրում է Վ. Մինախորյանը, - յանկարծ պայթել է քաղաքի գլխաւոր զինամթերանոցի պահեստը»:[28]

Ռուսական զորքերը շտապում էին հնարավորինս շուտ հեռանալ Տրապիզոնից, թաքստոցներից դուրս եկած, սակայն դեռևս բավականաչափ զգուշավոր թուրք ջարդարարներն օր առաջ շտապում էին զբաղեցնել ռուսների տեղը, իսկ հայ վրիժառուներն ամեն ինչ անում էին առավել շատ հանցագործների ոչնչացնելու համար:

Մինչև վերջին պահը թե՛ քաղաքը պահպանող մարտական խմբերը, թե՛ հայ վրիժառուների խումբը շարունակում են իրենց գործը, և միայն 1918 թ. սկզբին, երբ ռուսական զորքը հեռացել էր, իսկ հայերի վերջին խլյակներին հաջողվել էր նավերով տեղափոխել ռուսական ծովափնյա քաղաքներ, «Հանձնախմբի» անդամները բազում դժվարություններից և դեգերումներից հետո ափ են իջնում Բաթումում՝ այնտեղից Արևմտյան Հայաստան գնալու մտադրությամբ:

Ամփոփում

«Հանձնախումբը», որն, ըստ էության, Մ. Թորոլաքյանի վրիժառու խումբն էր, Տրապիզոնի նահանգում գործեց մոտ երկու տարի՝ 1916-1918, և ոչնչացրեց Հայոց ցեղասպանության հարյուրավոր[29] մասնակիցների՝ պետական պաշտոնյաների, երիտթուրքական կուսակցության ներկայացուցիչների, ոստիկանական և զինվորական բարձրաստիճան սպաների, թուրք ավազակախմբերի և քուրդ չեթեների խմբավորումների, շարքային մարդասպանների…

Այս համեստ հոդվածով փորձեցի անդրադառնալ նրա գործունեության որոշ դրվագներին, սակայն համոզված եմ, որ «Հանձնախմբի» գործունեության հանգամանալից ուսումնասիրությունն սպասում է իր հետազոտողներին: ■

Հղումներ

1 Կառույցի կազմակերպիչն ու ղեկավարը անվան մասին իր «Օրերուս հետ» հուշագրության մեջ ոչինչ չի խոսում, այլ աղբյուրներում նույնպես որևէ հիշատակություն չկա, ուստի կարելի է ենթադրել, որ կառույցն անուն չի ունեցել:
2 Թորոլաքեան Մ., «Օրերուս հետ», Պոսթըն, 1953, «Օրերուս հետ», Պէյրութ, 1963, «Օրերուս հետ», Թեհրան, 1982, «Օրերուս հետ», Պէյրութ, 2001:
3 Յովակիմեան Յ., «Պատմութիւն հայկական Պոնտոսի, 1967, Պէյրութ:
4 Թորոյեան Գ., Միսաք Թորլաքեան, https://asbarez.am/archives/450816: Ալվրցյան Հ., Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. ԴՐՕՇԱԿ, (Մաս առաջին, 2024, թիվ 11: Մաս երկրորդ, 2024, թիվ 12: Մաս երրորդ, 2025, թիվ 2: Մաս չորրորդ, 2025, թիվ 4): Ալվրցյան Հ., Միսաք Թորլաքյանը ազգային-ազատագրական պայքարի գործիչ և վրիժառու (Մաս առաջին, ԴՐՕՇԱԿ, 2025, թիվ 6: Մաս երկրորդ, ԴՐՕՇԱԿ, 2025, թիվ 7):
5 Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան, հտ. 1, 2005. էջ 435:
6 Կառավարության որոշմամբ կայսրության այլ նահանգներից, հատկապես Բալկաններից բերված մուսուլմաններ, որոնց բնակեցնում էին տեղահանված և աքսորված հայերի տներում:
7 Յովակիմեան Յ. (Արշակունի), նշվ. աշխ., էջ 372:
8 Նույն տեղում:
9 Թորոլաքյան Մ., նշվ. աշխ., էջ 271:
10 Թորոլաքյան Մ., նշվ աշխ., էջ 278:
11 Նշվ. աշխ., էջ 365:
12 Թորլաքեան Մ., Նշվ. աշխ., էջ 366:
13 Կոմիտեի աշխատանքների մասին մանրամասն տես Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս-1917 թ. փետրվար), Երևան, 2015, էջ 344-363:
14 Թորոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 367-368:
15 Թորոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 366:
16 Նույն տեղում:
17 Նույն տեղում:
18 Նշվ. աշխ., էջ 369:
19 Նույն տեղում:
20 Յովակիմեան Յ., նշվ. աշխ. Էջ 281:
21 Նույն տեղում:
22 Թորոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 374:
23 Նշվ. աշխ., էջ 375:
24 Նշվ. աշխ., էջ 375:
25 Թորոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 385:
26 Նշվ աշխ., էջ 389:
27 Թորոլաքեան Մ., նշվ. աշխ., էջ 403:
28 Մինախորեան Վ., 1915 թուականը. Արհաւիրքի օրեր, Վենետիկ, Ս. Ղազար, 1949, էջ 435:
29 Այս թիվը հստակեցման կարիք ունի. չափազանցություն չի լինի, եթե այն անցնի հազարը:

Հայերի ազգային առաջին բողոքի ձայնը Կանադայում. արժանապատվության պայքար օտար հողի վրա

Արմինե Մուքոյան
Մանկավարժ, սփյուռքագետ

Տարաբնույթ աղբյուրների համաձայն, Կանադայում հայկական գաղութի ձևավորումը սկսվել է 1880–1890-ականներին, երբ Կանադա են մեկնել ուսանողներ, վաճառականներ և գյուղատնտեսներ, հիմնականում Արևմտյան Հայաստանի նահանգներից և Կիլիկիայից:

Հայ գաղթականների առաջին կենտրոնները եղել են Օնտարիոյի Բրանթֆորդ, Համիլթոն, Սենթ Քեթրինզ քաղաքները: Այստեղ նրանք զբաղվել են ամենածանր սևագործ բանվորությամբ՝ ձուլարաններում, գործարաններում: Նրանք Կանադա չէին եկել հաստատվելու, այլ նրանց նպատակը պարզապես բավական գումար վաստակելն էր, որպեսզի կարողանային վերադառնալ հայրենիք, մարել կուտակած պարտքերը, վճարել զինվորական հարկերից ազատման վճարը և վաստակածը ներդնել իրենց տնտեսություններում:

Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը խորտակեց հայրենիք վերադառնալու բոլոր հույսերը, որին ավելացավ նաև Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում թուրքական իշխանությունների կազմակերպած հայ բնակչության զանգվածային բնաջնջումը:

Չնայած շատերն, այնուամենայնիվ, վերադարձան հայրենիք՝ իրենց հարազատներին գտնելու նպատակով, սակայն ենթարկվեցին բռնագաղթի կամ ֆիզիկական ոչնչացումից խուսափելու նպատակով հարկադրված լքեցին օջախները և դարձան գաղթական:

Հանգամանքների բերումով որքան նվազել է հայրենիք վերադարձի հույսը, այնքան նրանք սկսել են ինքնակազմակերպվել որպես համայնք, ակտիվորեն մասնակցել օտար երկրում հայության իրավունքների պաշտպանության գաղափարական գործունեությանը:

Կանադական միջավայրում նրանք ստիպված են եղել շատ բան սովորել՝ հատկապես երեխաների դաստիարակության գործում:

Կանադայում հայերն ունեցել են ներքին կուռ համախմբվածություն, համայնքում գործել է չգրված օրենք՝ դժվարին պահերին միմյանց օգնություն ցուցաբերելը եղել է բարոյական պարտավորություն:

Կանադայում հայ համայնքի կազմակերպված գործունեության պատմությունը սերտորեն կապված է նաև Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) հետ, որի գործունեությունը սկսվել է գրեթե համայնքի ձևավորմանը զուգահեռ: Ըստ ՀՅԴ արխիվների, առաջին կոմիտեն հիմնադրվել է Բրանթֆորդում 1902 թ.:[1] 1907 թվականին ՀՅԴ-ն Կանադայում արդեն ուներ կոմիտեներ Համիլթոնում, Բրենթֆորդում, Սենթ Քաթերինսում և Կալթում: Հիմնական գործունեությունը եղել է համայնքը համախումբ պահելը, աջակցելը նրա կարիքներին և մշտարթուն պահելը հայրենիք վերադառնալու գաղափարը:

1907 թ. «ՀԱՅՐԵՆԻՔ» թերթի մարտի 2-ի հրապարակումից իմանում ենք նույն թվականին Համիլթոնի և Բրենդֆորդի ՀՅԴ կոմիտեների հրապարակային ժողովների մասին, ուր ներկայացվում էր Հայաստանի անցյալն ու ներկան և պատմական փաստերով հաստատվում, որ. «Մեր փրկութեան յոյսը ըլլայ զէնքը և ուժը» և որ. «Մեր բոլորին երջանկավայրը միմիայն պաշտելի Հայաստանն է և եթէ ծնունդս օտար երկիր եղած է, իմ արիւնս հայ քաջերու արեան հետ խառնուելով Հայաստանի լեռներն ու դաշտերը պիտի ներկէ: Ուրեմն մեր միակ յոյսը յեղափոխութիւնը թող ըլլայ ու ձեռք ձեռքի տալով կռուինք բռնակալ թուրքին դէմ փրկելու համար թշուառ հայրենիքը: Եթե չծնանք ազատ, գէթ մեռնինք ազատ»:[2]

Արդեն 1914 թ. համայնքում բացվում է հայկական հրաձգային ակումբ, որի մասին Brantford Daily Courier, November 25, 1914-ի համարը գրում է. «գաղափարն է ստեղծել հրացանային ակումբներ ժողովրդի համար բոլոր հարակից քաղաքներում, որպեսզի նրանք պատրաստ լինեն, երբ հնչի կանչը պայքարելու իրենց ճնշող թուրքի դեմ: Հայերն ակնկալում են,

որ ազատության համար պայքարելու կանչը կարող է հնչել ցանկացած օր, և նրանք պատրաստ են դրան: Նրանց կարգախոսը՝ «Մահ կամ ազատություն», փորագրված է յուրաքանչյուր հայի սրտում՝ խոր ատելությամբ թուրքի հանդեպ: Այս խանդավառությունն ու վճռականությունը ոչ մի զարմանալի բան չէ, որ հայերը մեծ եռանդ ու նվիրումով են մասնակցում իրենց մարզումներին»:[3]

Բացի ռազմական պատրաստությունից, հայ համայնքն ակտիվ է եղել նաև հասարակական կյանքում: 1915-ի մայիսին Բրենթֆորդում լույս է տեսնում «Ազատ Հայաստան» հրատարակությունը, որը նպատակ ուներ անդրադառնալու հայ համայնքին հետաքրքրող հարցերին, մասնավորապես՝ Հայաստանը թուրքական լծից ազատագրելու շարժմանը:

Համայնքի ձևավորման սկզբնական շրջանում, երբ չի եղել տեղական հայ մամուլ՝ գրքերը, պարբերականները, թերթերը բերել են Բոստոնից, Նյու Յորքից, Ժնևից, Կոստանդնուպոլսից, Թիֆլիսից, Վենետիկից և Վիեննայից: Թերթերը և պարբերականները ծառայել են նաև որպես դասագրքեր:

Համայնքում ամենաընթերցվող թերթերն են եղել ՀՅԴ խոսնակ համարվող «Հայրենիք»-ը և «Երիտասարդ Հայաստան»-ը: Վերջինը համարվում էր Հնչակյան կուսակցության ձայնը:

Գաղթական հայությանն ազգային խնդիրներին ծանոթացնելու, հայրենիքից լուր առնելու կարևոր և գրեթե միակ միջոցը, ինչպեսև հայրենիքի կարիքներին հասնելու ձայնը թերթերն էին:

Բրենթֆորդի տեղական թերթերում՝ Brantford Daily Courier, The Brantford Daily Expositor, 1902-1918 թթ. համարներում հանդիպում ենք հայերի կյանքի մասին լուսաբանումների, ինչպես օրինակ 1906 թվականին 100 հայ բանվորների գործադուլը՝ «Malleable Iron Works»-ում, աշխատավարձի հավելում պահանջելու հարցով: Կարդում ենք, թե ինչպես են սկզբնական շրջանում նրանք բախվել նաև ռասայական խտրականության՝ տեղական աշխատակիցների կողմից, հատկապես նրանց հակազդելու պատճառով:[4]

Իսկ ահա 1915 թ. ձուլարանի հայ բանվորները սարսափով լսում են, թե ինչպես են Օսմանյան կայսրությունում կոտորում իրենց հայրենակիցներին: Աշխատելով արդեն իսկ դժվար պայմաններում՝ երկաթի ձուլման ծանր աղմուկի մեջ, նրանք վայր են դնում իրենց գործիքները և հրաժարվում են աշխատել նույն գործարանում աշխատող թուրք բանվորների հետ:[5]

Աշխատավայրում նման հանդուգն վարքագիծը հակասում էր նրանց համոզմունքին. նրանք մտածում էին, որ օտար հողի վրա պետք է լռեն, հարմարվեն, շարունակեն աշխատել և մնալ աննկատ՝ միայն թե գոյատևեն, բայց նրանք ընտրեցին արժանապատվությունը՝ ոչ թե վախը:

Քանի որ այդ ժամանակ ձուլագործների մեծ մասը հայեր էին, նրանք այդ քայլով փաստացի դադարեցրին գործարանի աշխատանքը: Նույնիսկ աշխատանքը կորցնելու կամ արտաքսվելու սպառնալիքը չվախեցրեց և չկանգնեցրեց նրանց: Արդյունքում արտադրությունը կանգնեցվեց, իսկ գործարանի ղեկավարությունը հայտնվեց ճնշման տակ և, ի վերջո, ստիպված եղավ զիջել և հեռացնել թուրք բանվորներին:[6]

Երբ օրահացով հազիվ ապրող հայ բանվորները վայր դրեցին իրենց մուրճերը, հակազդեցին ռասիզմին, խոսեցին իրենց իրավունքներից, հենց այդ պահին Կանադայում առաջին անգամ հնչեցին հայության բողոքի ձայները: Նրանք կանադական հասարակության մեջ բարձրացրին իրենց խնդիրը, պաշտպանեցին իրենց արժանապատվությունն ու ուժեղացրին ազգային հավաքական ինքնագիտակցությունը: Այս ամենը ցույց է տալիս, որ անգամ օտար հողի վրա հայը կարող է պահպանել իր ազգային ինքնությունն ու պաշտպանել սեփական արժանապատվությունը:

Փաստորեն, ձուլարանի աղմուկի մեջ նրանց բողոքը եղավ սահմանափակ, բայց խորը իմաստով հեղափոխություն. նրանք հիմք դրեցին այն համարձակ ոգու ծնունդին, որի հիմքի վրա հետագայում պետք է ձևավորվեր կանադահայ համայնքը, ու հենց այդ պահից հայը Կանադայում այլևս չեղավ պարզապես գաղթական, նա սկսեց վերածվել իր արժանապատվությունն ու ինքնությունը գնահատող և դիմացինին հարգել պարտադրող հայի՝ հանուն իր ժողովրդի, իր պատմության և իր ապագայի: ■

Ով մոռանա…

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

1970-ին թուրքական իշխանությունները Հայոց ցեղասպանությունը հերքելուց անցան հերթական հարձակման, և Լիբանանում Թուրքիայի դեսպանությունը դատական գործ հարուցեց «Ազդակ»[1] և «Զարթօնք»[2] օրաթերթերի արտոնատերեր Հայկ Պալյանի (1897-1987) և Բարունակ Թովմասյանի (1910-1991) դեմ: Դատավարությունը, ոմն զարմանք, ավարտվել է հայերի փայլուն հաղթանակով, ընթացել է 1970 թ. մայիս-հուլիս ամիսներին, իսկ, որպես պատճառ, ներկայացված էին այդ թերթերում հրատարակված մի քանի հոդվածներ.

ա) «Ազդակ»-ի 1968 թ. հոկտեմբերի 14-ի համարում տպագրված է Նշան Պեշիկթաշլյանի (1898-1972) «Թրքական վիրաբուժութիւնը» հոդվածը. «Թուրքիոյ մէջ ալ կ'ուզեն կատարել պատուաստում սրտի: Գործին գլուխը կեցած է վիրաբոյժ տոքթոր Սիյամի Էրսէք՝ աջակցութեամբ իր օգնականներուն:

Առողջապահական նախարար տոքթոր Վէտատ Ալի Էօզքան իր հաւանութիւնը յայտնած է:

Հայտար փաշայի հիւանդանոցին մէջ 34 հոգիէ բաղկացած բժշկական խումբ մը կազմ ու պատրաստ է անցնելու համար գործի:

Բարերար որոշում մըն է այս: Պէտք է բոլոր թուրքերուն սիրտերը տեղէն հանել ու տեղը տնկել նոր սիրտեր:

Անուրանալի է, որ թուրքերը ունին սիրտ գայլի: Գոնէ շան սիրտ տնկելու է անոնց կուրծքին տակ՝ զանոնք ընտելացնելու համար:

Այնուհետև շան սիրտով թող հաչեն կամ զիրար խածնեն: Բայց հանգիստ թող թողուն հովիւները և ոչխարները:

Եթէ շան սիրտ ունենան, հաւանաբար աւելի կը սիրուին ամերիկացիներու կողմէ, որոնց մէջ շնապաշտները շատ են, շնապաշտները շատ հարուստ են և յաճախ մեծ ժառանգութիւններ կը թողուն իրենց ամենասիրելի շուներուն:

Թուրքերը աւելի պիտի սիրուին նաև համայնավարներուն կողմէ, որոնք զիրենք կրնան մարզել ու գործածել սահմաններու հսկողութեան համար, որպէսզի ոչ ոք չփախչի դրախտէն՝ դժոխք մտնելու համար:

Ուրեմն այս գործէն ալ պիտի շահին բախտաւոր թուրքերը: Բարոյապէս ալ պիտի շահին՝ դադրելով գայլ ըլլալէ, դառնալով շնասիրտ, հաւատարիմ՝ իրենց ուտելիք միսերուն ու ոսկորներուն»:

բ) «Ազդակ»-ի 1969 թ. ապրիլի 23-ի համարում տպագրված է Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986) «Յաղթանակի տօնը»[3] հոդվածը. «Ֆրանսան թուրքերուն յանձնեց մեր Կիլիկիան, ու Անգլիան ազատ արձակեց իր գերեվարած 65 000 թուրք զինուորներն ու Մալթայի ոճրագործներուն ոհմակը:

Յետոյ նստեցան Նիւրէմպէրկ խաղալու:

Իրաւ որ միւս ազգերը ունեցան իրենց Նիւրէմպէրկը:

Մենք էր, որ մնացինք բացը:

Ստիպուած եղանք մեր Նիւրէմպէրկը մեր ձեռքով սարքել:

Խան Խոյսկի, Ջիւանշիր, Թալաաթ, Սայիտ Հալիմ, Պեհաէտտին Շաքիր, Ճէմալ Ազմի, քանի մը մանրուքներ…

Պէտք էր հաւասարակշռել:

Ու հաւասարակշռեցինք:

Մեղքը մերն էր…

Ու այն գրիչները, որոնք դարերով այս ժողովուրդի մարտիրոսագրութեան պատմութիւնն էին արձանագրած, նոր էջ մը բացին ու հպարտութեամբ գրեցին՝

Սարդարապատ,

Բաշ Ապարան,

Ղարաքիլիսէ,

Դրօ, Սմբատ, Սեպուհ, Անդրանիկ:

Անկախ Հայաստան:

Յարութիւն առինք:

Այսօր կանք ու վաղը նորէն պիտի ըլլանք:

Մենք կուշտ ենք, իրենք՝ մեր դահիճները՝ անօթի:

Մենք առողջ ենք, իրենք, իրենց վկայութեամբ՝ հիւանդ:

Մենք քաղաքակրթութեան պատմութիւն ունինք, իրենք՝ ոճիրի:

Մենք ողորմութիւն կու տանք, իրենք յաւիտենական մուրացիկ են դարձած:

Մեր Հայրենիքն ու իր սահմանները լոյսերու մէջ կը շողան, իսկ իրենց երկիրը խաւարի մէջ է:

Մենք համաշխարհային համբաւով գիտնականներ ունինք, իրենք՝ համաշխարհային համբաւով ոճրագործներ:

ԶԱՐԹՕՆՔ

Օրաթերթ

Ալ թուեմ…

Կարծեմ՝ կը բաւէ:

Բայց արդար ըլլալու համար պէտք է ընդունիլ, թէ իրենք ալ բան մը տուած են աշխարհին…

Ցեղասպանութեան գիւտը իրենցն է:

Իրենք եղած են զայն առաջին անգամ գործադրողները, երբ դեռ այդ բառը գոյութիւն իսկ չունէր բառարաններուն մէջ»:

գ) «Զարթօնք»-ի 1970 թ. ապրիլի 24 և 26-ի համարներում լոյս է տեսել Վերապատվելի Ե. Գ. Ճոնազյանի «Հայ ազգին խաչելութիւնը և յարութիւնը» ծավալուն հոդվածը: Նույն թերթի 1970 թ. մայիսի 17-ի համարի ««Զարթօնք»-ի դէմ բացուած դատը» խորագրի տակ տպագրված «Ինչո՞ւ կ'ամբաստանուինք» խմբագրական հոդվածում ներկայացված են այս հոդվածի այն հատվածները, որոնք «վեր առնուած են իբր ամբաստանութեան կէտեր»՝

1. «Որովհետև թուրքերը ծոյլ, անպաշար, անհաւատարիմ, աղտոտ և գող էին, իսկ հայերը՝ աշխատասէր, հաւատարիմ, մաքուր և ազնիւ»:

2. «Դարձեալ թուրքին ձեռքին տակ ապրած են քրիստոնեայ և մահմետական շատ ազգութիւններ՝ հայեր, յոյներ, պուլկարներ, սերպեր, ասորիներ, արաբներ, քիւրտեր, տիւրքիներ… Բայց անիկա անոնցմէ ոչ մէկուն հետ կրցած է խաղաղութեամբ ապրիլ. անոնց ամէնքն ալ հալածեց, կողոպտեց և ջարդեց: Իրականութեան մէջ, թուրքը մարդկութեան անէծքն է: Արիւն ծծող ստրուկն է»:

3. «Իսկ եթէ բարեշրջութեան օրէնքով մարդը կենդանիէն յառաջ եկած է, չեմ կրնար դասաւորել, թէ ո՛ր գազանէն յառաջ եկած է: Որովհետև գազանը աւելի գութ ունի, քան թուրքը»:

4. «Շան չափ զգացում չունեցող այս ցեղը ուսկի՞ց յառաջ եկած է: Զգա՛ր բարով»:

Խմբագրականն ավարտվում է այսպես. «Մեր տեղ պիտի պատասխանէ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ»:

«Զարթօնք»-ի 1970 թ. մայիսի 20-ի խմբագրականը վերնագրված է «Մեր դատը հայ ժողովուրդին դատն է»: «Ծանօթ է, թէ մամուլի երկու օրկանները,– կարդում ենք այդ հոդվածում,– ամբաստանուած են Լիբանանի և հետևաբար արաբական աշխարհի «բարեկամ» թուրք պետութեան նախագահին դէմ անուանարկիչ արտայայտութիւններ կատարած ըլլալու բարոյական մեղքով:

Յատկանշական է, որ հայ թերթերու դէմ բացուած այս դատը ունենայ բարոյական մեկնակէտ և նշանակութիւն: Կարելի՞ է երևակայել ասկէ աւելի ընդվզեցուցիչ արարք և խախուտ հիմնակէտ, երբ նկատի ունենանք, թէ այս դատը կը բացուի պահանջքովը պետութեան մը, որ կը կոչուի Թուրքիա:

Պատմութիւնը իր անջնջելի խարանով կը վկայէ, թէ 20-րդ դարու այս կէսերուն Թուրքիա կը հանդիսանայ այն միակ պետութիւնը, որ իրաւունք չունի բարոյական կեցուածքներու մասին արտայայտուելու, ո՛ւր մնաց՝ այդ հիման վրայ նոյնիսկ դատախազ կանգնելու…»:

«Ազդակ»-ի 1970 թ. մայիսի 14-16-ի, 18-23-ի, հունիսի 2-ի և 11-ի, հուլիսի 13-ի համարներում այս դատի մասին բազմաթիվ հոդվածներ են տպագրված՝ «Հայկական դատին համամարդկային բնոյթը» խորագրով: Նույն թերթի 2014 թ. ապրիլյան համարներում « «Ազդակ»-ի ութսունտեօթ տարիներու ծառայութեան ընդմէջէն» խորագրի տակ ներկայացված են այդ հոդվածները:

«Երիտասարդ հայ» կիսամսյա պարբերականի 1970 թ. 14-րդ համարում (հունիսի 27) տպագրված է հայկական երկու թերթերի դատապաշտպան, լիբանանցի ճանաչված փաստաբան Մոհսեն Սլիմի «Հայ մամուլի դատը» հոդվածը:

«Ալիք»-ի 1970 թ. հունիսի 1-2-ի համարներում ««Ազդակ»-ի և «Զարթօնք»-ի դէմ բացուած դատի առթիւ» խորագրի տակ տպագրված է Բաբկեն Փափազյանի (1915-1990) «Երբ գիտակից է ժողովուրդը» ծավալուն հոդվածը՝ նվիրված հայության՝ Բեյրութում և ամենուր ծավալած բողոքի ցույցերին. «…Դատին արդիւնքը չէ, որ արժէք մը ունէր. դատ բանալու դիմումն իսկ էր հիմնականը, որ ոտքի հանեց հայ ժողովուրդը մէկ մարդու պէս…

Ժողովուրդը ըմբոստեց իսկոյն, արագօրէն, ինքնաբերաբար, թէ նման արարքի մը արտաքին անՆշանութեան տակ թաքնուած էր բուն հարցը՝ ոճիրը, հայուն հանդէպ գործուած ոճիրը ծածկելու, մերժելու հարցը…

… Անընկճելի է ժողովուրդ մը, երբ գիտակից է ան:

Աշխարհացրիւ հայութեան ամէն մի անդամը այսօր Պէյրութի մէջ տեղի ունեցած ժողովրդական միահամուռ և միակամ ելոյթին մէջ պէտք է տեսնէ փաստը հայ ժողովուրդի դիտողութեան, պէտք է գայ ինքը այդ գիտակցութեան և աւելցնէ ուժը իր ազգին, դառնայ ինքը անընկճելիօրէն հայ և վերածէ իր ազգը անընկճելի ազգի մը:

Այն ատեն մեր մեռելները պարապի մեռած պիտի չըլլան, և պիտի գայ օրը յաղթութեան»:

Արամ Հայկազը պաշտպանական ճառի փոխարեն «Ազդակ»-ի 1970 թ. հունիսի 24-ի համարում տպագրել է «Եթէ կարենայի հոտ[4] ըլլալ» հոդվածը. «Վիրաբուժական գործողութեան մը հետևանքով, դեռ կէս մարդ եմ ու հաւանաբար չեմ կրնար օդանաւ մը ցատկելով յուլիս 1-ին դատավարութեան ներկայ ըլլալ: Եթէ կարենայի այդ բանն ընել, դատավարութեան օրը պիտի գայի սրահ, նստէի առաջին կարգի նստարաններէն մէկուն վրայ, յարմար առիթով մը մատս վերցներով՝ խօսք պիտի խնդրէի պարոն նախագահէն կամ դատաւորէն, ներկայացնէի ես ինծի՝ իբրև ամբաստանութեան տակ եղող յօդուածին հեղինակը ու խնդրէի թոյլտուութիւն, որ երդման տակ կեանքիս երեք օրերուն պատմութիւնը ընեմ դատարանին մէջ:

– Պարոն դատաւոր, – պիտի ըսէի պաղատագին,– տասը րոպէ, միայն տասը րոպէ ժամանակ տուր ինծի, որ խօսիմ Ձեր ու ներկաներուն առջև:

Ու եթէ խնդրանքս լսուէր, պիտի ըսէի.

– Խնդրեմ բերէք եօթ անգամ եօթ Աստուածաշունչ, որ ձեռքս վրան դրած՝ խօսիմ, որ հաւատաք, որովհետեւ ինչ որ պիտի ըսեմ, իբրեւ մարդ, բանականութիւն ու սիրտ ունեցող մարդ, չէք կրնար հաւատալ:

Ու պիտի ըսէի. «Հազար ինը հարիւր տասնեւհինգ՝ գարնանավերջն էր, հաւանաբար յունիս ամսու 29-րդ օրը, երբ մեզ ճամբայ հանեցին մօտակայ գիւղը՝ մեր ծանօթներուն եւ ազգականներուն մօտ տանելու անունով, բայց ճամբան սուինները ստիպեցին ուղղութիւնը փոխել ու անցնիլ զօրանոցին առջևէն, ուր մեզ վերստին քննութենէ անցուցին ու ինձմէ երկու տարու մեծ եղբայրս[5] վար դնելով՝ գնդակահարեցին: Իրենցմէ տասը քայլ հեռացած էինք, երբ պատահեցաւ այդ արարքը, ու մայրս ցաւէն ու կսկիծէն քիչ մնաց ուշաթափուէր: Վեց ժամ անընդհատ քալեցինք լեռներու և բլուրներու վրայէն, մինչեւ որ արեւը մար մտաւ: Յետմնաց կին մը, որ կը բողոքէր, թէ ալ չի կրնար քալել, «Աղէկ, հոս նստէ՛ ու հանգչէ՛» ըսելով՝ թոյլատրեցին, որ նստի: Ու մինչ ան կ՚օրհնէր արտօնողները, ժանտարմ մը կոնակէն գնդակահարեց զայն: Մահը եղաւ վայրկենական ու առանց տառապանքի: Կ՚ընդունիմ, թէ գթութեան արարք էր այս…

Գիշերեցինք ձորի մը մէջ: Կէս գիշերին քանի մը զէնք արձակեցին ու եկան ըսել մեզի, թէ «Կողոպտիչներ էին եկած ու զանոնք վռնտեցինք: Ձեր երախտագիտութիւնը ցոյց տալու համար յարմար չէ՞, որ հանգանակութիւն մը ընելով՝ մեզի տաք….»:

Տուինք, մինչեւ որ բաւականացան:

Յաջորդ օրը՝ կէսօրէ առաջ, Աղուանիս հասանք: Մեզ գիւղ չմտցուցին, լեցուցին ոչխարներու մակաղատեղիի մը մէջ ու մէկիկ-մէկիկ դուրս բերելով՝ վրանիս խուզարկեցին ու առին, ինչ որ ունէինք թանկարժէք: Գիշերը ճրագով մտան մեր մէջ ու 12 աղջիկ զատելով՝ տարին հետերնին: Առաւօտուն զանոնք ետ բերին մահու չափ տժգունած ու լացէն ուռած աչքերով: Չգիտեմ՝ անոնց վիճակն էր աւելի խղճալի, թէ՞ իրենց մայրերունը: Ժամէ մը հասանք Զոպանլը գիւղը, որուն կեդրոնէն գետակ մը կ՚անցնէր, ու գետակին վրայ կամուրջ մը կար: Գիշերը տարուած ու ետ բերուած աղջիկներէն մէկը ինքզինք կամուրջէն նետեց վար, բայց որովհետև ջուրը խորունկ չէր, չխեղդուեցաւ: Բայց իր գանկը ջախջախուեցաւ քարի մը վրայ, ու իր արիւնը կարմիր լայն երակի մը պէս խառնուեցաւ ջուրին: Թուրք կիները անոր մարմինը դուրս բերին ջուրէն ու մերկացնելով՝ հագուստները առին: Դիակը ձգեցին ափի մամռապատ քարերուն վրայ: Վերէն՝ կէսօրուան պայծառ արեգակին տակ, մարմարէ արձանի մը նման էր այդ մարմինը: Լաւ մը նայեցայ անոր, որովհետև 15 տարեկան էի ու մինչև այդ թուականը 15-16 տարեկան աղջկան մերկ մարմին չէի տեսած:

Կամուրջին միւս կողմը մեզի խառնեցին Կիրասոնէն բերուած գաղթականներու կարաւան մը: Անոնց մէջ ծերունիներ ու երիտասարդ այր մարդեր ալ կային: Ոստիկաններէն մէկը իր ձիուն վրայէն գնդակահարեց կիրասոնցի երիտասարդներէն մէկը, ու ան ինկաւ կոնակի վրայ՝ ցորենի արտի մը մէջ: Երբ իր քովէն կ՚անցնէի, տեսայ, որ իր վիզէն հոսող արիւնը սրտի ամէն բաբախումի հետ գնդակի ծակէն դուրս պոռթկում մը կ՚ունենար:

Արամ Հայկազ

Իրիկուան դէմ Թիմէքէր հասանք: Գիւղէն դուրս՝ խոզանի մը մէջ թոյլատրեցին, որ փոռինք հողին վրայ ու հանգչինք: Նոյնիսկ թոյլատրեցին, որ գիւղին մէջ յորդող զով ջուրի աղբիւրն երթանք ու լուացուինք, խմենք, վրանիս հոգի գայ: Տեղացի բազմաթիւ կիներ, աղբիւրին շուրջ հաւաքուած, մեզ կը դիտէին: Անոնցմէ մէկը հաւնեցաւ ինծի ու ըսաւ, որ եթէ միւսլուման ըլլամ, կ՚որդեգրէ զիս: Ուրախացայ ու մօրս մօտ վազելով՝ տուի բարի լուրը: Ան արդէն պատուիրած էր, որ աչքս լայն բանամ ու պատեհութիւն մը ներկայանալու պահուն՝ իսլամանամ, ազատիմ:

– Վարդան զօրավարն ալ ժամանակաւորապէս ուրացաւ իր կրօնքը, բայց Աստուած մեղք չհամարեց այդ ուրացումը,– ըսաւ ան ինծի օր մը առաջ:– Կը տանին մեզ ոչնչացնելու, արտասահման եղբայրներ ունիս, օր մը կը գտնես զանոնք:

Բաժանումը եղաւ սրտակեղէք ու դժուար. զիս գրկած՝ կ՚օրհնէր ու կու լար…

Երկու տարի ետք ստուգեցի, որ զայն ու մեր ընտանիքի միւս 11 անդամները թափեր էին Ակնայ առջևէն հոսող Եփրատ գետը:

Ես իսլամի անունով աւելի քան երեք տարի ապրեցայ Թուրքիոյ մէջ՝ թուրքերու և քիւրտերու մօտ ու հետ[6]:

Նպատակս այդ տարիներուն անցուցած կեանքիս ու օրերուս մասին խօսիլը չէ, կը բաւէ ըսել, թէ շատ լաւ ու վատ մարդոց հանդիպեցայ, ու երբ Առաջին



Նշան Պեշիկթաշլյան

ընդհանուր պատերազմի զինադադարը կնքուեցաւ ու շնչելու հնարաւորութիւն ստեղծուեցաւ, փախչելով հասայ Պոլիս, որ Դաշնակից բանակի գրաւման տակ կը գտնուէր այդ օրերուն: Հոն՝ Պոլսոյ մէջ էր, որ հանդիպեցայ ինծի նման հազարներու: Ամէն անգամ, որ քով-քովի կու գայինք, մեր խօսակցութիւնը անպայմանօրէն կը դառնար տարագրութեան ընթացքին մեր ապրած օրերուն և դժուարութեանց վրայ: Այս ձևով շատ բան եմ լսած, բայց կ'ուզեմ անոնցմէ միայն մէկ հատը պատմել հոս… Ու ահա՛ կը զգուշացնեմ անոնց, որ թոյլ սիրտ ունին, թող ձգեն այս սրահը ու ելլեն դուրս…

Պատմողը 65 տարու կին մըն է. «Անապատ հասանք ինը հոգիով: Երկու շաբաթը չլրացած՝ մնացինք միայն ես և ութ տարու թոռնուհիս: Բան մը չունէինք: Հրաշքով ձեռք անցուցած փսիաթի[7] կտոր մը ցերեկը շուք կ'ընէր մեր վրայ: Հալած, մաշած կմախքներու էինք վերածուած: Գիտէի, թէ մահը մօտ էր երկուքիս համար ալ, բայց չէի գիտեր, թէ ի՛մ, թէ՞ ոչ թոռնուհիիս առաջ մեռնիլը խնդրելու էի Աստուծմէ… Ան վերջին սրտահատորս էր, ու կը դողայի վրան, ու բնական էր՝ չէի ուզեր կորսնցնել, բայց առաջ ես մեռնելու պարագային ո՞վ տէր պիտի ըլլար անոր…

Այն օրերուն վրանաքաղաքին մէջ լուր էր տարածուած, թէ կարգ մը մարդեր իրենց մեռելները եփելով՝ կ'ուտեն: Կը սարսափէի՝ մտածելով, որ մենք ալ պէտք է այդպէս ընենք, եթէ կ'ուզենք դեռ ապրիլ… Բայց թոռնուհիիս բան չէի ըսած, իսկ ան, շուքին տակ պառկած, գիտէի թէ իր վերջին օրերը կ'ապրէր: Իրիկուն մը գլխով նշան ըրաւ, որ իրեն մօտենամ. ծռեցայ վրան ու գուրգուրանքով իր գանկը առի ափերուս մէջ.

- Մեծ մայրիկ,- ըսաւ մեծ ճիգով մը,- երբ ես մեռնիմ, մարմինս մէկուն մի՛ տար, դուն միանակդ կեր…»:

Պարո՛ն դատաւոր ու յարգելի՛ հանդիսականներ, ես վերջացուցի: Հիմա կը յուսամ, թէ կը հասկնաք, թէ ինչո՞ւ չենք կրնար մոռնալ 1915 թուականն ու թուրքը…»:

Արդեն 110 տարի հայությունը փորձում է արթնացնել աշխարհի քնած խիղճը… Մեր օրերում կատարվում է ամենասարսափելին՝ մեզանում կան ու մոլախոտի պես բազմանում են թուրքի բարբաջանքները կրկնողները … Պատճառը լավ թաքցրած, բայց ակնառու չիմացությունն է, եթե մի պահ մոռանանք բանական մարդու երևակայության սահմաններում չտեղավորվող շահամոլությունը:

Շապինգարահիսարցի Արամ Հայկազի «Նշանածս կ'ըսէ, որ ...» պատումի[8] հայ հերոսուհին «Ես այդ բոլորէն լուր չունէի ...» չքմեղանքով փորձում է պաշտպանվել պատմական ճշմարտությունը ոչ միայն իմանալու, այլ նաև հարկ եղած դեպքում ներկայացնելու պարտադրանքից, երբ ստիպված է լսել օտարազգի նշանածի մեղադրանք-կշտամբանքը. «Ի՞նչ տեսակ մարդիկ էք դուք՝ հայերդ, գացիք ու ոչխարի հօտերու պէս ջարդուեցաք...»:

Գրողը խրատում է երիտասարդ հայուհուն՝

ա) «Նախ՝ կ'ըսես, որ ո՛ւր որ հնարաւոր էր, կռուեցանք: Վախկոտներ չենք: Մեր ազգային պատմութիւնը ապստամբութեան մը նկարագրականով կը սկսի... »:

բ) «… Անոնք պետական մեքենայ, բանակ, կազմակերպութիւն, թնդանօթ, այլ միջոցներ ու անհատնում ռազմանիւթ ունէին... Մեր ինչո՞ւն դէմ... »:

գ) «Երկիրը պատերազմի մէջ էր, ու երիտասարդութիւնը տարուած էր, կանչուած էր բանակ՝ իր քաղաքացիական պարտականութիւնը կատարելու:

Բոլոր աչքի ինկող դէմքերը կեղծուպատիր ամբաստանութիւններով բանտ էին նետուած կամ կախաղան հանուած: Մնացած էինք անգլուխ»:

դ) «Աւելին կայ. կարաւանի ճամբաներուն, անցած ու անցնելիք ուղիներուն վրայ ամէն օր ու օրը քանի մը անգամ կը հանդիպէին բիրերով, եաթաղաններով, նոյնիսկ մանգաղներով զինուած խուժաններու, որոնք առիթի կը սպասէին, վրանին թափուելով, յօշոտելու զանոնք: Ժանտարմաներն էին, որ անոնց գլխուն վրայէն քանի մը գնդակ նետելով՝ ետ կը կեցնէին զանոնք իրենց ծրագիրը իրագործելէ: Քիչ անգամներ չէր, որ երախտագիտական զգացումով լեցուած ենք դէպի մեր ուղեկիցները: Ճշդեմ նաև, թէ յետագային պարզ եղաւ մեզ համար, թէ երևութապէս մեզ պաշտպանելու համար գործուած այդ արարքները գործուած էին պարզապէս շահախնդրութեամբ՝ աւարը իրենց վերապահելու մտահոգութիւնով»:

ե) «Յետոյ կար նաև այն պարագան, որ մենք բնաւ չկասկածեցանք, թէ մեզ սպասողը ամբողջական բնաջնջումն էր: Պատմութեան մէջ Թիմուրներ ու Ալփասլաններ գիւղեր ու քաղաքներ սրբած են երկրի երեսէն ու անոնց բնակչութիւնը սուրէ անցուցած, գերած, բայց ցեղ մը ամբողջութեամբ չէ բնաջնջուած

բնաւ: Նոյնիսկ մինչև այդ թուականը բառարաններուն մէջ «ցեղասպանութիւն» բառը գոյութիւն չունէր... Մենք՝ հայերս, հակառակ որոշ նշաններու, չկրցինք գուշակել, թէ կացինը այս անգամ մեր արմատին էր ուղղուած...[9]

Դարերով, դարերով՝ ամէն 20-25 տարին անգամ մը, թուրքերը կոտորած են մեզ ու թալանի տուած մեր գոյքը: Ենթադրեցինք, թէ այս անգամ ալ, մեր պարտէզն ու այգին մտնելով, քիչ մը պիտի ջարդեն մեր ճիւղերը, ու երբ իշխանութիւնները բաւ համարեն, պիտի տան «դադրեցուցէք»-ի հրամանը»:

զ) «Մեր առաջաւոր դէմքերէն ոմանք փոթորիկի առաջին նշաններուն հետ միջոցներ ունէին՝ արտասահման անցնելով իրենց կաշին փրկելու, բայց, ի պատիւ իրենց, չփախան: Մնացին ժողովուրդին հետ ու նահատակուեցան. խորհեցան, թէ իրենք զիրենք մատաղ տալով՝ թերևս յաջողին փրկել զանգուածները...

Ուրիշ խօսքով, ազնուական հայ ժողովուրդին համար անըմբռնելի եղաւ, թէ մարդկային միտքը կրնայ նման անմարդկային դաւ մը յղանալ ու գործադրութեան դնել, եթէ նոյնիսկ այդ միտքը թրքական միտքն է... »:

է) «Թուրքիան ընկճելու, հայոց հանդէպ իր ծրագրած ահաւոր դաւին համար զայն պատժելու շատ աւելի ազդեցիկ միջոցը կար. ազդեցիկ ու դիւրին միջոցը, բայց այդ վերջին ու յուսահատ միջոցին դիմելու համար պէտք էր, որ լիովին տեղեակ ըլլայինք հայաջինջ ծրագրին ամբողջութեան. այն ատեն թերևս չվարանէինք ու անցնէինք գործի՝ Թուրքիան մէկ ծայրէն միւսը վառելու գործին: Անիծապարտ այդ երկրին ո՛ր մէկ անկիւնին մէջ հայ չկար որ... Հայոց ընելիքը որոշ թուականի մը ամէն տեղ, ամէն քաղաքի ու գիւղի մէջ իր տունէն, պալատէն, գոմէն կամ հասուննալու վրայ եղող արտէն կրակ մը սկսիլն էր: Մոռնանք, թէ համայնատարած հրդեհ մը սահմանափակ միջոցներով զսպել անկարելի է, այլև թուրքեր կրակ մարել չեն կրնար, չեն գիտեր:

Այդպէս չեղաւ: Սխալած էինք: Ահաւո՛ր կերպով սխալած»:

Սա Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակից Արամ Չեքեմյանի ցավոտ անդրադարձն է 1915-ի ողբերգությանը[10]:

Արամ Հայկազի այս պատումի արձագանքն է Վահե Գյուլեսերյանի (1894-1970) «Թէ ինչպէս ջարդուեցանք «ոչխարներու պէս» (Արամ Հայկազի «Նշանածս կ՚ըսէ…» յօդուածի մասին)» խոհագրությունը[11]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հզոր բանակ ունեցող քանի՞ երկիր ու ժողովուրդ հաշված օրերում կամ շաբաթներում հայտնվեցին ֆաշիստների լծի տակ, համակենտրոնացման ճամբարներում քանի՞ միլիոն մարդ նահատակվեց: Ընդամենը 20-25 տարի առաջ Թուրքիայում կատարվածը մնաց մարդկության խղճի վրա, ավելին՝ անգամ մեր օրերում հաճախ են հիշատակում 1939-1945-ի նախճիրը՝ հպանցիկ հիշատակելով կամ բոլորովին անտեսելով հայության ցեղասպանությունը: Ավելին, 2023-ին Արցախում կատարվածը հաստատեց՝ մարդկությունը, հիշողությունից բացի, կորցրել է նաև տեսնելու և կատարված ողբերգությունից դաս քաղելու ունակությունը: Ամենասարսափելին անզիջող համառությամբ իրականությունը ժխտելն է, զոհին և ոճրագործին փոխատեղելը, համառ տգիտությամբ զոհերին մեղադրելը:

Հայի՝ բնօրրանում ապրելու բնածին իրավունքը պաշտպանելու համար Շապին Գարահիսարի բերդը բարձրացած, շաբաթներ շարունակ թուրքական կանոնավոր զորքին ու խուժանին դիմադրելուց հետո անձնատուր եղած մարդկանց մեղադրելը:

Գիտեմ՝ մեր օրերում ցեղասպանությունն ուրացողներին այս ամենը ոչինչ չի սովորեցնելու. ստում են և շարունակելու են ստել, աղավաղել ու խաղաթյուրել ամեն ինչ՝ հիշողություն, պատմություն, ներկա ու անցյալ…

Գուցե Շապին Գարահիսարի հերոսական դիմադրության մասնակից, Եղեռնի՝ դեպի անհայտություն տանող ճամփաներով անցած Արամ Հայկազի գրավոր վկայությունը ինչ-որ բան կարող է փոխել …

Հուսամ…

Յղումներ

1 Լիբանանի ՀՅԴ պաշտոնաթերթ (1965 թ.) «Ազդակ» օրաթերթը Բեյրութում լույս է տեսնում 1927 թ.:

2 ՌԱԿ պաշտոնաթերթ «Զարթօնք» օրաթերթը Բեյրութում լույս է տեսնում 1937 թ.:

3 Արամ Հայկազը նույն վերնագրով մեկ ուրիշ հոդված հրատարակել է «Հայրենիք» օրաթերթի 1969 թ. ապրիլի 17-ի համարում (տես «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» յոթհատորանոց գրքի Դ հատորում՝ էջ 94-96 (Երևան, 2013):

4 Արամ Հայկազը բառն այսպես է գրում:

5 Նահատակված եղբոր՝ Հայկազի անունն Արամ Չեքեմյանը դարձրեց գրչանուն, տարիներ անց այդ անունով անվանակոչեց որդուն:

6 1960-ի գարնանն ԱՄՆ-ում և 1969-ի սեպտեմբերին Խորհրդային Հայաստանում Արամ Հայկազը մի քանի անգամ հանդիպել է Ամենայն Հայոց Կաթողիկոս (1955-1994) Վազգեն Առաջինին (Պալճյան, 1908-1994) և հնարավորություն ուներ նրանից թողություն խնդրելու:

7 Խսիր:

8 Լույս է տեսել «Հայրենիք» օրաթերթի 1972 թ. հունիսի 9-ի համարում (տես «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» յոթհատորանոց գրքի Ե հատորում՝ էջ 112-116 (Երևան, 2014):

9 «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» ինքնակենսագրական վեպում (Երևան, 2022) գրողը հիշում է, որ 1895-96-ի կոտորածների բովով անցած ու հրաշքով փրկված հայրը՝ Արսեն Չեքեմյանը, նախազգում և նախազգուշացնում էր, որ 1915-ի գարնանը կատարվողը այլ նպատակ ունի՝ իր Բնօրրանում ոչնչացնել հայությանը: Դժբախտաբար, նա չէր սխալվում:

10 Արամ Հայկազի «Երջանկութիւն» (1973) և «Ապրող ծառ մը» գրքերում տես «Հաշտուիմ Աստուծոյ հետ» ողբերգական պատումը:

11 Լույս է տեսել «Ալիք» օրաթերթի (Թեհրան) 1972 թ. հուլիսի 4-5-ի համարներում (տես «Արամ Հայկազ. Մոռացված էջեր» յոթհատորանոց գրքի Ե հատորում՝ էջ 189-194:

«Արտոյի երկիրը» ֆիլմը. գեղարվեստական ազատության ու ազգային պատասխանատվության սահմանները

Անժելա Հարությունյան
Բանասեր, մանկավարժ

2026 թվականի հունվարի 7-ից Ֆրանսիայի կինոթատրոններում ցուցադրվում է ռեժիսոր Թամարա Ստեփանյանի՝ 2025 թվականին նկարահանած «Արտոյի երկիրը» (ֆրանսերեն՝ *Le Pays D'arto*) հայ-ֆրանսիական լիամետրաժ գեղարվեստական ֆիլմը, որի պրեմիերան տեղի է ունեցել 2025 թվականի օգոստոսի 6-ին՝ Լոկառնոյի 78-րդ կինոփառատոնի բացման ժամանակ՝ «Գրանդե» հրապարակում:

Ֆիլմի սյուժեն այն մասին է, թե ինչպես հայ ամուսնու՝ Արտոյի մահը գրանցելու և իրենց երեխաներին Հայաստանի քաղաքացիություն տալու նպատակով Ֆրանսիայից Հայաստան ժամանած ազգությամբ ֆրանսիացի Սելինը բացահայտում է, որ ամուսինը տարիներ շարունակ ստել է իրեն: Արտոն ժամանակին մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին: Չենթարկվելով վերադասի հրամանին՝ նա պատճառ է դարձել զինակից ընկերների զոհվելուն, փախել պատերազմի դաշտից, լքել նշանած աղջկան, հեռացել Հայաստանից Ֆրանսիա, յուրացրել այլ ինքնություն, ամուսնացել ֆրանսուհի Սելինի հետ, ունեցել 2 զավակ: Անձնական ցավը, որից Արտոն փորձում էր փախչել ու թաղել, կրկին արթնանում է 2020 թվականի 2-րդ Արցախյան պատերազմի ժամանակ: Չկարողանալով տանել կորստի, հիշողությունների և մեղքի ցավը՝ Արտոն ինքնասպան է լինում: Կնոջ՝ Սելինի համար սկսվում է անսպասելի ճամփորդություն դեպի Հայաստան՝ դեպի ամուսնու անցյալը՝ սկսած 2020 թվականի պատերազմի վիրավորներից մինչև 90-ականների հաղթական պատերազմի վետերաններ ու շարունակվող պատերազմի ուրվականներ: Սելինը պարզում է, որ ամուսնու նախկին զինակից ընկերները նրան դավաճան են համարում:

Թեև կարծիքները հիացական են ֆիլմի մասին, բայց հարցեր, որոնք առաջացան ինձ մոտ ֆիլմը դիտելուց հետո, բազմաթիվ են, իսկ տպավորությունները ոչ միայն ոչ հիացական, այլև նսեմացնող:

Ֆիլմը, որի սցենարը գրվել է տարիներ առաջ, ինչպես հեղինակն է նշում, տևական ժամանակ չի նկարահանվել ֆինանսավորում չունենալու պատճառով: Այս ֆիլմը նկարահանելուց առաջ Թամարա Ստեփանյանը տևական ժամանակ աշխատել է Հայաստանի մասին վավերագրական այլ ֆիլմի վրա, որը դադարեցրել է, երբ ստացել է «*Արտոյի երկիրը*» ֆիլմը նկարելու ֆինանսավորումը:

Ֆիլմը նախապես ունեցել է այլ վերնագիր՝ *Tant que le ciel le permet* («Քանի դեռ երկինքը թույլ է տալիս»): Ֆինանսավորում ստանալուց հետո ֆիլմում ավելացվել են, զարգացվել և փոփոխվել հատվածներ, որոնք չեն եղել նախնական տարբերակում, և անդրադարձ է կատարվել 2020 թ. պատերազմին և, որ ամենակարևորն է, ֆիլմը վերանվանվել է՝ «Արտոյի երկիրը»:



Այստեղ է, որ հարցը դադարում է լինել զուտ գեղարվեստական:

Այսպիսով՝ կարևոր հարցեր, որոնք ուզում եմ ուղղել անմիջապես հեղինակին:

Հարց 1: Վերնագրի ընտրության և գեղարվեստական մոտեցման մասին

Արդյո՞ք որպես ֆիլմի հեղինակ՝ գիտակցել եք, որ գլխավոր հերոսի կերպարը՝ որպես խտացում, անխուսափելիորեն ընկալվելու է որպես երկրի ու հասարակության խորհրդանիշ: Եթե ֆիլմը պահպաներ իր նախնական վերնագիրը կամ կոչվեր, օրինակ, «Արտոյի ողբերգությունը», «Արտոյի օրագիրը», «Թաղված մեղքի ուրվականը» կամ որևէ այլ անուն, որը կկենտրոնանար բացառապես անհատի ներքին դրամայի, ողբերգության վրա, քննարկման դաշտը բոլորովին այլ կլիներ: Այդ դեպքում հնարավոր կլիներ խոսել միայն անձնական ողբերգության, հակահերոսի, հոգեբանական փլուզման մասին: Բայց ֆիլմը կոչվում է **«Արտոյի երկիրը»**, և հենց այստեղ է խնդրի էությունը: Այստեղ այլևս հնարավոր չէ պնդել, որ խոսքը միայն անհատի մասին է: Չէ՞ որ այս ֆիլմը

ճանապարհորդության ընթացքում բացահայտում կատարող, ճանապարհի միջոցով երկրի մասին ճանաչողություն տվող ֆիլմ է, ինչպես ինքներդ եք նշում: Ամենուր կան հանցագործներ, գողեր, թմրամոլներ, դասալիքներ, մանկապիղծներ, բայց մենք իրավունք չունենք վերցնելու մեկ հանցագործի, օրինակ՝ Ջոնի պատմությունը, ով մանկապիղծ է, և ֆիլմը կոչել «Ջոնի երկիրը»՝ այդպիսով ստեղծելով տպավորություն, թե տվյալ երկիրը մանկապիղծների երկիր է: Դա կլիներ անարդար, վտանգավոր և բարոյապես անընդունելի ընդհանրացում: Հեղինակի տեսանկյունից այն կարող է լինել սիրո, ցավի ու կարոտի ֆիլմ: Եվ ինչպես *WOS 2025 - Rencontre avec Tamara Stepanyan* հաղորդման ժամանակ է Թամարան ասում, ինքը 1994 թվականից այլևս չի բնակվում Հայաստանում և այլևս չի կարող ապրել Հայաստանում, որ այնտեղ ապրելու մի ձևն էլ իր ստեղծած ֆիլմերն են և ավելացնում է, որ «Արտոյի երկիրը» իր համար ֆիլմ է, որի միջոցով արտահայտել է իր սերը դեպի անձը, դեպի հայրենիքը, դեպի Արցախը: Բայց, հարգելի՛ Թամարա, գեղարվեստական մտադրությունը բավարար չէ չեզոքացնելու ստեղծագործության իրական սոցիալական ազդեցությունը, երբ այն բացահայտորեն մի ամբողջ երկիր կապում է շեղված վարքագծերի, դասալքության և բարոյական փլուզման հետ: Կենտրոնական հերոսի՝ անհատի անձնական դրաման ու ողբերգությունը չի կարող և չպետք է վերածվի ամբողջ ժողովրդի կամ պետության խարանման: **Ազատ արվեստի և հավաքական արժանապատվության միջև սահման գոյություն ունի, և այդ սահմանը այստեղ, ցավոք, հատվել է:**

Ուստի ֆիլմի իրական ազդեցությունը բոլորովին այլ է՝ պայմանավորված ոչ միայն վերնագրով, այլև միջավայրի ներկայացմամբ, կերպարների ընտրությամբ:

Հարց 2: Ներկայացված միջավայրի մասին

2021 թվականի Հայաստանը ֆիլմում Թամարա Ստեփանյանը ներկայացրել է որպես համատարած աղքատ, կեղտոտ և ավերակ, երբ դա չի համապատասխանում իրականությանը: Թեև ֆիլմի հեղինակը որպես հիմնավորում ասում է, որ ինքը չէր ուզում տուրիստական ու գեղեցիկ վայրերով Հայաստանը ցույց տալ, որ Հայաստանի բնությունը և ավերակները դիտողին տակնուվրա են անում, արտաքին ավերակները հայի ներսի ավերակների խորհրդանիշն են՝ երկրաշարժ, պատերազմ, ավելացնում, որ կինոն իրեն թույլ է տալիս «փոխել իրականությունը» (*transformer la réalité*), սակայն այստեղ պետք է հստակ սահման դնել. կինոն կարող է վերաիմաստավորել իրականությունը, բայց չի կարող այն խեղաթյուրել այն աստիճան, որ ստեղծի ազգային ինքնության նսեմացնող պատկեր: Սա արդեն ոչ թե խորհրդանշական խորացում է, այլ միակողմանի և վտանգավոր ընդհանրացում: Ֆիլմը համարվում է գեղարվեստական, բայց այնտեղ շատ են վավերագրական տեսարանները, որոնք արդեն նկարահանվել էին փաստագրական այն ֆիլմի համար, որը ժամանակավորապես դադարեցվել է: Թեպետ գեղարվեստական կինոյում վավերագրա-

կան նյութի կիրառումն ընդունված և արդյունավետ հնարք է, այնուամենայնիվ այն պարտադրում է գեղարվեստական հատվածում զգոն վերաբերմունք փաստերի նկատմամբ՝ խուսափելով այնպիսի գեղարվեստական երևակայությունից, որը կարող է խեղաթյուրել իրականությունը:

Հարց 3: Ընտրված կերպարների մասին

✓ Ինքներդ եք հաղորդման ժամանակ ասում, որ ֆիլմը ներկայացնում է Հայաստանը, հայ կինոն, մեր պատմությունը, մեր արցախյան տրավման այդքան մարդկանց առջև, որ սա Ձեզ համար ֆիլմ է՝ սեր դեպի անձը, դեպի հայրենիքը, դեպի Արցախը, մեր կորցրած Արցախը: Ֆիլմի թեման կպչում է ձեզ, քանի որ խոսում եք պատերազմից, և բոլորը տեսնում են՝ **ինչ նուրբ ձևով եք խոսում պատերազմի մասին**. շատ խոսքեր չկան, լսելի է աղմուկ, որը ավելի շատ պատերազմի տրավման է: **Ինչո՞ւ եք պատերազմի նուրբ թեման ներկայացնում դեզերտիրի, փախչողի ու վախկոտի հայացքով՝ առանց բարոյական հակակշռի:** Արտոն դասալիք է, փախուստի մեջ ապրող, վախկոտ ու ստախոս մարդ՝ հակահերոս: Ինչ իմաստ ունի հակահերոսի մասին ֆիլմ նկարել և այն էլ վերնագրել այնպես, որ Հայաստանը ներկայացվի որպես հակահերոսների երկիր, հայի հակառակ կողմի պատկերը: Ու ակամայից հիշում ես համանուն մի գիրք՝ «Երկրի հակառակ կողմը», որի հեղինակը ոչ ավել, ոչ պակաս Հայաստանի ներկայիս վարչապետն է, ով օրինիբուն պայքար է մղում՝ պղծելու և ոչնչացնելու հայ ազգի ինքնությունն ու հեղինակությունը՝ մեկ ամոթալի պարտությամբ, մեկ ժողովրդին պառակտելով, մեկ հազարամյա Հայ Առաքելական եկեղեցին պիղծ ու անբարո հոգևորականներով «բարենորոգելով»:

✓ Ինչո՞ւ 2020 թվականի պատերազմի զոհվածների և պայքարողների կերպարները մղված են երկրորդ պլան կամ անտեսված, իսկ կենտրոնում դրել եք դեզերտիրի փախուստը: Ինչո՞ւ ֆիլմում չկա արժեքային հակադրությունը՝ դեզերտիր, ստախոս ու վախկոտ և դիմադրող, համարձակ, ճշմարտախոս ու պայքարող հայ զինվորի:

✓ Արդյո՞ք գիտակցել եք, թե բարոյական ի՞նչ տպավորություն է ֆիլմը թողնում օտար հանդիսատեսի վրա Հայաստանի և հայ ժողովրդի մա-

սին: Չէ՞ որ հաղորդման ժամանակ Ձեզ ուղղված հարցին ինքներդ եք պատասխանում, որ ֆիլմը ներկայացնում է Հայաստանը, հայ կինոն, մեր պատմությունը, մեր արցախյան տրավման այդքան հանդիսատեսի առջև, և հենց սկզբից Ձեր նպատակն էր Ֆրանսիայից ժամանած կնոջ միջոցով բացահայտել Արտոյի երկիրը՝ **Հայաստանը**: Ինչու եք նման լույսի տակ բացահայտում Հայաստանը:

✓ Ինչո՞ւ եք ընտրել հատկապես ամենաբացասական սոցիալական ու վարքագծային, կամ խեղճ ու թշվառ տիպաժները՝ որպես Հայաստանը և հային ներկայացնող, օրինակ՝ ինչո՞ւ հայ տղամարդը ներկայացվում է որպես հնարավոր շահագործող՝ օտար կնոջ հանդեպ, երբ նկատում է Սելինին ճանապարհին միայնակ կանգնած: Հայ տղամարդը ճանապարհին միայնակ կնոջ տեսնելիս բնազդաբար վնասելու ցանկություն չի ունենում: Կամ ինչո՞ւ եք այդքան կարևորել նարդի խաղալը հենց թուրքական բառոգտագործումով ներկայացնելը, չլինի՞ դա էլ այսօր քարոզվող իշխանական կեղծ խաղաղության օրակարգի մի մասն է:

✓ Ինչո՞ւ է հայ կինը ներկայացվում բարոյապես այլ լույսի ներքո՝ հարբեցող, ինքն էլ՝ օղի օգտագործող, **հյուրանոցում անկաշկանդ սիրային կապ ունեցող**, «մարտական էկզոտիկ» կերպար: Սա կնոջ ազատության պատկերո՞ւմ է, թե՞ արտաքին հայացքի կողմից ստեղծված կլիշե, **խիզախություն-ազատականություն, թե՞ ավանդական հայ կնոջ ազդեցիկ կերպարի աղավաղում:**

Հայ երիտասարդ կինը հոր ներկայությամբ որպես կանոն չի ծխում: Բացի այդ, ինչո՞ւ եք այդքան կարևորել այն փաստը, որ ֆրանսուհուն հայ կինը հուշում է, որ Հայաստանի քաղաքացիություն ստանալը Սելինի որդուն կկանգնեցնի պարտադիր զինվորական ծառայության փաստի առջև: Ինչպես կարող էր Արցախի համար կռված ու դեռ կռվող հայի աղջիկը, ով գաղտնի դրոններ է տեղափոխում Արցախ, այդքան կարևորել այդ փաստը: Բացի այդ՝ նշում եք, որ ֆիլմում չեն հնչում ո՛չ Արցախ, ո՛չ Ղարաբաղ անվանումները, ավելի շուտ, Արցախի խորհրդանշական ներկայությունն է՝ անորոշ, անգտնելի տարածք, բայց հենց Ձեր ստեղծած հայ կերպարը Սելինին Արցախի տեղանքը բացատրելիս իր նկարածի մեջ **գրում է** Ղարաբաղ՝ Karabakh, Արցախի համար պայքարողի դուստրը և ինքը՝ պայքարողը, **ինչու չի գործածում Արցախ բառը**:

✓ Արդյո՞ք գիտակցել եք, թե ազգային ինչ ստերիոտիպեր եք ներկայացնում օտար հանրությանը: Չէ՞ որ կինոն արվեստի առանձնահատուկ այն ճյուղն է, որն օժտված է հզոր խորհրդանշական, սոցիալական և հոգեբանական ազդեցությամբ:

✓ Ինչո՞ւ են ֆիլմում բացակայում ժամանակակից, արժանապատիվ, մտածող հայ կերպարները:

Այսպիսով, որպես ամփոփում, նշեմ, որ անընդունելի է Հայաստանը, այն էլ պատերազմի նուրբ թեման շոշափելով, ներկայացնել որպես դավաճանների, դասալիքների և ինքնասպանների երկիր: Անարդար ընդհանրացումները հարվածում են ժողովրդի, ազգի ինքնությանը և պատվին: Եվ այսօր, երբ հայն ու Հայաստանը կանգնած են ինքնության պահպանման խնդրի առջև, սա ևս մեկ հարված էր մեր ինքնությանը:

Առավել մտահոգիչ է այն փաստը, որ ֆիլմը հովանավորվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Դա ստիպում է մտածել, թե ինչու պետական աջակցությամբ ստեղծված ֆիլմում կենտրոնական հերոսը դավաճան է, դասալիք, ընտանիքը լքած, մարտական ընկերների մահվան պատճառ դարձած մարդ: Չէ՞ որ հայրենասիրությունը ԿԳՄՍ նախարարի համար հուռա երևույթ է, իսկ իրական հերոսները՝ ֆաշիստներ: Ուստի պատահական չէ, որ ֆիլմի վերնագիրը փոխվել է, իսկ թե որոնք են նախնական սցենարի փոփոխված ու ավելացված հատվածները՝ մնում է յուրաքանչյուրի երևակայությանը:

Ամենացավալին այն է, որ կինոդահլիճում ֆիլմը դիտելիս ներկա էին գրեթե միայն ֆրանսիացիներ, ովքեր իրենց հետ տարան մի պատկեր՝ Հայաստանը որպես աղքատ, կեղտոտ, բարոյապես փլուզված երկիր, որտեղ մարդիկ դավաճանում են, փախչում պատերազմից և վերջում ինքնասպան լինում:

Հարկ եմ համարում նշել, թե հարցին՝ ինչու Շվեյցարիան հետաքրքրվեց այս ֆիլմով, հեղինակը պատասխանում է, որ կարծում է՝ վերջիններս գիտեին, որ եղել են կոնֆլիկտներ՝ կապված Ադրբեջանի, Թուրքիայի հետ: Ցեղասպանության մասին, սակայն, բայց շատ բան չգիտեին: Ընտրել են այս ֆիլմը՝ որպես մեծ լուսարձակ, լուսավորելու համար մեր իրականությունը: **Ուստի այս փաստը ավելի պատասխանատու է դարձնում Հայաստանին, հային ու պատերազմի թեմային ցանկացած անդրադարձ: Բացի այդ, հարգելի՛ Թամարա Ստեփանյան, Ցեղասպանությունը չի կարելի որակել զուտ կոնֆլիկտ, ու Ձեր պատասխանն էլ իր հերթին ջնջում է գեղարվեստականի եզրերը, և ֆիլմը տանում է վավերագրության կողմը, որտեղ խեղաթյուրումը անթույլատրելի է ու իր հերթին բերում է պատմական-քաղաքական-ազգային կոնտեքստ:**

Վերջում նշեմ, որ գեղարվեստական ազատությունը չի ազատում մարդկային և, առավել ևս, ազգային որևէ պատասխանատվությունից: ■

Դաշնակցութիւն
Ինչպէ՞ս բնութագրել քեզ մէկ բառով

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Լրատուութեան մը ընթացքին անցորդներուն ուղղուած հարցումը յամեցաւ մտքիս մէջ: Մէ՛կ բառով: Եւ բառերը սկսան կուտակուիլ, հրմշտկել զիրար: Զգացի, թէ որքա՛ն դժուար հարցում էր, որ կը տրուէր:

Եւ ահա առաջին բառը, որ կը ծեծէ ուղեղիս բջիջները, **կի՛րք**ն է: Մանկութենէս ապրած ըլլալով Դաշնակցութեան շունչին տակ, վկան ըլլալով ամենէն առաջ ծնողքիս ապրումներուն ու գործունէութեան, ապա արդէն աւելի քան 62 տարի ինքս գտնուելով անոր շարքերուն մէջ, կ՚անդրադառնամ, որ, այո՛, ան կիրք մըն է, չմարող կիրք մը, որ իմաստ կու տայ կեանքիս, նպատա՛կ, առանց որուն չեմ գիտեր ինչպէ՛ս պիտի ապրած ըլլայի: Ձիս զգաստ կը պահէ միշտ, թոյլ չի տար որ ծուլանամ, յոգնիմ...

Եւ անմիջապէս ուրիշ բառ մը կը ցցուի առջեւս՝ **ապրելակե՛րպ**: Արդարեւ մենք մեր կեանքը տարբեր ձեւով ապրեր ենք ու կը շարունակենք ապրիլ: Երբ կը բաղդատեմ մեր կեանքը ոչ միայն անկուսակցականներու այլեւ մանաւանդ մեզ շրջապատող ոչ հայ մեր գործակիցներուն կամ դրացիներուն կեցութեան, հետապնդած վայելքներուն եւ անոնց մտմտուքներուն հետ, չեմ կրնար չտեսնել տարբերութիւնը: Մարդկօրէն մտածելով, գուցէ անոնցն է ճիշտը, սակայն մերը նոյնը չի՛ կրնար ըլլալ երբ Դաշնակցութեան կը պատկանինք:

Եւ բնականաբար երրորդ բառը **ըմբոնո՛ւմ**ն է: Եւ ի հարկէ Դաշնակցութիւնը ըմբոնում մըն է, **հաւատամք** մը, **միտք** մը, ոչ միայն սեփական կեանքի, այլեւ յատկապէս հաւաքական կեանքի: Այդ կեանքի պատկերացում մը՝ հիմնուած համամարդկային, մարդկայի՛ն սկզբունքներու վրայ, որոնք պատմութեան սկիզբէն ի վեր կ՚երեւի այս մոլորակի բնակչութիւնը բաժնած են տէրերու եւ ստրուկներու, շահագործողներու

եւ շահագործուողներու, ենթարկուողներու եւ չենթարկուողներու: Ուրկէ եւ **յեղափոխականութիւն**ը, որ կրնանք համարել բնութագրման ուրիշ բառ մը, որ կուսակցութեան եռամաս անուան երկրորդ մասին հիմքն է: Առանց յեղափոխականութեան չկայ Դաշնակցութիւն:

Քանի որ անուան մասին է խօսքը, նշեմ նաեւ **հայկականութիւն**ը կամ **հայութիւն**ը, որ այս կուսակցութեան էութիւնն իսկ է, ծնունդին պատճառը, գործունէութեան առանցքը: Հայութեան իրավիճակի բարեփոխութեան համար գոյութիւն առաւ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, եւ կապրի ահա 135 տարիէ ի վեր ու աւելի՝ միշտ նոյն նպատակով, ինչքան ալ փոխուեցաւ մեր ազգի կեանքը Աղէտին, հայրենակերտման, խորհրդայնացման ու վերանկախացման ի հետեւանք, եւ ինչքան ալ իր զինանշանի երեք խորհրդանիշերը՝ թուրը, բահն ու փետուրը, տարբեր կարեւորութիւն ստացան տարբեր ժամանակներու:

Վերեւի նշուած բառերը զիս կ՚առաջնորդեն մէկ այլ բառի՝ **ժառանգորդութեան**, որ Դաշնակցութիւնը կը դարձնէ շարունակողը մեր պատմութեան սխրանքները իրագործած Մաշտոցներուն, Մամիկոնեաններուն, Դաւիթ Բեկերուն եւ միւս յանդուգններուն, որոնք նուիրուեցան ազգի ինքնութեան պաշտպանութեան ու պահպանման: Անոնց **ոգի**ն էր, **նուիրում**ն ու **անձնուիրում**ը, – ահա ուրիշ բառեր, – որոնք վերապրեցան Դաշնակցութեան ընդմէջէն՝ փոխանցուելու համար իրերայաջորդ սերունդներու:

Այդ փոխանցումը, սակայն. կարելի եղաւ շնորհիւ **երկարակեցութեան**, – 135 տարին կարճ ժամանակ չէ կուսակցութեան մը կեանքին համար, – որ հիմնուած էր, է՛, մէկ կողմէ **կազմակերպուածութեան**, միւս կողմէ **անվհատութեան** վրայ: Այս երկու բառերն ալ կրնան լիուլի բնութագրել Դաշնակցութիւնը: Կազմակերպուածութեան բացակայութիւնն էր, որ օրին մղեց մեր հիմադիրները ստանձնելու յեղափոխականները ի մի բերելու ծանր ու դժուարին առաքելութիւնը: Իսկ անվհատութիւնը ապահովեց շարունակականութիւնը, հակառակ մեզ ջլատելու, պառակտելու, յուսահատեցնելու բոլոր փորձերուն, որոնք պարբերաբար սպառնացին ոչ միայն մեր, այլեւ մեր ժողովուրդի ալ գոյատեւման: Բայց **յոյս**ը ապրեցաւ, ապրեցուց մեզ:

Չեմ ուզեր երբեք ձգել այն տպաւորութիւնը որ սխալներ չգործուեցան, շեղումներ չեղան, վրիպումներ չպատահեցան, սակայն **վերապրումը** գերակշռեց ու Դաշնակցութիւնը գործեց ու մեզ ալ գործի լծեց տեւաբար:

Չեմ ալ ուզեր ուրիշ թիւր տպաւորութիւն մը ստացուի, թէ այն բոլոր բառերը որոնցմով կրնայ բնութագրուիլ մեր կուսակցութիւնը, միայն ի՛ր մենաշնորհն են, ու հայ կեանքը զուրկ եղաւ այլ կուսակցութիւններէ, – ինչ աղէտ պիտի ըլլար եթէ չըլլային ուրիշներ ալ, – սակայն կ՚ուզեմ վստահեցնել, որ բոլոր այդ բառերը, որոնք այստեղ յիշուեցան, որոնցմով յատկանշուեցաւ կուսակցութիւնը, կը տանին այն միակ բառին, որ ամբողջովին կը բնութագրէ զինք. այդ բառն է՝

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ:

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
Ինչ պէտք՝ է ըլլայ մեր ուղին
(հատուածաբար)

Իբրեւ ազգային միութիւն, իբրեւ պատմա-կուլտուրական ուրոյն դաս, հայութիւնը վտանգուած է մեծապէս: Կեանքի ու մահուան հարց է դրուած նրա առջեւ: Միայն անկախ պետութեան անյապաղ հաստատումն է, որ դեռ կարող է ի մի հաւաքել հայ ժողովուրդի մնացորդները հայրենի հողի վրայ ու փրկել նրա ապագան, փրկել մարդկութեան համար նրա բազմադարեան կուլտուրան: Այսօր դեռ կարելի է անել այդ, վաղը արդէն ուշ կլինի: Ընդհանուր կազմալուծման ու վերաշինման այս օրերին, երբ հին աշխարհի քաղաքական քարտէզը քննութեան է առնուած ու արմատական փոփոխությունների է ենթարկւում, երբ քանդւում են հին պետութիւնները ու նորերը հաստատւում նրանց փլատակների վրա, երբ զրկւած ու ճնշւած ազգերը ներկայացնում են մարդկութեան իրանց պահանջները ու ցուցադրում իրանց կենսունակութիւնը,– պատմական այս մեծ օրերին է, որ հայ ժողովուրդը պէտք է գրաւի իրան պատկանող անկիւնը արեգակի տակ:

Պատմութիւնը իր ընթացքն ունի, որ մենք չենք կարող փոխել, կանգնեցնել կամ դանդաղեցնել ըստ մեր ցանկութեան: Պետք է քալենք հետը, ապա թէ ոչ նա մեր դիակների վրայով կ՚անցնի առաջ:

Փորձ արինք մեր անկախ պետութիւնն հաստատելու: Անյաղթելի դժուարութիւնների հանդիպեցինք, բախուեցինք հակառակ ուժերի հետ, պարտուեցինք... Պարտուեցինք և այսօր մեր կարճատեւ անկախութիւնը վտանգւած է մեծապէս: Անունը մնում է դեռ, բայց հիմքերը քանդւում են, կառուցւածքը տատանւում, սպառնական ճեղքեր տալիս վերից վար:

Վերջացաւ սրանով մեր դատն ու պայքարը: Սպառե՞լ ենք արդեօք բոլոր հնարաւորութիւնները, գործածե՞լ ենք բոլոր ուժերը ու – սնա՞նկ հանդիսացել... Կարո՞ղ ենք ասել թէ այլ եւս բան չունինք անելու, թէ մեր ինքնահաստատուելու տենչը ու կատարած փորձը մի գեղեցիկ ցնորք էր միայն, որ խորտակուեց անողոք իրականութեան բախելով, թէ քաղաքական անկախութիւնը մեր ուժերից վեր է և թէ մեզ մնում է միայն խոնարհուել ճակատագրի առաջ ու լռելեայն մեռնել...

Ո՛չ պետութիւնները չեն կազմում մեկ օրուայ մէջ ու մանաւանդ չեն կազմւում հեշտօրէն:

Հայաստանի այսօրուայ կացութիւնը կարող է հասցնել քաղաքական մահի: Այդ սպառնալիքը կայ և շատ լուրջ է, բայց ոչ անխուսափելի: Այսօրուայ կացութիւնը ի՛նքը կարող է դառնալ (գուցէ և է՛ արդէն) մի շատ կարեւոր աստիճան՝ հետեւեալ քայլը անելու համար...

Պայքարը շարունակւում է, շարունակւում է կազմակերպման պրոցէսը: Դատը դեռ չի կորցուած եւ աւելի քան երբեք պահանջում է ուժերի լարում: Փրկել պետութիւնը, ամուր հիմքերի վրայ դնել ու կենսունակ դարձնել այն,– ահա մեր անելիքը: Սա պիտի լինի մեր այսօրուայ ամենամեծ հուգը – միակ մեծ հոգը: Յաջողելու համար պետք է միացնենք մեր ոյժերը այն բոլոր կենդանի ոյժերին, որոնք պայքարում են – ինչ գոյնի եւ դրօշի տակ էլ լինի – նոյն նպատակի համար:

Ո՛վ մեզ հետ միասին կանգնած է այս ճամբու վրայ ու վճռականութիւն ունի մինչեւ վերջը գնալու, նա իսկական դաշնակցական է, ինչ անուն էլ կրելու լինի (բուրժուա թէ պրոլէտար, ընկերվարական թէ կղերական, ռամկավար թէ բոլշեւիկ), նա մեր բնական ու անբաժանելի դաշնակիցն է: Եւ թշնամի է նա, ով – գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, կամայ թէ ակամայ, յանուն բուրժուայի թէ յանուն պրոլետարի,- կտրում է մեր ճամբան, պատնէշներ կառուցանում ու խրամատներ փորում մեր գրոհի առջեւ:

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ,

ԵՐԿԵՐ էջ 221-223 ԵՐԵՎԱՆ 2025 թ.

Հունվարի 27-ը Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օրն է

ԴՐՕՇԱԿ